Ա. ՍՏԵՓԱՆՅԱՆ, Ա. ՆԱՁԱՐՅԱՆ, Ռ. ՍԱՖՐԱՍՏՅԱՆ

# ՀԱՄԱՀԱՅԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

# ՆՈՐԱԳՈՒՅՆ ՀՐԶԱՆ

# 9

ՄԱՍ 1

Ա. ՍՏԵՓԱՆՅԱՆ, Ա. ՆԱՋԱՐՅԱՆ, Ռ. ՍԱՖՐԱՍՏՅԱՆ

# ՀԱՄԱՀԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
•
# ՆՈՐԱԳՈՒՅՆ ՀՐՁԱՆ

ԴԱՍԱԳԻՐՔ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ
ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՀԱՄԱՐ

## 9-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

Մաս 1

Վերահրատարակություն

ԶԱՆԳԱԿ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ • 2019

Երաշխավորված է ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից

ՀՏԴ 373.5:93/94(075.3)
ԳՄԴ 63.3 g72
Ս 887

ՀԵՂԻՆԱԿՆԵՐ՝
**Ալբերտ Ստեփանյան**. պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր
(ներածություն, §§ 1–14, 26, 27)
**Արամ Նազարյան**. պատմագիտության թեկնածու
(§§ 15–20, 22, 23, I–III բաժինների ամփոփումներ)
**Ռուբեն Սաֆրաստյան**. ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս
(§§ 21, 24, 25)

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԵՂԻՆԱԿ՝
**Արմինե Սարգսյան**. պատմաբան, մանկավարժ
(մեթոդական ապարատ,
ամփոփիչ ժամանակագրություն, բառարան)

Ստեփանյան Ա.
Ս 887 **ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ: ՆՈՐԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆ**: Դասագիրք հանրակրթական հիմնական դպրոցի 9-րդ դասարանի համար / Ա. Ստեփանյան, Ա. Նազարյան, Ռ. Սաֆրաստյան.— Եր.: «Զանգակ» հրատ., 2019.
Մաս 1.— 88 էջ:

ՀՏԴ 373.5:93/94(075.3)
ԳՄԴ 63.3 g72

ISBN 978-9939-68-713-1

© «Զանգակ-97» ՍՊԸ, 2019
© Հեղինակներ, 2019
© ԴՏՀՏՇՀ, 2019

Հեղինակային բոլոր իրավունքները պաշտպանված են:

Firefox https://ebooks.bonee.net/fumf/netl/



# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

## «Նորագույն շրջան» հասկացությունը

Համաշխարհային պատմության Նորագույն շրջանը սկսվում է Առաջին աշխարհամարտի ավարտից և հասնում մինչև մեր օրերը: ***1918 թ. մինչև Երկրորդ աշխարհամարտի ավարտը համարվում է արդյունաբերական հասարակության երրորդ՝ ավարտական շրջափուլը***:

Երկրորդ աշխարհամարտից հետո մարդկությունն աստիճանաբար անցում կատարեց դեպի ***հետարդյունաբերական հասարակություն***: Հույժ կարևոր է այդ պատմության մեկ այլ հիմնարար առանձնահատկություն: ***Ամփոփելով մարդկության անցած ուղին՝ այն շարունակվում է մեր աչքի առաջ***: Այլ խոսքով՝ մենք նրա և՛ ականատեսն ենք, և՛ մասնակիցը:

## Արդյունաբերական հասարակության երրորդ շրջափուլը

Այս շրջափուլում մարդկությունը մեծ թռիչք կատարեց կյանքի բոլոր ասպարեզներում:

Ինչպես գիտեք, XVIII–XIX դարերում Եվրոպայի և Ամերիկայի երկրներում ընթացել էր արդյունաբերական հասարակության ձևավորումը: Այն զարգացման պատնեշներ և սահմաններ չէր ճանաչում:

Արդեն XX դարի սկզբներին ոչ ոքի չէին զարմացնում շոգեշարժիչը, շոգեքարշը կամ շոգենավը: Դրանց փոխարինելու եկան էլեկտրական և դիզելային շարժիչները, ավտոմեքենան և ինքնաթիռը: Տարածում ստացան հեռախոսը, հեռագիրը և ռադիոն, ստեղծվեց հեռուստացույցը: ***Գիտատեխնիկական առաջընթացի արագությունն աննախադեպ էր***:

Շնորհիվ տեխնիկական առաջընթացի՝ աշխարհի տնտեսական, քաղաքական, հոգևոր–մշակութային մի-

4 von 91 12.02.2021, 11:35

1929–1932 թթ. առաջին հեռուստացույցներից

ավորումն ավելի ակնառու տեսք ստացավ: Այդ կապակցությամբ ***երկրների (և մայրցամաքների) միջև խորացավ աշխատանքի բաժանումը***: Նրանք մասնագիտանում էին որոշակի ապրանքների արտադրության բնագավառում: Միջազգային առևտուրը տարածքային առումով ընդգրկեց ամբողջ աշխարհը:

***Հսկայական չափերի հասավ կապիտալի արտահանումը***: Ստեղծվեցին առևտրի, արդյունաբերության, ֆինանսների միջազգային կազմակերպություններ:

***Էական փեղաշարժեր տեղի ունեցան մարդկանց առօրյա կյանքի բոլոր ասպարեզներում***: Նրանց կենցաղը, հասարակական հարաբերությունները և գիտակցությունը մեծ արագությամբ փոփոխություններ էին կրում:

«Մերսեդես» մակնիշի ավտոմեքենայի 1930-ական թթ. նմուշ

***Հասարակական կյանքի գլխավոր միջավայրը դարձավ քաղաքը***: Ամբողջ աշխարհում բազմամիլիոն հսկա քաղաքները դարձան սովորական: Այդպիսին էին Նյու Յորքը, Մեխիկոն, Լոնդոնը, Փարիզը, Մոսկվան, Պեկինը, Տոկիոն և այլն: Դրանք կառուցապատվեցին բազմահարկ շենքերով և լայնահուն փողոցներով: Քաղաքներում կառքով կամ ձիով երթևեկելը մնաց անցյալում: Դրանց փոխարինելու եկան ավտոմեքենան, տրամվայը, մետրոպոլիտենը:

Նոր դարերում սկսված ***8-ժամյա աշխատանքային օրվա*** համար պայքարը Նորագույն շրջանում ավարտվեց հաջողությամբ: Պարտադիր տարրական կրթությանը փոխարինելու եկավ նախ հիմնական, ապա ***միջնակարգ պարտադիր կրթությունը***: Աշակույթը դարձավ զանգվածային:

1930-ական թթ. առաջին մարդատար՝ «Ֆորդ Թրիմոթոր» մակնիշի ինքնաթիռը, որը կարող էր միաժամանակ տեղափոխել 8 ուղևոր

## Հետարդյունաբերական հասարակությունը

***XX դարի կեսերից համաշխարհային քաղաքակրթության պատմության մեջ սկսվեց մի նոր փուլ***, որն անվանում են ***հետարդյունաբերական***, երբեմն էլ՝ տեղեկատվական: Այն նախ և առաջ արդյունք է գիտատեխնիկական հեղափոխության, որն ակնառու էր հատկապես

զարգացած երկրներում՝ ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Գերմանիա, Ֆրանսիա, Իտալիա, Ճապոնիա:

XX դարի երկրորդ կեսին ստեղծվեցին ***առաջին տիեզերանավերը***, և մարդը ոտք դրեց Տիեզերք: Այդ ժամանակաշրջանը նշանավորվեց նաև ***«համակարգչային հեղափոխությամբ»***: Այն արմատապես փոխեց հասարակության կյանքը՝ գիտություն, տնտեսություն, կենցաղ: Մարդկանց ապրելակերպ մուտք գործեցին հեռուստացույցը, համակարգիչը, բջջային հեռախոսը, ավտոմատ և էլեկտրոնային ճշգրիտ սարքավորումները:

Նորագույն «Ասուս» գերբարակ համակարգիչը

Գիտության ու տեխնիկայի նվաճումների լայնածավալ ներդրումն արտադրության և կենցաղի մեջ արմատապես փոխեց վերջիններիս ավանդական բովանդակությունը.

1. *Եթե նախորդ դարաշրջանում արտադրության նպատակը նյութական արժեքներ ստեղծելն էր, ապա այժմ կարևորվում է գիտելիքների և տեղեկույթի արտադրությունը:*
2. *Կարևորվում են մարդկանց կրթությունը, արհեստավարժությունը (պրոֆեսիոնալիզմ) և ստեղծագործական ունակությունները:*
3. *Արժևորվում են մարդկանց սպասարկման ծառայությունները: Դրանք այժմ չեն սահմանափակվում միայն կենցաղով ու առևտրով, այլ ընդգրկում են հասարակական կյանքի լայն շրջանակ՝ կառավարում, բանակ, առողջապահություն, կրթություն, մշակույթ և այլն:*
4. *Միջին ունեցվածքի խավը կազմում է հասարակության ճնշող մեծամասնությունը: Նրա կարծիքը դառնում է վճռորոշ հասարակական կարևորության հիմնախնդիրների լուծման ժամանակ:*
5. *Ժողովրդավարությունը և դրա հիմնարար արժեքները տարածվում են աշխարհի տարբեր շրջաններում:*
6. *Աշխարհը միավորվում է՝ օգտագործելով տնտեսության ու տեղեկատվության, մշակույթի ու գիտության ձեռքբերումները՝ իր առջև ծառացած մարտահրավերներին (բնական աղետներ, շրջակա միջավայրի աղտոտում, մոլորակի տաքացում, երաշտ, անբեր-*



Բարձր դասի «Մերսեդես» ավտոմեքենայի նորագույն մոդել

«Էյրբաս Ա-380» մարդատար ամենամեծ ժամանակակից ինքնաթիռը, որը կարող է տեղափոխել 700 ուղևոր

*րիություն, սով և այլն) համընդհանուր լուծումներ գտնելու համար:*

Մարդկության զարգացման արդի միտումները հասկանալուն ու կյանքում ճիշտ կողմնորոշվելուն, հուսով ենք, ձեզ լավագույնս կօգնի համաշխարհային պատմության «Նորագույն շրջան» դասընթացը:

### *Հարցեր և առաջադրանքներ*

1. Մարդկության պատմության ո՞ր ժամանակահատվածն է ընդգրկում Նորագույն շրջանը:
2. Արդյունաբերական հասարակության երրորդ շրջափուլում հասարակության առաջընթացն ի՞նչ արդյունքներ է արձանագրել:
3. Փորձե՛ք պարզաբանել հետարդյունաբերական հասարակության բնութագրական կողմերը:

**ԲԱԺԻՆ ԱՌԱՋԻՆ**

# ԱՇԽԱՐՀԸ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՇՐՋԱՓՈՒԼՈՒՄ

Firefox https://ebooks.bonee.net/fumf/netl/



# 1 ՆՈՐ ԱՇԽԱՐՀԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

**ԺՈՐԺ ԿԼԵՄԱՆՍՈ**
**(1841–1929)**

1906–1909 և 1917–1920 թթ. Ֆրանսիայի վարչապետ: Ֆրանսիայի ամենափորձառու քաղաքական գործիչներից էր: Հմուտ դիվանագետ, որ համատեղում էր «վագրի կեցվածքը» համբերատար «վարորդի վարքագծի» հետ: Առաջին աշխարհամարտից հետո Կլեմանսոն համարվում էր հերոս ու «հաղթանակի հայր»: Սակայն ֆրանսիացիները դժգոհ էին Վերսալյան պայմանագրի արդյունքներից: Դրա հետևանքով Կլեմանսոն տանուլ տվեց 1920 թ. հունվարի ընտրությունները և հեռացավ քաղաքական ասպարեզից:

1918 թ. նոյեմբերի 11–ին ավարտվեց Առաջին աշխարհամարտը: Իր ընդգրկմամբ և պատճառած վնասներով այն աննախադեպ էր: Նրա հորձանուտի մեջ էին հայտնվել ինչպես Եվրոպան, այնպես էլ Ասիայի ու Աֆրիկայի որոշ շրջաններ՝ ***38 երկիր՝ 1,5 միլիարդ բնակչությամբ: Զոհվեց 10 միլիոն զինվորական, 20 միլիոն մարդ դարձավ հաշմանդամ:***

Աշխարհամարտն ուղեկցվեց ուժգին սոցիալական և քաղաքական ցնցումներով՝ հեղափոխություններ, տերությունների փլուզում, նորանկախ պետությունների առաջացում, գաղութային տարածքների վերաբաժանում: Այդ ամենը պահանջում էր միջազգային հարաբերությունների նոր կարգավորում:

## Փարիզի խաղաղության վեհաժողովը

Փարիզի վեհաժողովը ***գումարվեց 1919 թ. հունվարից մինչև 1920 թ. հունվարը:*** Հիմնախնդիրների բազմազանությամբ այն բացառիկ տեղ ունի պատմության մեջ: Նրա հետ թերևս կարող է համեմատվել միայն Վիեննայի վեհաժողովը (1814–1815 թթ.): Այսպես՝ երկու վեհաժողովներն էլ գումարվել են համաշխարհային նշանակության պատերազմից հետո: Երկուսն էլ նպատակ ունեին վերականգնելու միջազգային հարաբերությունների բնականոն ընթացքը, որը խաթարվել էր մի դեպքում՝ նապոլեոնյան պատերազմների, մյուս դեպքում՝ Առաջին աշխարհամարտի հետևանքով: Երկու վեհաժողովներում էլ իշխում էր հավերժական խաղաղություն հաստատելու և միջազգային անվտանգության կայուն հիմքեր ստեղծելու ձգտումը:

Առկա էին նաև էական տարբերություններ: Վիեննայի վեհաժողովին մասնակցում էին թե՛ հաղթած, թե՛ պարտված կողմերը: Ավելին՝ պարտված Ֆրանսիան պահպանեց մեծ տերության իր կարգավիճակը, մինչդեռ

9 von 91 12.02.2021, 11:35

***Փարիզում մասնակցում էին միայն հաղթող երկրները***: Անտանտի տերություններից չմասնակցեց միայն Ռուսաստանը, ուր իշխանությունը գրավել էին բոլշևիկները և միակողմանի դուրս եկել պատերազմից: Բոլշևիկների խորհրդային իշխանությունը չէր ճանաչվել Անտանտի երկրների կողմից:

***Փարիզի վեհաժողովում գերիշխում էր մեծ հնգյակը՝ Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, ԱՄՆ-ը, Ճապոնիան և Իտալիան***: Սակայն դա չէր նշանակում, թե նրանք ամեն ինչում միաձայն էին: Առկա էին լուրջ տարաձայնություններ, և վեհաժողովի աշխատանքները բազմիցս հայտնվեցին ձախողման եզրին: ԱՄՆ-ը, որ նախապես մեծ մասնակցություն ուներ նոր աշխարհակարգի ձևավորման գործում, հեռացավ Փարիզից:



**ԴԵՅՎԻԴ ԼԼՈՅԴ ՋՈՐՋ**
**(1863–1945)**

Մեծ Բրիտանիայի վարչապետ 1916–1922 թթ.: Լիբերալ կուսակցության առաջնորդներից էր, հմտորեն խուսանավելու շնորհիվ կարողացավ պահպանել վարչապետի պաշտոնը լիբերալ և պահպանողական կուսակցությունների միջև: Ժամանակակիցներից ստացավ «Երկերեսանի Յանուս» մականունը: Նրա շնորհիվ Մեծ Բրիտանիան Փարիզում հասավ իր առջև դրված գրեթե բոլոր խնդիրների լուծմանը: Հետագայում Լլոյդ Ջորջը գրեց «Ճշմարտությունը հաշտության բանակցությունների մասին» աշխատությունը:

## Վերսալ–վաշինգտոնյան համակարգը

Անտանտի դաշնակից երկրների միջև առանձնակի հակասություններ ծավալվեցին գերմանական հիմնախնդրի շուրջ: Ի վերջո տերությունները եկան ընդհանուր հայտարարի, և ***1919 թ. հունիսի 28-ին Փարիզից ոչ հեռու՝ Վերսալի արքայական դղյակում***, Գերմանիայի հետ ստորագրվեց ***հաշտության պայմանագիր***: Պայմանները ծանր էին: Հօգուտ Ֆրանսիայի, Բելգիայի, Չեխիայի և Լեհաստանի՝ ***Գերմանիան զիջում էր իր տարածքի 1/8 մասը, զրկվում էր գաղութներից, զինաթափվում էր***: Նրան արգելվում էր ունենալ ստորջրյա նավատորմ և ռազմական ավիացիա, իսկ բանակը սահմանափակվում էր 100 000 զինվորով: Պարտավորվում էր վճարել մեծ ռազմատուգանք՝ որպես հատուցում հաղթած երկրների կրած նյութական վնասների:

Վերսալի արքայական պալատը, որտեղ կնքվել է 1919 թ. հունիսի 28-ի պայմանագիրը

Վերսալյան պայմանագրից հետո՝ ***1919–1920 թթ., նմանօրինակ պայմանագրեր կնքվեցին*** նաև Գերմանիայի դաշնակիցների՝ ***Ավստրիայի, Բուլղարիայի, Հունգարիայի և Օսմանյան կայսրության*** հետ: Նրանք ունեցան տարածքային կորուստներ, պարտավոր էին սահմանափակել իրենց զինված ուժերը և հաղթողներին վճարել ռազմատուգանք:

Մասնավորապես Օսմանյան կայսրությունը, համաձայն ***1920 թ. օգոստոսի 10-ին Փարիզի Մեր արվարձանում*** կնքված պայմանագրի, հրաժարվում էր Եվրոպայի, Արաբական թերակղզու, Փոքր Ասիայի բազմաթիվ տիրույթներից, նաև Արևմտյան Հայաստանից և Կիլիկիայից: Այդ տարածքներում հիմք էր դրվում ապագա ինքնիշխան պետությունների՝ Իրաք, Սիրիա, Լիբանան և այլն: ***Կազմավորվում էր նաև միացյալ և ժողովրդավարական Հայաստանի Հանրապետությունը***:

***Վերոհիշյալ պայմանագրերը կազմում էին*** միջազգային հարաբերությունների հետպատերազմյան կարգավորման ***Վերսալյան համակարգի առանցքը***: Դա ընդգրկում էր Եվրոպան և Մերձավոր ու Միջին Արևելքը:

Օսմանյան կայսրության բաժանումը՝ ըստ Սևրի պայմանագրի

Սակայն Հեռավոր Արևելքում նույնպես առկա էին հիմնախնդիրներ, որոնք պահանջում էին լուծումներ: Այնտեղ հակադրվում էին Մեծ Բրիտանիայի, Ֆրանսի-

Վերևում հավաքվածները ողջունում են Ֆրանսիայի վարչապետ Ժ. Կլեմանսոյին (ձախից) և Մեծ Բրիտանիայի վարչապետ Դ. Լլոյդ Ջորջին, 1919 թ.

այի և նոր հավակնորդներ ԱՄՆ-ի ու Ճապոնիայի շահերը:

***Հակասությունների կարգավորման նպատակով Վաշինգտոնում (1921 թ. նոյեմբեր — 1922 թ. փետրվար) հրավիրվեց մի նոր վեհաժողով*** ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Ճապոնիայի, Չինաս-

Եվրոպայի քաղաքական քարտեզը 1923 թվականին

**Հայտնի տնտեսագետ Ջ. Մ. Քեյնսի կարծիքը Վերսալյան համակարգի վերաբերյալ**

Հաշտության պայմանագիրը ոչինչ չարեց Եվրոպայի տնտեսության վերականգնման ուղղությամբ: Չարվեց ոչինչ պարտված տերություններին բարի դրացիների վերածելու, նորաստեղծ պետություններին կայունություն հաղորդելու, Ռուսաստանին ճիշտ ուղու վրա կանգնեցնելու նպատակով: Այն ճանապարհ չհարթեց դաշնակիցների տնտեսական համերաշխության համար: Փարիզում համաձայնության չեկան Ֆրանսիայի և Իտալիայի քայքայված ֆինանսների վերականգնման հարցում: Ոչինչ չարվեց աշխարհի նոր կարգի ձևավորման համար: Կլեմանսոն մտածում էր միայն այն մասին, թե ինչպես խեղդամահ անի թշնամու տնտեսությունը, Լլոյդ Ջորջը՝ թե ինչպես հասնի ավելի հաջող գործարքի կնքման ու տուն բերի մի բան, որ առնվազն մեկ շաբաթ դիմանա քննադատության, իսկ ԱՄՆ-ի նախագահը՝ թե ինչպես անի, որ իր ձեռնարկած քայլերը չհակասեն արդարությանն ու իրավունքին:

տանի և այլ երկրների մասնակցությամբ: Ստորագրվեցին համաձայնագրեր, որոնցով ամրագրվում էին տարածաշրջանում այդ տերությունների իրավունքները:

***Այսպես ի հայտ եկավ Վերսալ-վաշինգտոնյան համակարգը***: Այն ունեցավ ինչպես կարևոր ձեռքբերումներ, այնպես էլ՝ բացթողումներ:

***Ձեռքբերումների շարքում կարևոր էր միջազգային հարաբերությունների նոր սկզբունքների մշակումը***.

- *հրաժարում պատերազմից՝ իբրև հակասությունների լուծման միջոցի,*
- *ազգերի ինքնորոշման և սեփական պետություն ունենալու իրավունքի ճանաչում,*
- *նորանկախ պետությունների կարգավիճակի և սահմանների ճշգրտում,*
- *մշտական գործող միջազգային ատյանի՝ Ազգերի լիգայի ստեղծում:*

Էական էին նաև ***բացթողումները***.

*1. Հակառակ իրենց հռչակած արդարության կարգախոսների՝ հաղթած պետությունները պատերազմի կորուստների բեռը բարդեցին պարտվածների վրա: Եվ դրանցում ծայր առած քայքայումը պարարտ հող դարձավ ծայրահեղական տրամադրությունների և հեղափոխական ցնցումների համար:*

*2. Պարտված ներդի միակողմանի զինադադարումն առաջ բերեց վրեժխնդրության (ռևանշ) միտումներ:*

*3. Եվրոպայի և Միջին Արևելքի նորաստեղծ պետությունների սահմանները գծվեցին՝ առանց հաշվի առնելու դրանց ազգային կազմը, և միլիոնավոր մարդիկ սկսեցին գաղթել երկրից երկիր՝ կորցնելով տուն–տեղ:*

*4. Հաղթողները տիրացան պարտված երկրների (մասնավորապես՝ Գերմանիայի) գաղութներին և սահմանեցին տիրապետության ավելի խիստ կարգ:*

### Հարցեր և առաջադրանքներ

1. Վերհիշեք Առաջին աշխարհամարտի պատճառները, հակամարտող խմբավորումների նպատակները: Մարդկային ինչ կորուստներ պատճառեց պատերազմը:
2. Երբ է տեղի ունեցել Փարիզի վեհաժողովը: Ո՞ր վեհաժողովի հետ կարող եք այն համեմատել:
3. Ո՞րն էր Փարիզի վեհաժողովի գլխավոր նպատակը: Ո՞ր երկրներն էին գերիշխում վեհաժողովում:
4. Թվարկեք Վերսալյան հաշտության հիմնական պայմանները:
5. Երբ է կնքվել Սևրի պայմանագիրը: Նշեք դրա հիմնական պայմանները:
6. Ինչ նպատակով և երբ գումարվեց Վաշինգտոնի վեհաժողովը:
7. Միջազգային հարաբերություններում ինչ նոր սկզբունքներ մշակվեցին:

### Քննարկման հարց

Ձեր կարծիքով Վերսալ–վաշինգտոնյան համակարգում գերակշռում էին ձեռքբերումները, թե բացթողումները:

### Նոր հասկացություններ, անուններ

Փարիզի վեհաժողով, Մեծ հնգյակ, Վերսալի պայմանագիր, Սևրի պայմանագիր, Վաշինգտոնի վեհաժողով, Վերսալ–վաշինգտոնյան համակարգ, Ժորժ Կլեմանսո, Դեյվիդ Լլոյդ Ջորջ

Firefox https://ebooks.bonee.net/fumf/netl/



# 2 ԱԶԳԵՐԻ ԼԻԳԱՆ

**ՎՈՒԴՐՈ ՎԻԼՍՈՆ**
**(1856–1924)**

ԱՄՆ-ի 28-րդ նախագահը (1913–1921 թթ.): Իրավագիտության դոկտոր: Համոզված էր, որ իր հզորությամբ առաջատար տերություն դարձած ԱՄՆ-ը պետք է ակտիվորեն մասնակցի հետպատերազմյան կարգավորման գործընթացներին: Նախագահ Վիլսոնին էին պատկանում հետպատերազմյան կարգավորման հիմքում ընկած մի շարք հիմնադրույթներ ու գաղափարներ՝ Ազգերի լիգա, մանդատային համակարգ, միջազգային դատարան և այլն: Հայոց պետականության ստեղծման ջատագով էր: Նրա գլխավորած հանձնախումբը 1920 թ. նոյեմբերին գծեց Հայաստանի Հանրապետության սահմանները: Կողմ էր ՀՀ մանդատը ԱՄՆ-ին տրամադրելուն:

Վերսալ-վաշինգտոնյան համակարգը ծնունդ տվեց միջազգային հարաբերությունների նոր սկզբունքների և դրանք կենսագործող նոր հաստատությունների: Դրանցից էր Ազգերի լիգան:

## Ազգերի լիգայի նպատակը և կառույցը

***Միջազգային այս ատյանի կանոնադրությունը հաստատվեց 1919 թ.***: Պաշտոնապես գոյատևել է մինչև 1946 թ.: Ստեղծման գաղափարը պատկանում էր ԱՄՆ-ի նախագահ ***Վուդրո Վիլսոնին***:

Ազգերի լիգայի կանոնադրության մեջ շեշտվում էր, որ նրա կարևորագույն առաքելությունը խաղաղության և համագործակցության ապահովումն է ամբողջ աշխարհում: Այսպիսի կազմակերպություն պատմության մեջ ստեղծվում էր առաջին անգամ: ***Հիմնադիր անդամները 42-ն էին***: Կենտրոնը դարձավ Ժնև քաղաքը (Շվեյցարիա): Լիգան կազմված էր ***ընդհանուր ժողովից, խորհուրդից*** և ***քարտուղարությունից***:

***Ընդհանուր ժողովին մասնակցում էին բոլոր անդամները՝ հավասար ձայնով***: Նստաշրջանները հրավիրվում էին տարին մեկ անգամ: Քննարկում և նախագծեր էր մշակում միջազգային կարևորագույն խնդիրների վերաբերյալ: Ուներ մշտական հանձնախմբեր:

***Խորհուրդի կազմի ութ երկրներից չորսը՝ Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, Իտալիան և Ճապոնիան, մշտական անդամ էին***: Մնացած չորսը վերընտրվում էին: Այս մարմինը հավաքվում էր տարին երեք անգամ: Բացի ընդհանուր խնդիրներից՝ զբաղվում էր նաև նորաստեղծ պետությունների, տեղական և ընդհանուր բնույթի ռազմական բախումների, ազգային փոքրամասնությունների իրավունքների հարցերով և այլն:

***Քարտուղարությունը*** վարում էր Լիգայի ընթացիկ գործերը: Ուներ շուրջ 500 աշխատակից: Աշխատանք-

15 von 91 12.02.2021, 11:35

Ազգերի լիգայի շենքը Ժնևում

ները ղեկավարում էր ***գլխավոր քարտուղարը***, որն ընտրվում էր ***չորս տարի ժամկետով***: Քարտուղարությունը հաշվետու էր ընդհանուր ժողովին և խորհրդին:

1920–ական թթ. Ազգերի լիգայի ջանքերով հնարավոր եղավ լուծել տարբեր պետությունների միջև տարածքային, քաղաքական, տնտեսական մի շարք հակասություններ՝ Գերմանիա—Լեհաստան, Շվեդիա—Ֆինլանդիա, Իտալիա—Հարավսլավիա, Հունաստան—Բուլղարիա և այլն:

***Սակայն Ազգերի լիգայի որոշումները օրենքի ուժ չունեին և պարտադիր չէին անգամ նրա անդամների համար***: Դա առավել ակնհայտ դարձավ 1930–ական թթ., երբ սկսվեց Իտալիայի, Գերմանիայի և Ճապոնիայի ծավալապաշտությունը: Լիգան չկարողացավ պաշտպանել իր անդամների (Եթովպիա, Չեխոսլովակիա, Ավստրիա, Չինաստան) անվտանգությունը: Եվ ամենակարևորը՝ ***չկարողացավ կանխել Երկրորդ աշխարհամարտը***:

## Մանդատային համակարգը

Մանդատային համակարգը կյանքի կոչվեց՝ համաձայն Ազգերի լիգայի կանոնադրության: Ճանաչելով Գերմանական և Օսմանյան կայսրությունների ժողո-

Firefox https://ebooks.bonee.net/fumf/netl/

**ՖՐԻՏՅՈՖ ՆԱՆՍԵՆ**
**(1861–1930)**

Նորվեգացի մեծ բնեռախույզ, գիտնական, օվկիանագիտության ստեղծողը, քաղաքական և հասարակական գործիչ, հումանիստ, բարերար: Խաղաղության Նոբելյան մրցանակի դափնեկիր:

**Հայաստանը և Ազգերի լիգան**

Հայաստանի Հանրապետությունը 1920 թ. մայիսին պաշտոնապես դիմեց Ազգերի լիգային անդամագրվելու համար, սակայն մերժում ստացավ: Չլուծվեց նաև Հայաստանի մանդատի ստանձնման հարցը: Լիգայի գործնական քայլ կարելի է համարել այսպես կոչված «Նանսենյան անձնագրի» ստեղծումը: Մոտ 320 հազար հայ գաղթականներ 1920-ական թթ. ստացան այդ վկայականներից: Նրանք իրավունք ձեռք բերեցին բնակություն հաստատելու Ազգերի լիգայի անդամ որևէ երկրում, ինչպես նաև ազատ տեղաշարժվելու:

վուրդների ինքնորոշման իրավունքը՝ Լիգան այն տեսակետին էր, որ ինքնիշխանության ճանապարհին նրանք կարիք ունեն զարգացած երկրների ***«ժամանակավոր հոգատարության և առաջնորդության»***: Նկատի ունեին Մեծ Բրիտանիային, Ֆրանսիային, ԱՄՆ-ին, Իտալիային: Նրանք Լիգայից ստանում էին այս կամ այն երկրի ***կառավարման արտոնագիր՝ մանդատ***, և հանդես էին գալիս նրա անունից:

Լիգան ստեղծել էր մի հատուկ հանձնախումբ, որը պետք է վերահսկեր մանդատային կառավարման գործընթացը և որոշումներ կայացներ հովանավորյալ պետությունների ինքնիշխան կառավարման համակարգին անցնելու վերաբերյալ:

***Մանդատային համակարգը ենթարկվեց քննադատության՝ որպես «գաղութատիրության քողարկված ձև»***: Սակայն առկա էին նաև ձեռքբերումները: Մանդատային համակարգի ճանապարհով են անցել մերօրյա պետություններից Եգիպտոսը, Սիրիան, Իրաքը, Լիբանանը և այլն:

Նանսենյան անձնագրի առաջին էջը

## Ազգերի ինքնորոշման իրավունքը

«Ազգերի ինքնորոշում» հասկացությունը միջազգային հարաբերություններում սկսել է ակտիվ շրջանառվել դեռևս 1878 թ. Բեռլինի վեհաժողովում:

Առաջին աշխարհամարտի տարիներին պատերազմող կողմերից յուրաքանչյուրն այն օգտագործում էր քարոզչական նպատակներով: Ճանաչում էր հակառակորդի տարածքում ապրող ազգային փոքրամասնությունների ինքնորոշվելու իրավունքը: Հետագայում Ան-

17 von 91 12.02.2021, 11:35

Firefox https://ebooks.bonee.net/fumf/netl/



**Վիլսոնի 14 կետերը**

1. Խաղաղության բաց պայմանագրերի կնքում:
2. Ծովերում նավագնացության բացարձակ ազատություն:
3. Առևտրի ազատություն՝ մաքսային պատնեշների վերացում:
4. Զինաթափման երաշխիքներ:
5. Գաղութային հարցերի անկանխակալ կարգավորում:
6. Գերմանիայի կողմից ռուսական բոլոր բռնազավթված տարածքների ազատագրում:
7. Բելգիայի ազատագրում և պետության վերականգնում:
8. Գերմանիայի կողմից բռնազավթված ֆրանսիական տարածքների վերադարձ՝ ներառյալ Էլզաս-Լոթարինգիան:
9. Իտալիայի սահմանների ճշգրտում:
10. Ավստրո-Հունգարիայի ժողովուրդներին ինքնիշխանության տրամադրում:
11. Գերմանիայի կողմից բռնազավթված Ռումինիայի, Սերբիայի և Չեռնոգորիայի տարածքների ազատագրում, Սերբիային դեպի ծով ելքի տրամադրում:
12. Օսմանյան տերության թուրքական մասերի ինքնուրույն գոյություն և ազգային երկրամասերի ինքնիշխանություն:
13. Լեհաստանի անկախ պետության ստեղծում:
14. Ազգերի համընդհանուր միության (Ազգերի լիգա) ստեղծում՝ տարածքային միասնականության և մեծ ու փոքր պետություններին հավասարապես քաղաքական անկախության երաշխիքներ տրամադրելու նպատակով:

տանտի երկրներն այն սկսեցին օգտագործել որպես պարտված Գերմանիայի և նրա դաշնակիցների տարածքների մասնատման ու սեփական ազդեցությանը ենթարկելու միջոց:

Անկախ այդ ամենից՝ ***ազգերի ինքնորոշման իրավունքի արմատավորումը հսկայական ազդեցություն ունեցավ համաշխարհային պատմության վրա***: Նրա ջատագովը ԱՄՆ-ի նախագահ Վ. Վիլսոնն էր: Նախապես նա կարծում էր, որ ինքնորոշումը պետք է երաշխավորի փոքրամասնության «ապահով և հարմար կյանքը» տվյալ պետության կազմում: Հետագայում նա հանգեց «իրական և լայն ինքնորոշման» գաղափարին: Դա իրավունք էր տալիս բոլոր ազգերին լինելու ինքնիշխան և ունենալու սեփական պետությունը:

Սակայն Վիլսոնը հետևողական չէր. ըստ նրա տեսակետի՝ ինքնորոշման իրավունք պետք է տրվեր նախ և առաջ պարտված երկրների ազգային փոքրամասնություններին: Նա մտահոգված էր պահպանելու Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, ԱՄՆ-ի գաղութային տիրույթները:



18 von 91 12.02.2021, 11:35

### *Հարցեր և առաջադրանքներ*

1. Ո՞վ էր Ազգերի լիգայի ստեղծման գաղափարի հեղինակը:
2. Ե՞րբ է կազմավորվել Ազգերի լիգան: Ո՞րն էր դրա գլխավոր նպատակը:
3. Լիգայի ջանքերով ինչ հակասություններ հնարավոր եղավ լուծել 1920-ական թթ.:
4. Պարզաբանե՛ք մանդատային համակարգի էությունը:
5. Ե՞րբ և որտե՞ղ է առաջին անգամ շրջանառվել «ազգերի ինքնորոշում» հասկացությունը:
6. Ձեր կարծիքով ինչո՞ւ էին հաղթող երկրները «յուրովի» մեկնաբանում ազգերի ինքնորոշման իրավունքը:

### *Գործնական աշխատանք*

Գծապատկերի տեսքով ներկայացրե՛ք Ազգերի լիգայի կառուցվածքը, գործառույթները:

### *Նոր հասկացություններ, անուններ, արտահայտություններ*

Ազգերի լիգա, Վուդրո Վիլսոն, մանդատային համակարգ, «գաղութատիրության քողարկված ձև», «իրական և լայն ինքնորոշման» գաղափար

Firefox https://ebooks.bonee.net/fumf/netl/



# 3 ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1920–ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Առաջին աշխարհամարտին հաջորդած տարիներին որպես ***ժողովրդավարական առաջապար երկրներ*** շարունակում էին մնալ ***Ֆրանսիան, Մեծ Բրիտանիան և ԱՄՆ–ը***: Ժողովրդավարության ավանդույթներն ամուր էին Բելգիայում և Հոլանդիայում: Նույն ճանապարհով էին ընթանում նորանկախ պետությունները՝ Լեհաստանը, Հունգարիան, Չեխոսլովակիան, Ֆինլանդիան և այլք: Չնայած ակնհայտ տարբերություններին՝ նրանք ունեին մի շարք ընդհանրություններ:

## Տնտեսական իրավիճակը

Առաջին աշխարհամարտը, ինչպես գիտեք, պատճառել էր մեծ ավերածություններ, որոնք էլ հանգեցրին սովի, գործազրկության և թշվառության: Ֆրանսիան կորցրել էր իր ազգային հարստության կեսից ավելին, իսկ Մեծ Բրիտանիան՝ մեկ քառորդը: Մեծ էին Բելգիայի և Հոլանդիայի կորուստները: ***Տնտեսությունը վերականգնելու համար նրանք չունեին միջոցներ***: Ունեին մեծ պարտքեր, և ***պարտատերը հիմնականում ԱՄՆ–ն էր***: Նա պատերազմի մեջ էր մտել 1917 թ. Անտանտի կողմից և իր հյուծված դաշնակիցներին տրամադրել միլիարդավոր դոլարների վարկեր:

Հաղթած պետությունները, մասնավորապես՝ Ֆրանսիան, մտածում էին իրենց պարտքերը վճարել ի հաշիվ պարտված Գերմանիայի: Համաձայն Վերսալի պայմանագրի՝ վերջինս պարտավոր էր վճարել մեծ ռազմատուգանք: Սակայն անկարող էր դա անել, քանզի երկրի տնտեսությունը հիմնահատակ քայքայվել էր: ***Զևավորվել էր փակ շրջանակ***. Գերմանիան չէր կարող վճարել ռազմատուգանք, իսկ դաշնակիցները չէին կարողանում զարգացնել իրենց տնտեսությունը և վճարել պարտքերը: ***Սկսվեց տնտեսական ճգնաժամ***:

20 von 91 12.02.2021, 11:35

«Ֆորդ» ավտոմեքենայի հավաքման առաջին հոսքագիծը Հ. Ֆորդի գործարանում, որտեղ 1925 թ. օրական արտադրվում էր 9000 ավտոմեքենա:

ԱՄՆ–ը, 1924 թ. ընդունված մի ծրագրի համաձայն, մեծ ներդրումներ կատարեց Գերմանիայում, որի տնտեսությունը սկսեց վերականգնվել: ***Գերմանիան սկսեց վճարել ռազմատուգանք՝ նպաստելով նաև դաշնակիցների տնտեսության վերականգնմանը***: Այս ամենը դրական տեղաշարժ առաջացրեց մարդկանց կյանքում և կենցաղում: Սահմանվեց 8–ժամյա աշխատանքային օր, բարձրացվեց աշխատավարձը, մտցվեց առողջության և ծերության ապահովագրություն: ***Վերականգնվեց մարդկանց հավատը ապագայի նկատմամբ***:

Այս գործընթացներն առավել ցայտուն էին ***ԱՄՆ–ում***: Գիտության նվաճումներն այստեղ ներդրվում էին մեծ ծավալներով: Հազարավոր ձեռնարկություններ սկսեցին աշխատել միացյալ ***հոսքագծերով (կոնվեյեր)***: Դա բարձրացնում էր աշխատանքի արտադրողականությունը և իջեցնում ապրանքի ինքնարժեքը: Միայն ***Հենրի Ֆորդի գործարանն օրական արտադրում էր 9000 ավտոմեքենա***:

Այդ նույն ժամանակ ամերիկացի ագարակատերերը յուրացրին հազարավոր հեկտար հողատարածքներ: Ազգաբնակչության 20 տոկոսը կազմող գյուղաբնակները կերակրում էին ոչ միայն ԱՄՆ–ի բնակչությանը, այլև ողողեցին եվրոպական շուկաները էժան հացով, շաքարով, յուղով:

Հասարակության մեջ սկսեց գերակայել այն համոզմունքը, թե ԱՄՆ–ը գտել է զարգացման ուրույն ճանա-

**«ՖՈՐԴ–Տ» ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ԳՈՎԱԶԴԸ**

Մենք ցանկանում ենք ստեղծել մի ավտոմեքենա, որն իր դիմացկունությամբ, հուսալիությամբ, պարզությամբ, հարմարավետությամբ և, վերջապես, շատ ցածր գնով կգրավի երկու սեռերի և բոլոր տարիքների ներկայացուցիչների ուշադրությունը: Ցածր գինը պետք է նրա համար ապահովի բազմահազար սպառողներ այն գնորդների շարքից, ովքեր չեն կարող կամ չեն ուզում խելահեղ գումար վճարել այլ ֆիրմաների ավտոմեքենաների համար:

պարի՝ առանց ճգնաժամերի և ներքին հակասությունների, որն անվանեցին ***բարգավաճման ուղի***:

## Քաղաքական զարգացումները

***Մեծ Բրիտանիայում*** 1920–ական թթ. շարունակում էր գերակայել երկկուսակցական համակարգը, սակայն մի փոփոխությամբ. ***ազատական (լիբերալ) կուսակցությունը հեռացավ ասպարեզից***: Պահպանողական կուսակցության ընդդիմադիր ուժը դարձավ ***աշխատավորական՝ լեյբորիստական կուսակցությունը***: Այն ավելի վճռական էր աշխատավորության շահերի պաշտպանության և հասարակության ժողովրդավարացման պայքարում: ***1924 թ. լեյբորիստները*** հաղթանակ տարան ընտրություններում և ***կազմեցին իրենց առաջին կառավարությունը***: Սակայն նրանց դիրքերն ամուր չէին: Իշխանությունը կրկին անցավ պահպանողականներին:

Էական փոփոխություններ կատարվեցին Բրիտանական տերության կառույցում: ***1921 թ.*** երկար պայքարից հետո տիրույթի՝ ***դոմինիոնի կարգավիճակ ստացավ Իռլանդիան***: Նման կարգավիճակ արդեն ունեին Կանադան և Ավստրալիան: Իսկ ***1926 թ.*** այն շնորհվեց նաև ***Նոր Զելանդիային և Հարավային Աֆրիկային***: Նրանք հռչակվում էին *«Բրիտանական տերության ինքնավար համայնքներ, որոնք ունեն հավասար կարգավիճակ՝ ազատ իրենց ներքին և արտաքին քաղաքականության մեջ: Միավորված են բրիտանական գահի նկատմամբ ընդհանուր հավատարմությամբ»*: Այս կերպ Լոնդոնը շարունակում էր իր ձեռքում պահել տերության կառավարման կարևոր լծակները:

Իռլանդիայի անկախությունը հաստատող անգլո-իռլանդական համաձայնագիրը, որը ստորագրել է նաև Ու. Չերչիլը:

Իռլանդական «Շին Ֆեյն» ազգային կուսակցության կողմից պայթեցված գնացքը՝ բրիտանական զինվորներով և ռազմամթերքով, 1921 թ.

Նորաստեղծ ազգային պետությունները՝ «փոքր ժողովրդավարական հասարակությունները» Եվրոպայում

***Ֆրանսիան*** ապրեց ներքին ուժերի բախման ժամանակաշրջան: ***1923 թ. ճգնաժամից հետո իշխանությունն անցավ սոցիալիստներին***: Նրանք 1924 թ. կազմեցին կառավարություն և սկսեցին կատարել բարեփոխումներ՝ հօգուտ աշխատավորների: Սակայն տնտեսական դրության կայունացման հետ ուժեղացան ***պահպանողականները***: ***1926 թ.*** նրանք ***եկան իշխանության*** և որդեգրեցին «ուժեղ ձեռքի քաղաքականությունը»: Բարձրացրին հարկերը, մեծացրին ռազմական ծախսերը, զարկ տվեցին ծանր արդյունաբերությանը:

***ԱՄՆ-ի*** ներքաղաքական կյանքում 1920-ական թթ. շարունակում էր տիրապետել ***երկկուսակցական համակարգը***՝ ժողովրդավարներ և հանրապետականներ: Սակայն ժողովրդավարական կուսակցությունը մղվել էր հետին պլան: Նրա անդամ նախագահ Վ. Վիլսոնը չկարողացավ Փարիզյան հաշտության շրջանակներում ապահովել ԱՄՆ-ի գերակայությունը: ԱՄՆ-ը չվավերացրեց Վերսալի պայմանագիրը և չմտավ Ազգերի լիգա: 1920 թ. կայացած նախագահական ընտրություններում հաղթեցին հանրապետականները, և հաջորդ ***տասներկու տարիներին*** երկրի կառավարման ղեկը նրանց ձեռքում էր: ***Հանրապետականներին հաջողվեց***

Firefox https://ebooks.bonee.net/fumf/netl/



***հաղթահարել հետպատերազմյան դժվարությունները և ապահովել ամերիկյան հասարակության բարգավաճումը***:

## Փոքր ժողովրդավարական հասարակությունները

***Բելգիան, Հոլանդիան, Լեհաստանը, Չեխոսլովակիան, Ֆինլանդիան, Լատվիան, Լիտվան, Էստոնիան*** և այլ ժողովրդավարական երկրներ 1920–ական թթ. սկզբներին նույնպես ապրեցին տնտեսական և քաղաքական անկայունության ժամանակաշրջան:

1924 թ. սկիզբ առած կայունացումը այդ երկրներում ևս նպաստեց ժողովրդավարական արժեքների և հաստատությունների ամրապնդմանը: Նրանք ներգրավվեցին ինչպես Ազգերի լիգայի, այնպես էլ միջազգային այլ կառույցների մեջ: ***Դարձան «միասնական ժողովրդավարական աշխարհի» անբաժան մասը***:

### *Հարցեր և առաջադրանքներ*

1. Ո՞ր երկրներն էին համարվում ժողովրդավարական: Նշե՛ք ժողովրդավարական երկրների ընդհանրությունները:
2. Ինչո՞ւ ԱՄՆ–ն օգնեց եվրոպական երկրներին: Ի՞նչ արդյունքներ այն տվեց:
3. Ինչ դրական տեղաշարժեր արձանագրվեցին աշխատավորների սոցիալական և կենցաղային պայմաններում 1920–ական թթ.:
4. Որո՞նք էին ԱՄՆ–ի տնտեսական զարգացման առանձնահատկությունները:
5. Մեծ Բրիտանիայում լեյբորիստական կուսակցությունն առաջին անգամ ե՞րբ է եկել իշխանության:
6. Բրիտանական գաղութային տերության մեջ ինչ դոմինիոններ առաջացան և ե՞րբ:
7. Նշե՛ք Ֆրանսիայի և ԱՄՆ–ի քաղաքական զարգացման առանձնահատկությունները:
8. Թվարկե՛ք «փոքր ժողովրդավարական երկրները»:

### *Նոր հասկացություններ, անուններ, արտահայտություններ*

Քաղաքական կայունացում, բարգավաճման ուղի, լեյբորիստական կուսակցություն, «ուժեղ ձեռքի քաղաքականություն», «փոքր ժողովրդավարական երկրներ», «միասնական ժողովրդավարական աշխարհ»

24 von 91 12.02.2021, 11:35

Firefox https://ebooks.bonee.net/fumf/netl/



# 4 ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԵԾ ՃԳՆԱԺԱՄԸ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**ՖՐԱՆԿԼԻՆ ՌՈՒԶՎԵԼՏ (1882–1945)**

ԱՄՆ-ի 32-րդ նախագահը: Նշանավոր իրավագետ, քաղաքական գործիչ, ժողովրդավարական կուսակցության ղեկավարներից: Առանձնահատուկ տեղ ունի ԱՄՆ-ի պատմության մեջ: Ղեկավարել է երկիրը ճակատագրական ժամանակաշրջանում՝ 1933–1945 թթ.: Միակն է ԱՄՆ-ի պատմության մեջ, որ չորս անգամ անընդմեջ ընտրվել է նախագահ: Վճռական էր, ճկուն և լայնախոհ: Նրա «Նոր կուրսի» շնորհիվ ԱՄՆ-ը դուրս եկավ տնտեսական ճգնաժամից՝ ավելի հզորացած և ազդեցիկ: Երկրորդ աշխարհամարտի տարիներին հակահիտլերյան միության կազմակերպիչներից էր:

## Ճգնաժամի պատճառները

***Տնտեսական մեծ ճգնաժամը սկսվեց ԱՄՆ-ում 1929 թ. աշնանը***: Այն տարածվեց արդյունաբերական զարգացած բոլոր երկրներում և ***տևեց մինչև 1933 թվականը***: Այդ պատճառով էլ այն կոչվում է նաև ***համաշխարհային***:

***Ճգնաժամի հիմնական պատճառը արտադրության և սպառման միջև գոյացած ճեղքվածքն էր***: ԱՄՆ-ում արտադրում էին շատ և բազմապիսի ապրանքներ, որոնց գները բարձր էին: Հասարակ մարդիկ չէին կարողանում գնել դրանք: Ապրանքները կուտակվում էին, և դրանց հետագա արտադրությունը դառնում էր աննպատակ: Հեռատես ձեռնարկատերերը հասկանում էին, որ պետք է բարձրացնել մարդկանց աշխատավարձը և իջեցնել ապրանքների գները: Դրանցից էր Հ. Ֆորդը:

Այս մոտեցումը, սակայն, տարածում չգտավ: Դա առաջադրեց ապրանքների և դրամի արժեզրկում: ***Մնանկացան հազարավոր բանկեր, ձեռնարկություններ և ագարակներ: 13 միլիոն մարդ դարձավ գործազուրկ***:

Դրությունը փրկելու համար ամերիկյան ձեռներեցները որոշեցին դադարեցնել ներդրումները Գերմանիայում: Նոր ծլարձակող գերմանական տնտեսությունը նույնպես հայտնվեց ճգնաժամում, որը շղթայաձև տարածվեց Ֆրանսիայում, Մեծ Բրիտանիայում, Բելգիայում, Հոլանդիայում, Լեհաստանում, Չեխոսլովակիայում և այլուր: Դրան հետևեցին սովը և թշվառությունը:

## Նախագահ Ֆրանկլին Ռուզվելտի «Նոր կուրսը»

Առաջինն ԱՄՆ-ում ըմբռնեցին, որ ***ճգնաժամն անհնար է հաղթահարել ազատ շուկայական տնտեսության կանոններով***: Անհրաժեշտ էին արտակարգ միջո-

Մեծ ճգնաժամը ԱՄՆ-ում. գործազուրկներին անվճար սնունդ է բաժանվում:

ցառումներ: Գաղափարի ջատագովը դարձավ նախագահ ***Ֆրանկլին Ռուզվելտը***:

Ժողովրդավարների առաջնորդը նախագահ ընտրվեց 1932 թ., երբ մոլեգնում էր ճգնաժամը: Նա մշակեց մի համալիր ծրագիր՝ ***«Նոր կուրս»***, որի ***նպատակն էր ճգնաժամը հաղթահարել սեղմ ժամկետում***.

• *Պետությունը հսկողություն էր սահմանում դրամատների նկատմամբ. փակում էր թույլերը, իսկ կենսունակներին օգնում էր:*

• *Միավորում էր արդյունաբերական առողջ ձեռնարկությունները և ստիպում նրանց համագործակցել՝ որոշելով, թե ինչ են արտադրելու, որքան, ինչ գնով:*

• *Հսկողություն էր հաստատվում գյուղատնտեսության նկատմամբ: Փակվում էին թույլ ագարակները: Առողջ տնտեսություններին պետությունը օգնություն էր ցուցաբերում:*

• *Պետությունը հոգ էր տանում հասարակ մարդկանց կյանքը բարելավելու ուղղությամբ: Բացում էր նոր աշխատատեղեր, սահմանում աշխատանքային օրվա և աշխատավարձի նվազագույն չափը: Մտցվեց գործազրկության նպաստ:*

Ճիշտ է՝ ԱՄՆ-ը հրաժարվեց շուկայական տնտեսությանը բնորոշ ազատ մրցակցությունից, սակայն գտավ ճգնաժամից դուրս գալու ուղին: Ամերիկյան տնտեսու-

Firefox https://ebooks.bonee.net/fumf/netl/

**ՋՈՆ ՔԵՅՆՍ**
**(1883–1946)**

Անգլիացի խոշոր տնտեսագետ: Ստեղծել է կարգավորվող կապիտալիզմի տեսությունը: Այն մեծ ազդեցություն է ունեցել Արևմուտքի երկրների տնտեսական զարգացման վրա: Մշակել է պետությունների հակաճգնաժամային քաղաքականության սկզբունքները: Համարվում է բոլոր ժամանակների երեք խոշորագույն տնտեսագետներից մեկը:

թյունը շուտով ցույց տվեց առողջացման նշաններ: 1935 թ. գործազրկությունը կիսով չափ կրճատվեց: Սկսել էր վերականգնվել արդյունաբերությունը: Կայունացել էր ամերիկյան դոլարը: ***Երկրորդ աշխարհամարտի նախօրեին տնտեսությունը վերականգնվել էր, և երկիրը բռնել էր վերելքի ուղին***:

## Ճգնաժամը Մեծ Բրիտանիայում

Ճգնաժամը խաթարեց նաև Մեծ Բրիտանիայի բնականոն զարգացումը: Հատկապես ուժեղ էր հարվածը ծանր արդյունաբերությանն ու բանկային համակարգին: Տարածում ստացավ գործազրկությունը: Սակայն ***Մեծ Բրիտանիան համեմատաբար դյուրությամբ դուրս եկավ ճգնաժամը***: Ասում էին, որ այդ ***հսկայածավալ տերությունում «արևը մայր չի մտնում»***: Աշխարհի տարբեր կողմերից շարունակվում էր էժան հումքի և ապրանքների ներմուծումը: Արդեն ***1935 թ. Մեծ Բրիտանիան հաղթահարեց ճգնաժամի ակնառու հետևանքները***:

Վերականգնմանը մեծապես նպաստեց նաև կառավարության հավասարակշիռ քաղաքականությունը: ***1931 թ.*** պահպանողականները և լեյբորիստները մի կողմ թողեցին իրենց հակասությունները և կազմեցին ***«համատեղ ազգային կառավարություն»***՝ ***լեյբորիստ Ռամսեյ Մակդոնալդի վարչապետությամբ***: Նա կառավարեց չորս տարի և արեց ամեն ինչ՝ պաշտպանելու բրիտանական տնտեսությունը:

## Ճգնաժամը Ֆրանսիայում

Ինչպես նշել ենք, այս երկրում 1924 թ. նկատվող տնտեսական զարգացումը զգալիորեն պայմանավորված էր Գերմանիայից ստացվող ռազմատուգանքով: Սակայն ճգնաժամի պայմաններում Գերմանիան դադարեցրեց ռազմատուգանքի վճարումը: Կրճատվեցին արտադրության ծավալները: Դրամն արժեզրկվեց: Տարածվեց գործազրկությունը:

Հազարավոր ագարակատերեր սնանկացան: Գյուղատնտեսական ապրանքների գներն աճեցին: Սկսվեց

27 von 91 12.02.2021, 11:35

Ֆրանսիական ժողովրդական ճակատի առաջնորդները. Փարիզ, 1936 թ.

սով: ***Դրությունն ավելի աղետալի կլիներ, եթե չլիներին գաղութներից ստացվող էժան հումքն ու ապրանքները***:

Ի տարբերություն ԱՄՆ–ի և Մեծ Բրիտանիայի՝ ***Ֆրանսիական կառավարությունը չուներ հակաճգնաժամային հստակ ծրագիր***: Երկրում ակտիվանում էին ծայրահեղ կոմունիստական և ֆաշիստական տրամադրությունները: Ֆաշիստները կազմակերպեցին երկրի նախագահի սպանությունը:

Ի պատասխան՝ ***ժողովրդավարական ուժերը համախմբվեցին սոցիալիստների շուրջ***: Ստեղծվեց ***Ժողովրդական ճակատը: 1936 թ. այն կազմեց կառավարություն՝ Լեոն Բլյումի վարչապետությամբ***: Կատարվեցին բարեփոխումներ՝ ճգնաժամը մեղմելու և աշխատավորների դրությունը բարելավելու ուղղությամբ:

Այս կառավարությունն ազգայնացրեց ռազմական արդյունաբերությունը և Ֆրանսիական բանկը, բացեց նոր աշխատատեղեր, բարձրացրեց աշխատավարձը և այլն:

Սակայն ուժեղ էր պահպանողականների դիմադրությունը, և մինչև 1930–ական թթ. վերջը ***Ֆրանսիային այդպես էլ չհաջողվեց հաղթահարել ճգնաժամի հետևանքները***:

### «Փոքր ժողովրդավարական հասարակությունները»

Ճգնաժամն ուժգին հարվածեց նաև Բելգիայի, Հոլանդիայի, Չեխոսլովակիայի, Լեհաստանի, Ֆինլանդիայի և ժողովրդավարական մյուս երկրների տնտեսություններին: ***Նրանք չունեին հարուստ նյութական միջոցներ և կախված էին մեծ տերություններից***: Մինչև 1930–ական թթ. վերջը նրանք ***չկարողացան լիովին հաղթահարել ճգնաժամի հետևանքները***: Ուստի միանգամայն անպատրաստ էին այն փորձություններին, որոնք սպասվում էին Երկրորդ աշխարհամարտի նախօրեին և դրա ընթացքում:

#### *Հարցեր և առաջադրանքներ*

1. Ո՞ր երկրից է սկիզբ առել Տնտեսական մեծ ճգնաժամը:
2. Նշեք մեծ ճգնաժամի հիմնական պատճառը: Ինչպե՞ս էին փորձում լուծել այդ խնդիրը Հենրի Ֆորդը և ամերիկյան մի շարք այլ ձեռնարկատերեր:
3. Ինչ քայլեր ձեռնարկեց նախագահ Ֆրանկլին Ռուզվելտը ճգնաժամը հաղթահարելու համար:
4. Ինչո՞ւ Մեծ Բրիտանիան համեմատաբար հեշտ դուրս եկավ մեծ ճգնաժամից: Ե՞րբ է ստեղծվել և որքա՞ն է կառավարել համատեղ ազգային կառավարությունը:
5. Ինչ քայլեր ձեռնարկեց Լեոն Բլյումի կառավարությունը Ֆրանսիայում ճգնաժամը հաղթահարելու համար:
6. Ինչպե՞ս դրսևորվեց ճգնաժամը «փոքր ժողովրդավարական երկրներում»:

#### *Քննարկման հարց*

Ինչո՞ւ շուկայական տնտեսության կանոններով հնարավոր չէր հաղթահարել մեծ ճգնաժամը:

#### *Նոր հասկացություններ, անուններ, արտահայտություններ*

Տնտեսական մեծ ճգնաժամ, Ֆրանկլին Ռուզվելտ, «Նոր կուրս», «համատեղ ազգային կառավարություն», Ռամսեյ Մաքդոնալդ, Ժողովրդական ճակատ, Լեոն Բլյում

Firefox https://ebooks.bonee.net/fumf/netl/



# 5 ԱՄԲՈՂՋԱՏԻՐԱԿԱՆ ՎԱՐՉԱԿԱՐԳԵՐԸ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ

## Ամբողջատիրության բովանդակությունը

1920–1930-ական թթ. Եվրոպայի որոշ երկրներում հաստատվեց կառավարման մի համակարգ, որն իր բնույթով բռնատիրական էր: Պետությունն իր վերահսկողությունը հաստատեց կյանքի բոլոր բնագավառներում՝ քաղաքականություն, տնտեսություն, կրոն, մշակույթ, մամուլ և այլն: ***Նման վարչակարգերը ստացել են ամբողջատիրություն՝ տոտալիտարիզմ անվանումը***:

Այդ ճանապարհով ընթացան ***Իտալիան, Գերմանիան*** և ***ԽՍՀՄ-ը***: Դրանցում նպաստավոր պայմաններ էին ստեղծվել ծայրահեղական ուժերի համար՝ գրավելու իշխանությունը: Ճիշտ է՝ ամբողջատիրական վարչակարգերը տարբերվում էին միմյանցից, բայց ունեին մի շարք ***ընդհանուր հատկանիշներ***.

- *Հասարակությունում անհատը անվերապահորեն ենթարկվում է մեծամասնությանը՝ հրաժարվելով սեփական մղումներից:*
- *Պետությունը ճանաչվում է իբրև միակ ստեղծագործ ուժը, որն ազգին առաջնորդում է դեպի «պայծառ ապագա»:*
- *Գոյություն ունի միայն մեկ ճշմարիտ կուսակցություն, որն ուղղություն է տալիս պետությանն ու ազգին:*
- *Անհատից, ազգից, պետությունից ու կուսակցությունից վեր կանգնած է առաջնորդը:*

Տարօրինակ է, բայց ճշմարտություն՝ առաջնորդները հանդես էին գալիս ազատության և ժողովրդավարության անունից: Այդպիսիք էին ***Բենիտո Մուսսոլինին*** (Իտալիա), ***Ադոլֆ Հիտլերը*** (Գերմանիա) և ***Իոսիֆ Ստալինը*** (ԽՍՀՄ):

30 von 91 12.02.2021, 11:35

**ԲԵՆԻՏՈ ՄՈՒՍՍՈԼԻՆԻ (1883–1945)**

1922–1943 թթ. Իտալիայի բռնապետ: 1919 թ. ստեղծել է ֆաշիստական կուսակցությունը և մշակել դրա գաղափարական հիմնադրույթները: Օգտվելով երկրում ստեղծված ծանր տնտեսական և քաղաքական դրությունից՝ եկել է իշխանության: 1922 թ. դարձել է վարչապետ: Վարել է ռազմատենչ քաղաքականություն՝ դաշնակցելով Գերմանիայի և Ճապոնիայի հետ: Երկրորդ աշխարհամարտում փորձել է վերականգնել Հռոմեական տերության փառքը, սակայն ձախողվել է: 1943 թ. հեռացվել է իշխանությունից, իսկ հետո՝ ենթարկվել մահապատժի:

## Ֆաշիզմն Իտալիայում

Ֆաշիզմն ամբողջատիրության տարատեսակներից է: ***Ֆաշիզմի հայրենիքն Իտալիան է***: Բ. Մուսսոլինին հիմնել էր իր ***Մարտական միությունը (ֆաշիստական կուսակցություն)***, որի նպատակն էր «ապահովել իտալական ազգի բարօրությունը»:

Քայքայված երկրում նման գաղափարը հրապուրիչ էր: Ուստի ***կարճ ժամանակում ֆաշիստները շահեցին հասարակ իտալացիների համակրանքը: 1922 թ. Մուսսոլինին դարձավ Իտալիայի վարչապետը***: Սկզբում նա կառավարում էր ըստ սահմանադրության, սակայն շուտով վերածվեց բռնապետի: Արդեն 1925 թ. օրենքով խորհրդարանն իրավունք չուներ օրենքներ ընդունելու առանց նրա հավանության: Բացի ֆաշիստականից՝ բոլոր կուսակցությունները հայտարարվեցին օրենքից դուրս:

***Մուսսոլինին ճանաչվեց երկրի առաջնորդ՝ դուչե***: Նա մշակեց տնտեսվարման մի նոր համակարգ: Իտալական տնտեսության հիմնական ճյուղերը միավորվեցին ընկերությունների մեջ: Դրանց անդամները՝ բանվորները, ճարտարագետները, կառավարիչները, մասնակցում էին կառավարմանն ու շահույթի բաշխմանը: Ընկերությունների աշխատանքը համակարգելու համար ստեղծվեց ***Արտադրական միությունների ազգային խորհուրդը***: Այն ֆաշիստական կուսակցության և կառավարության վերահսկողության ներքո էր: ***Մտցվեց 8-ժամյա աշխատանքային օր, բարձրացվեց միջին աշխատավարձը, ծավալվեց բնակարանաշինություն*** և այլն:

Մուսսոլինին հայտարարում էր, թե նպատակ ունի ***վերականգնելու Հին Հռոմի փառքը***: 1936–1939 թթ. Իտալիան բռնազավթեց Եթովպիան (Աֆրիկայում) և Ալբանիան (Բալկաններում): Պատրաստվում էր հարվածն ուղղել Հունաստանի դեմ: ***Նպատակն էր «Միջերկրական ծովը վերածել իտալական լճի»***:

Նպատակին հետամուտ՝ Իտալիան 1936 թ. ռազմական համագործակցության պայմանագիր կնքեց Գերմանիայի հետ: ***Ծնվեց «Բեռլին—Հռոմ» ռազմատենչ բլո-***

***դաքական առանցքը***, որին հետագայում միացավ Ճապոնիան:

## Նացիոնալ-սոցիալիզմը Գերմանիայում

Ամբողջատիրական վարչակարգը Գերմանիայում ձևավորվել է ավելի ուշ՝ 1930-ական թթ.: Սակայն արմատները գալիս էին հետպատերազմյան հիմնախնդիրներից:

Հիշենք՝ Գերմանիան պատերազմից դուրս էր եկել ծայրաստիճան քայքայված: Սրվել էին ներքին հակասությունները, ակտիվացել ծայրահեղական ուժերը: Այս պայմաններում ***չափավոր սոցիալիստները*** ավելի ընդունելի էին համարվում: ***1919 թ.*** նրանք էլ ***եկան իշխանության***: Երկիրը հռչակեցին ***ժողովրդավարական հանրապետություն***՝ իր խորհրդարանով, նախագահով և վարչապետով (կանցլեր): Այն գոյատևեց մինչև 1932 թ.: Հայտնի է նաև ***Վայմարյան հանրապետություն*** անունով, քանի որ նստավայրը սկզբում Վայմար փոքրիկ քաղաքն էր:

Սակայն չափավոր սոցիալիստները չկարողացան պահել իշխանությունը: Տնտեսական կայունացման պայմաններում աշխուժացան ձեռներեցներն ու հողատերերը: Նրանք էլ իրենց ձեռքը վերցրին հանրապետության կառավարումը:

***Դրությունը փոխվեց 1929 թ.***, երբ վրա հասավ Տնտեսական մեծ ճգնաժամը: Կառավարությունը չկարողացավ գտնել դրա հաղթահարման ուղիները: ***Աշխուժացան նացիոնալ-սոցիալիստները՝ նացիստները***: Նրանց կուսակցությունն իր խնդիրն էր համարում պաշտպանել ազգի ոտնահարված իրավունքները և նրա տիրապետությունը հաստատել ողջ աշխարհում: Խոստանում էր կառուցել սոցիալիզմ, որի դեպքում երջանիկ ու բարեկեցիկ կլիներ ամբողջ գերմանական ազգը:

***Նացիստների գաղափարները հրապուրում էին հուսալքված հասարակ գերմանացիներին***: Նրանց օժանդակում էին նաև ***խոշոր ձեռներեցները, որոնք ձգտում էին կայունության***: Պատահական չէ, որ 1932 թ. ընտրություններում նացիստները հասան հաջողության:

**ԱԴՈԼՖ ՀԻՏԼԵՐ**
**(1889–1945)**

Գերմանական ֆաշիստների առաջնորդը: 1921 թ. ղեկավարել է նացիոնալ-սոցիալիստական կուսակցությունը: «Իմ պայքարը» գրքում շարադրել է գերմանական ֆաշիզմի (նացիզմի) հիմնարար գաղափարները: 1933 թ. տնտեսական ճգնաժամի պայմաններում նա և իր կուսակցությունը եկել են իշխանության: Եղել է Երրորդ կայսրության (ռայխ) վարչապետը՝ ռայխսկանցլեր: Հռչակվել է «ազգի առաջնորդ»: Վարել է ռազմատենչ արտաքին քաղաքականություն: Սանձազերծել է Երկրորդ աշխարհամարտը (1939–1945): Մարդկությանը պատճառել է մեծաթիվ վնասներ: Իր երկիրը կանգնեցրել է կործանման եզրին: Ինքնասպան է եղել 1945 թ. ապրիլի 30-ին:

Firefox https://ebooks.bonee.net/fumf/netl/

Ռայխստագը ողջունում է Հիտլերին:

Խորհրդարանում նրանց պատգամավորական խումբը ամենամեծն էր:

***1933 թ. նացիստների առաջնորդ Ա. Հիտլերը նշանակվեց վարչապետ***: Իսկ հաջորդ տարի նա հռչակվեց ***գերմանական ազգի առաջնորդ՝ ֆյուրեր***, և դարձավ «ցմահ վարչապետ» (նախագահի պաշտոնը լուծարվեց): Գերմանացիներին ստիպեցին հավատարմության երդում տալ նրան: Հիտլերն ու նրա շրջապատը իրենց ձեռքում կենտրոնացրին ամբողջ իշխանությունը: Փոխվեց երկրի պաշտոնական անվանումը. այն կոչվեց ***Երրորդ կայսրություն (Երրորդ ռայխ)***:

Փակվեցին բոլոր հասարակական, կրոնական կազմակերպություններն ու կուսակցությունները, թերթերն ու ամսագրերը: Գործում էր միայն նացիստական կուսակցությունը: Այլախոհները ձերբակալվեցին: Ստեղծվեց գաղտնի ոստիկանություն, որի հսկողության տակ էին բոլորը: Արմատավորվեց Հիտլերի պաշտամունքը:

Հիտլերը ***չազգայնացրեց տնտեսությունը***: Տարբեր ճյուղերում պահպանվեցին մասնավոր ձեռնարկություններ: Սակայն դրանք ***պետության վերահսկողության*** տակ էին: Աշխատում էին ըստ նրա հաստատած պլանների: ***Խոր ճգնաժամից հետո տնտեսությունը սկսեց զարգանալ***:

Գերմանիայի համախառն արտադրանքը 1933–1939 թթ. եռապատկվեց: Վերացավ գործազրկու-

33 von 91 12.02.2021, 11:35

Firefox https://ebooks.bonee.net/fumf/netl/

Նացիստական վարչակարգը իրականացրեց մոտ 6 մլն հրեաների ցեղասպանությունը, որը հայտնի է «Հոլոքոստ» անունով: Հրեաներին բռնի ուղարկում էին համակենտրոնացման ճամբարներ և զանգվածաբար ոչնչացնում:

թյունը: Բարելավվեցին աշխատավորների կենցաղային պայմանները:

Նացիստական Գերմանիայի արտաքին քաղաքականությունը կառուցված էր ***բռնի ուժի գործադրման (ագրեսիա)*** վրա: ***1935–1939 թթ.*** Գերմանիան նախ իրեն վերադարձրեց ***Հռենոսի երկրամասը***, իսկ ապա բռնակցեց ***Ավստրիան*** և ***Չեխոսլովակիան***:

Ինչպես ասացինք, նա ռազմական դաշինքի մեջ մտավ Իտալիայի հետ: Գերմանիան և Իտալիան մասնակցեցին Իսպանիայում ծավալված քաղաքացիական պատերազմին (1936–1939 թթ.), նպաստեցին այդ երկրում ֆաշիստական վարչակարգի հաստատմանը:

Ֆաշիստական բազմաթիվ համակենտրոնացման ճամբարներից մեկի՝ Բուխենվալդի հատուկ վառարանները, որտեղ ոչնչացնում էին ոչ միայն գազախցիկներում սպանվածներին, այլև կենդանի մարդկանց:



34 von 91 12.02.2021, 11:35

### *Հարցեր և առաջադրանքներ*

1. Ինչ է ամբողջատիրությունը: Թվարկեք այն բնութագրող ընդհանուր հատկանիշները:
2. Եվրոպայի ո՞ր երկրներում հաստատվեցին ամբողջատիրական վարչակարգեր:
3. Ո՞ր երկիրն է համարվում ֆաշիզմի հայրենիքը:
4. Մուսսոլինին ե՞րբ դարձավ վարչապետ: Ո՞րն էր նրա գլխավոր նպատակը:
5. Ինչ քայլեր ձեռնարկեց դուչեն՝ Իտալիայի տնտեսությունը կարգավորելու համար:
6. Ֆաշիստները Գերմանիայում ե՞րբ եկան իշխանության:
7. Ինչ առանձնահատկություններ ուներ գերմանական ֆաշիզմը:
8. Նշե՛ք Հիտլերի արտաքին քաղաքականության արդյունքները:

### *Քննարկման հարց*

Ինչո՞ւ Իտալիայում և Գերմանիայում հաստատվեց ֆաշիստական վարչակարգ:

### *Նոր հասկացություններ, անուններ, արտահայտություններ*

Ամբողջատիրություն, ֆաշիզմ, Բենիտո Մուսսոլինի, Մարտական միություն, դուչե, «Միջերկրական ծովը վերածել իտալական լճի», նացիոնալ–սոցիալիզմ, Ադոլֆ Հիտլեր, ֆյուրեր, Երրորդ կայսրություն (ռայխ), Հոլոքոստ

Firefox https://ebooks.bonee.net/fumf/netl/



# 6 ԽՍՀՄ–Ը 1922–1939 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

## ԽՍՀՄ–ի կազմավորումը

Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը (ԽՍՀՄ, Խորհրդային Միություն) ***կազմավորվել է 1922 թ. դեկտեմբերի 30–ին***: Պաշտոնապես այն ինքնիշխան խորհրդային պետությունների (Ռուսաստան, Ուկրաինա, Բելոռուսիա և Անդրկովկասյան Դաշնություն) միություն էր: ***Մայրաքաղաքը Մոսկվան էր***: Հետագայում կազմավորվեցին կամ ԽՍՀՄ–ի կազմ մտան նաև այլ հանրապետություններ:

ԽՍՀՄ–ի կազմավորման հռչակագրով ամրագրվում էր, որ միությունը կառուցված է ազգերի ինքնորոշման սկզբունքով: ***Շեշտվում էր, որ հանրապետություններից յուրաքանչյուրն իրավունք ունի դուրս գալու ԽՍՀՄ–ի կազմից: Իրականում ԽՍՀՄ–ն ազգերի բռնի միավորում էր***. ամեն ինչ որոշվում էր Մոսկվայում՝ կենտրոնական իշխանության մարմինների կողմից:

- *1920 թ. դեկտեմբերի 2–ին խորհրդայնացված Հայաստանն ուներ մոտ 30 000 քառ. կմ տարածք: Արևմտյան Հայաստանն ու Կարսի մարզը Ռուսաստանի*

**ԽՍՀՄ–ի կազմավորումը 1922 թ.**

ՌՍԴԽՀ — Ռուսաստանի Սոցիալիստական Դաշնային Խորհրդային Հանրապետություն
ՈՒՍԽՀ — Ուկրաինայի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն
ԲՍԽՀ — Բելոռուսիայի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն
ԱԽԴՀ — Անդրկովկասի Խորհրդային Դաշնային Սոցիալիստական Հանրապետություն

36 von 91 12.02.2021, 11:35

Firefox https://ebooks.bonee.net/fumf/netl/



*խորհրդային կառավարությունը գիջեց Թուրքիային: 1922 թ. ձևավորվեց Անդրկովկասյան Դաշնությունը՝ կազմված Հայաստանից, Վրաստանից և Ադրբեջանից: Դրա կազմում էլ Հայաստանը մտավ ԽՍՀՄ-ի մեջ: 1936 թ. Անդրկովկասյան Դաշնությունը լուծարվեց, և Հայաստանը ճանաչվեց ինքնուրույն խորհրդային հանրապետություն: Այլ հանրապետությունների նման նա ևս չուներ սեփական զինված ուժեր և ֆինանսներ: Զուրկ էր ինքնուրույն արտաքին քաղաքականություն վարելու իրավունքից:*

## Տնտեսության վերականգնումը. նոր տնտեսական քաղաքականությունը (նէպ)

Նախորդ դասընթացից գիտեք, որ 1917 թ. Հոկտեմբերյան հեղաշրջմամբ Ռուսաստանում իշխանությունը գրավել էին ***ծայրահեղ մարքսիստները՝ բոլշևիկները***: Երկիրը բաժանվեց թշնամական ճամբարների, ***սկսվեց քաղաքացիական պատերազմ***, որը տևեց ***1918–1920 թթ.***: Պատերազմին, սովին, համաճարակին զոհ գնացին միլիոնավոր մարդիկ:

Քայքայվել էր տնտեսությունը: ***Իշխանությունը պահելու համար բոլշևիկները գործադրեցին արտակարգ միջոցներ***: Նախ՝ սովը մեղմելու համար մտցվեց ***պարենամատակարարում***: Զինված ջոկատները շրջում էին գյուղից գյուղ և գյուղացիներից խլում «պարենի ավելցուկը»: Երկրորդ՝ ***վերացվեցին շուկայական հարաբերությունները***: Պետությունն ինքն էր կատարում առաջին անհրաժեշտության ապրանքների բաշխումը. աշխատավարձի փոխարեն մարդիկ ստանում էին նվազագույն

Նէպմանները (նէպի շրջանում ձեռներեցներին այդպես էին անվանում) իրենց խանութում, 1924 թ.

37 von 91 12.02.2021, 11:35

Firefox https://ebooks.bonee.net/fumf/netl/



քանակի հաց, շաքար, յուղ, օճառ և այլն: Դիմադրություն ցույց տվողներին սպառնում էր աքսոր: Այդ քաղաքականությունը ստացավ ***«Ռազմական կոմունիզմ»*** անվանումը:

Ուժերի գերազույն լարումով խորհրդային իշխանությունը կարողացավ հաղթանակով ավարտել քաղաքացիական պատերազմը: Դրանից հետո առաջնահերթ խնդիր էր վերականգնել երկրի տնտեսությունը: Բոլշևիկները Վ. Լենինի նախաձեռնությամբ մշակեցին ***նոր տնտեսական քաղաքականությունը (ՆԷՊ)***: Այն ***սկսեց կիրառվել 1921 թ. գարնանից***:

Վերացվեց պարենամատակարարումը: Գյուղացու համար ***սահմանվեց պարենային հարկ***, որի վճարումից հետո նա կարող էր իր բերքը վաճառել շուկայական գներով: Ինչ վերաբերում է բանվորներին, ապա նրանք սկսեցին ստանալ աշխատավարձ, որի չափը կախված էր նրանց արտադրանքի քանակից և որակից: Արդյունաբերությունն առողջացնելու նպատակով պետությունը կատարեց հաջորդ քայլը. ***մասնավոր ձեռներեցներին հանձնեց մանր և միջին բազմաթիվ ձեռնարկություններ***: Գյուղի և քաղաքի միջև ***աշխուժացան շուկայական հարաբերությունները***:

Վերականգնվեցին ցանքատարածությունները, վերաբացվեցին հանքերը, գործարաններն ու երկաթուղիները: ***1928 թ. ԽՍՀՄ-ի արտադրանքի ծավալները հասան 1913 թ. մակարդակին***. տնտեսությունը վերականգնվել էր:

## Արդյունաբերացումը և կոլեկտիվացումը

***Արդյունաբերացում (ինդուստրացում) նշանակում է տվյալ երկրի տնտեսության այնպիսի վերակառուցում, որ դրանում գերակշռի արդիական արդյունաբերությունը***: Նման ճանապարհով արդեն ընթացել էին Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, ԱՄՆ-ը, Գերմանիան, Իտալիան, Ճապոնիան: ԽՍՀՄ-ն իր զարգացման մակարդակով հետ էր մնում:

Բոլշևիկյան ղեկավարության մեջ ***կար տարակարծություն***: Ոմանք կարծում էին, թե պետք է զարգացնել նէպը և ապա ***աստիճանաբար անցնել սոցիալիզմին***:



**ԻՈՍԻՖ ՍՏԱԼԻՆ**
**(1879–1953)**

Խորհրդային պետական գործիչ, կոմունիստական կուսակցության ղեկավար և ԽՍՀՄ առաջնորդ:
1920-ական թթ. վերջին իր ձեռքում կենտրոնացրեց երկրի կառավարման բոլոր լծակները: Հաշվեհարդար տեսավ իր բոլոր հակառակորդների հետ: Բռնությունները 1930-ական թթ. դարձան զանգվածային: Ծայրահեղ բռնի միջոցներով անցկացրել է ԽՍՀՄ արդյունաբերացումն ու կոլեկտիվացումը: Հայրենական մեծ պատերազմի ժամանակ կարողացել է միավորել ժողովրդի ուժերը և փոխել պատերազմի ընթացքը: Ակտիվ մասնակցել է Հակահիտլերյան միության ստեղծմանը:
Հետպատերազմյան տարիներին ԽՍՀՄ-ում նրա նախաձեռնությամբ բռնությունները կրկին վերսկսվեցին:

38 von 91 12.02.2021, 11:35

Firefox https://ebooks.bonee.net/fumf/netl/

Կուզնեցկի մետաղագործական կոմբինատը 1937 թ.

Կար հակառակ ուղղությունը. վերադառնալ «Ռազմական կոմունիզմին» և ուժերի գերագույն լարումով ***կարճ ժամկետում*** կառուցել սեփական արդյունաբերությունը:

***Հաղթեց երկրորդ ուղղությունը, որի ջատագովը Իոսիֆ Ստալինն էր***: Նա համոզված էր, որ արդյունաբերացումը պետք է կատարել հիմնականում ի հաշիվ գյուղացիների՝ ստիպելով նրանց պետությանը վճարել բարձր հարկեր: Նույն նպատակով պետք է բռնագրավվեր նաև եկեղեցու ունեցվածքը: Երրորդ աղբյուրը խորհրդային իշխանության կողմից բռնաղատված և աքսորված միլիոնավոր մարդկանց անվճար աշխատանքն էր:

***Արդյունաբերացումը կատարվեց ըստ հնգամյա պլանների***: Նախապես որոշում էին՝ ինչ կառուցել, որտեղ, ինչ միջոցներով: Ապա անցնում էին դրանց կատարմանը: ***Առաջին հնգամյակը մեկնարկեց 1928 թ.***: Մինչև 1941 թ. ԽՍՀՄ-ում կառուցվեցին հազարավոր մեծ ձեռնարկություններ:

***Հնգամյա պլանները վերաբերում էին նաև գյուղին***: Ստալինյան ղեկավարությունը խնդիր էր դրել բռնի միավորելու գյուղացիների անհատական տնտեսությունները: Դրանցից ստեղծվելու էին ***կոլեկտիվ (ընդհանուր) տնտեսություններ***՝ ընդհանուր ունեցվածքով: Յուրաքանչյուր գյուղացի իր աշխատանքի դիմաց ստանալու էր բերքի իր մասնաբաժինը: Գնալով այդ քայլին՝ պետությունը հոգում էր ոչ այնքան գյուղացիների, որքան իր կայուն եկամուտների մասին: Կոլտնտեսությունների նկատմամբ նա սահմանեց բարձր հարկեր, սակայն անհատական գյուղացիական տնտեսությունների վրա դրված հարկերն ավելի բարձր էին:

39 von 91 12.02.2021, 11:35

***Համապարած կոլեկտիվացումը սկսվեց 1929 թ.***: Նէպի տարիներին ձևավորվել էր ***ունևոր գյուղացիների խավ՝ կուլակությունը***: Կուլակները դիմադրում էին, չէին ցանկանում իրենց ունեցվածքը հանձնել կոլտնտեսություններին: Նրանց գնդակահարում էին կամ աքսորում:

Ստեղծվեցին հազարավոր կոլտնտեսություններ, ինչպես նաև պետական տնտեսություններ (սովխոզներ): Գյուղ ներմուծվեց նոր տեխնիկա: Սկզբում դրանք ապահովում էին կայուն բերք, սակայն հետագայում բերքատվությունն ընկավ: Պատճառն այն էր, որ գյուղացին շահագրգռված չէր իր աշխատանքի արդյունքներով:

Ստալինյան լրված համակենտրոնացման ճամբարներից մեկի մերօրյա տեսքը, որտեղ տառապել են անհիմն դատապարտված հազարավոր մարդիկ:

## Քաղաքական համակարգը (ամբողջատիրություն)

ԽՍՀՄ–ում ***ձևականորեն առկա էր իշխանության տրոհանջատում***: ***Օրենսդիր իշխանությունը*** ներկայացնում էին ընտրովի խորհուրդները՝ սկսած ***ԽՍՀՄ Գերագույն խորհրդից*** մինչև գյուղական խորհուրդները: ***Գործադիր իշխանության կենտրոնական մարմինը Ժողովրդական կոմիսարների խորհուրդն էր՝ Ժողկոմխորհը***:

Ինչ վերաբերում էր դատական իշխանությանը, ապա այն ներկայացնում էին ***Գերագույն դատարանը*** և տարբեր մակարդակի ***ժողովրդական դատարանները***: ԽՍՀՄ Սահմանադրության մեջ խոսվում էր ժողովրդավարության և մարդկանց ազատությունների մասին: Սակայն դա հեռու էր իրականությունից:

***Իրական իշխանությունը պատկանում էր կոմունիստական կուսակցությանը***: 1920–ական թթ. ***ձևավորվեց*** կոմկուսի գլխավոր քարտուղար ***Ստալինի անձի պաշտամունքը***: Նրա և իր շրջապատի հրամանով էին կատարվում բոլոր գործերը: Կառավարման այս ձևը, ինչպես գիտեք, կոչվում է ամբողջատիրություն: ***Բռնությունները դարձան զանգվածային***. միլիոնավոր մարդիկ, անհիմն դատապարտվելով իբրև ***«ժողովրդի թշնամի»***, սպանվեցին կամ աքսորվեցին:

***ԽՍՀՄ–ում կառուցված հասարակարգը դժվար էր համարել իրական սոցիալիզմ***: Մի բան անկասկած էր. կարճ ժամկետում մեծ նյութական և մարդկային զոհողությունների գնով ***երկրում ստեղծվեց արդիական տր-***

Firefox https://ebooks.bonee.net/fumf/netl/



***դյունաբերություն***: Գյուղ ներմուծվեց նոր տեխնիկա: Տեղի ունեցավ ***մշակութային հեղափոխություն***, ստեղծվեց ***նոր՝ սոցիալիստական մշակույթ***:

Անկայուն էր ԽՍՀՄ–ի արտաքին դրությունը: Երկար տատանումներից հետո նա ֆաշիստական Գերմանիայի հետ գնաց համաձայնության: 1939 թ. օգոստոսի 23–ին ստորագրվեց խորհրդա–գերմանական փոխադարձ չհարձակման համաձայնագիրը:

### *Հարցեր և առաջադրանքներ*

1. Երբ է ձևավորվել ԽՍՀՄ–ը: Խորհրդային ո՞ր հանրապետություններն այն ստեղծեցին:
2. Ինչ սկզբունքով էր կազմավորվել ԽՍՀՄ–ը: Որքանո՞վ էր այդ սկզբունքը համապատասխանում իրականությանը:
3. Ինչ է «Ռազմական կոմունիզմը»:
4. Պարզաբանեք նոր տնտեսական քաղաքականության էությունը: Ինչ արդյունքներ այն ունեցավ:
5. Զարգացման ինչ ուղի բռնեց ԽՍՀՄ–ը 1928 թ. հետո:
6. Ինչ արդյունքներ տվեց երկրի արդյունաբերացումը և գյուղատնտեսության կոլեկտիվացումը:
7. Ինչպիսի՞ վարչակարգ և հասարակություն ստեղծվեց Խորհրդային Միությունում 1920–1930–ական թթ.:
8. Երբ է կնքվել խորհրդա–գերմանական չհարձակման համաձայնագիրը:

### *Քննարկման հարց*

Հնարավո՞ր էր արդյոք ավելի մեղմ քաղաքականությամբ նորաստեղծ ԽՍՀՄ–ը դուրս բերել ծանր վիճակից և դարձնել գերտերություն:

### *Նոր հասկացություններ, անուններ, արտահայտություններ*

ԽՍՀՄ, «Ռազմական կոմունիզմ», պարենմասնատրում, նեպ, պարենհարկ, կուլակ, Իոսիֆ Ստալին, արդյունաբերացում, կոլեկտիվացում, հնգամյա պլան, Ստալինի անձի պաշտամունք, «ժողովրդի թշնամի»

41 von 91 12.02.2021, 11:35

Firefox https://ebooks.bonee.net/fumf/netl/



# 7 ԱՐԵՎԵԼՔԻ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (ԹՈՒՐՔԻԱ, ԻՐԱՆ) ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄԸ

XX դարի սկզբին Ասիայի և Աֆրիկայի երկրների նկատմամբ շարունակվում էր կիրառվել «Արևելք» հասկացությունը: Դա հետամնացության հոմանիշ էր, որով շեշտվում էր վերջիններիս զիջելը զարգացման եվրոպական մակարդակին: Գովաբանվում էր ամենայն արևմտյանը:

## Քեմալական Թուրքիա

Առաջին աշխարհամարտում Օսմանյան կայսրությունը պարտություն կրեց: ***1918 թ. հոկտեմբերի 30-ին*** հունական ***Մուդրոսում կնքեց զինադադար*** և դուրս եկավ պատերազմից: Անգլիական, ֆրանսիական, իտալական և հունական զորքերը մտան նրա տարածք: Սուլթանական վարչակազմը համագործակցում էր հաղթողների հետ: Տերության փլուզումը և տարածքային կորուստները ազգայնական (շուտով դարձավ ազգայնամոլական) շարժման պատճառ դարձան: Այդ շարժումը սկսվեց 1919 թ. գեներալ ***Մուստաֆա Քեմալի*** գլխավորությամբ:

***1920 թ. ապրիլին Անկարայում հրավիրվեց Ազգային մեծ ժողով***: Կազմավորվեց կառավարություն, որը ***չէր ճանաչում Կ. Պոլսի սուլթանական կառավարությանը***: Ասվածը վերաբերում էր նաև վերջինիս կողմից կնքված Սևրի պայմանագրին, հատկապես նրա այն հոդվածներին, որոնցով նախատեսվում էր հայկական և քրդական անկախ պետությունների ստեղծումը:

***Քեմալականները 1920 թ. սեպտեմբերին պատերազմ պարտադրեցին Հայաստանի Հանրապետությանը և հասան հաղթանակի: Հաղթանակ տարան նաև հունական բանակի նկատմամբ***: Խուսանավելով Խորհրդային Ռուսաստանի և Անտանտի միջև, ներկայանալով մերթ իբրև հեղափոխական, մերթ բարենորոգիչ՝ Քեմալը կարողացավ պահպանել Թուրքիայի տիրապետությունը Արևելյան Թրակիայի, Փոքր Ասիայի և Արևմտյան Հա-

42 von 91 12.02.2021, 11:35



**ՄՈՒՍՏԱՖԱ ՔԵՄԱԼ**
**(1881–1938)**

Թուրք ռազմական և քաղաքական գործիչ: Աչքի է ընկել Առաջին աշխարհամարտում: Օսմանյան կայսրության անձնատվությունից հետո կողմնակիցների հետ սկսել է «ժողովրդական շարժումը»: 1920 թ. Անկարայում հրավիրել է խորհրդարան և կազմել կառավարություն: Հարաբերությունների մեջ է մտել Վ. Լենինի բոլշևիկյան կառավարության հետ՝ ստանալով զենք, հանդերձանք, ոսկի: Չի ճանաչել Սևրի (1920 թ.) պայմանագիրը: Պատերազմ է սկսել արևմուտքում՝ Հունաստանի, արևելքում՝ Հայաստանի դեմ: Կազմակերպել է հայերի և հույների կոտորածներ: Թուրքիան 1923 թ. հռչակել է հանրապետություն և դարձել առաջին նախագահը: Կատարել է արմատական բարեփոխություններ՝ հենվելով բանակի վրա: Հռչակվել է Աթաթուրք՝ թուրքերի հայր:

յաստանի նկատմամբ: Բռնագավթվեցին նաև Արևելյան Հայաստանի որոշ տարածքներ:

- *Այդ առումով վճռորոշ էր 1921 թվականը: Մարտի 16–ին Մոսկվայում Խորհրդային Ռուսաստանի և քեմալական Թուրքիայի միջև կնքվեց «Բարեկամության և եղբայրության պայմանագիր»: Բուն հայկական հողերը նվիրաբերվեցին Թուրքիային և Ադրբեջանին: Թուրքիային անցան ոչ միայն Արևմտյան Հայաստանը, այլև Կարսը, Սուրմալուն, Արդահանը: Նախիջևանն անցնում էր Խորհրդային Ադրբեջանի հովանավորության տակ: Այդ դրույթները հաստատվեցին նույն թվականի հոկտեմբերի 13–ին Կարսում կնքված պայմանագրում:*

***1923 թ. Լոզանում*** տերությունները Թուրքիայի հետ կնքեցին ***պայմանագիր***, որով ***ճանաչեցին նրա նոր սահմանները***:

Ներքին քաղաքականության մեջ Քեմալը նպատակ ուներ ստեղծելու կայուն և բարգավաճ պետություն: ***Նա և իր՝ ժողովրդական կուսակցությունն ընտրեցին զարգացման արևմտյան ուղին***:

Վերացվեց միապետությունը (սուլթանություն): ***1923 թ. Թուրքիան հռչակվեց հանրապետություն***: Անկարան դարձավ մայրաքաղաք, իսկ Քեմալն ընտրվեց նախագահ:

***Հետագա տասնամյակը Թուրքիայի համար դարձավ վերափոխումների ժամանակաշրջան***: Ընդունվեց հանրապետության սահմանադրությունը: Այն ամրագրեց քաղաքացիների հիմնարար իրավունքները՝ անձի և սեփականության անձեռնմխելիություն, խոսքի, մամուլի, խղճի ազատություն: Հատուկ ուշադրություն էր դարձվում պետության աշխարհիկ բնույթին: ***Իսլամական դատարանի փոխարեն մտցվեց աշխարհիկ դատարան***:

Փակվեցին հոգևոր դպրոցները, կրթությունը դարձավ աշխարհիկ: Արաբատառ այբուբենի փոխարեն մտցվեց լատինատառը: Մտցվեց եվրոպական տոմար: Քայլեր ձեռնարկվեցին բարձրագույն կրթության համակարգ ստեղծելու ուղղությամբ: Փոխվեց կենցաղը:

Firefox https://ebooks.bonee.net/fumf/netl/

Թուրքիայի քարտեզը 1920–1930-ական թթ.: Կարմիրով եզրագծված է Սևրի պայմանագրով Թուրքիայի համար նախատեսված տարածքը:

Մտցվեց քաղաքացիական ամուսնություն, եվրոպական հագուկապ:

***Տպավորիչ էին տնտեսական տեղաշարժերը***: Ազգայնացվեցին տնտեսության մի շարք կարևոր ճյուղեր: Վերացվեցին օտար ձեռնարկատերերին տրված մենաշնորհները: Ջարկ տրվեց թեթև արդյունաբերությանը՝ գործվածքի, ծխախոտի, կոշիկի, սննդի արտադրությանը և այլն: Քայլեր կատարվեցին նաև ծանր արդյունաբերություն ստեղծելու ուղղությամբ:

Ճիշտ է, Թուրքիայում ստեղծվել էր հանրապետություն, բայց այն ***ժողովրդավարական չէր***: Իշխանությունը կենտրոնացած էր Քեմալի և նրա շրջապատի ձեռքում, որոնց հենարանը բանակն էր: ***Նախագահի անձը հերոսացվում էր, նրան էին վերագրվում երկրի բոլոր հաջողությունները***: Խորհրդարանը նրան շնորհեց ***Աթաթուրք*** (թուրքերի հայր) պատվանունը:

Իշխանությունը լռեցնում էր ընդդիմադիր բոլոր ձայները: Փակվում էին անհաճո կուսակցությունները և հասարակական կազմակերպությունները: Հետապնդվում էին ազգային փոքրամասնությունները՝ հույները, հայերը, քրդերը, ասորիները:

## Իրանի արդիականացման միտումները

Առաջին աշխարհամարտից հետո Իրանը նույնպես անցավ արմատական տեղաշարժերի ժամանակաշրջան: Նախ 1918–1920 թթ. երկրում հաստատվեց Մեծ Բրիտանիայի վերահսկողությունը: Նրան հրապուրում էին իրանական նավթի հարուստ պաշարները: Սակայն բրի-

44 von 91 12.02.2021, 11:35

Իրանը 1920–1930–ական թթ.

տանացիները շուտով հեռացան: Նախընտրում էին Իրանը պահել իրենց ազդեցության տակ, քան թե կառավարել:

***1921 թ. Իրանում տեղի ունեցավ պետական հեղաշրջում***: Ստեղծվեց ազգային կառավարություն, որտեղ գերիշխում էր ռազմական նախարար ***Ռեզա խանը***: Նա լուծարեց հին վարչակարգը: Սակայն հանրապետություն չհռչակեց, ***պահպանեց միապետական կարգը***: Ինքն էլ ***1925 թ.*** խորհրդարանի կողմից ***ճանաչվեց շահ***: Այսպես ***Իրանում հիմնադրվեց Փահլավիների արքայատոհմը***:

Ռեզա Փահլավի շահը ստեղծեց ուժեղ ձեռքի իշխանություն, որի կենտրոնական օղակներն էին բանակը, դատարանը և արքունիքը: Դրանցում զգալի թիվ էին կազմում եվրոպական կրթություն ստացած պաշտոնյաները: Երկրում հաստատվեց կարգ և արդարություն:

***Իրանում նույնպես պետականացվեցին տնտեսության առաջատար ճյուղերը, առաջին հերթին՝ նավթարդյունաբերությունը***: Վերացվեցին օտարերկրյա մենաշնորհները: Քայլեր կատարվեցին՝ ստեղծելու սեփական

Firefox https://ebooks.bonee.net/fumf/netl/



թեթև ու ծանր արդյունաբերությունը: Թափ ստացավ ճանապարհաշինությունը:

Տպավորիչ էին կրթության բնագավառի տեղաշարժերը: ***Շահը սահմանափակեց հոգևորականության ազդեցությունը: Բացվեցին աշխարհիկ դպրոցներ և ուսումնարաններ***: Բացվեց ազգային համալսարանը: ***Արևմտյան գաղափարները սկսեցին թափանցել Իրան***:

Սակայն շահի իշխանությունը միահեծան էր: Ուժեղ էր ոստիկանական հսկողությունը: Այլախոհները հետապնդվում էին: Շահն ավելի հեռու գնաց. խորհրդարանին զրկեց իշխանությունից: Պատգամավորներն ընտրվում էին միայն «հուսալի» մարդկանցից:

***Ժամանակի ընթացքում Ռեզա շահի իշխանությունը թուլացավ***: Նրա հենարանը մնում էր բանակը: Արտաքին քաղաքականության մեջ նա գերմանամետ էր: Դա էլ ճակատագրական եղավ նրա համար: 1941 թ. ԽՍՀՄ–ի և Մեծ Բրիտանիայի ռազմական ճնշման ներքո նա հրաժարական տվեց հօգուտ իր որդու: Ավարտվեց Իրանի նորագույն պատմության մի կարևոր էջ. այն դրեց երկրի արդիականացման հիմքերը:

**ՌԵԶԱ ՓԱՀԼԱՎԻ**
**(1878–1944)**

### *Հարցեր և առաջադրանքներ*

1. Ո՞րն էր Արևելքի երկրների արդիականացման նպատակը:
2. Թուրքիան ե՞րբ հռչակվեց հանրապետություն: Ո՞վ ընտրվեց երկրի նախագահ: Ինչ գիտեք նրա մասին:
3. Գնահատե՛ք 1921 թ. մարտի 16–ի ռուս–թուրքական պայմանագիրը:
4. Ինչ փոփոխություններ տեղի ունեցան Թուրքիայի ներքին կյանքում:
5. Փաստերով հիմնավորե՛ք, որ թուրքական հանրապետությունը ժողովրդավարական չէր:
6. Փահլավիների արքայատունը ե՞րբ հաստատվեց Իրանում:
7. Արդիականացման ուղղությամբ ինչ քայլեր ձեռնարկվեցին Իրանում:

### *Գործնական աշխատանք*

Կատարե՛ք «Տրամագիր» վարժությունը՝ «Արդիականացումը Թուրքիայում և Իրանում 1920–1930–ական թթ.» թեմայով:

### *Նոր հասկացություններ, անուններ*

Մուստաֆա Քեմալ, քեմալական ազգայնամոլական շարժում, Աթաթուրք, Ռեզա շահ, Փահլավիների արքայատոհմ

46 von 91 12.02.2021, 11:35

Firefox https://ebooks.bonee.net/fumf/netl/



# 8 ԱՐԵՎԵԼՔԻ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (ՃԱՊՈՆԻԱ, ՉԻՆԱՍՏԱՆ, ՀՆԴԿԱՍՏԱՆ) ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄԸ

**ՅՈՍԻՀԻՏՈ**
**(1879–1926)**

1912–1926 թթ. Ճապոնիայի կայսրը: Հետագայում այդ տարիները ստացան Թայշո («Մեծ արդարություն») ժամանակաշրջան անունը:

## «Ծագող արևի» երկիրը

Նախորդ դասընթացից գիտեք, որ ***նոր դարաշրջանում Արևելքի երկրներից միայն Ճապոնիան լուծեց արդիականացման խնդիրը***: Դա սկսվել էր 1868 թ., երբ իշխանությունից հեռացվեց ավատատիրական ավագանին, և կատարվեցին արմատական բարեփոխումներ: Ճապոնիան խուսափեց ներքին ցնցումներից և օտար երկրների վերահսկողությունից:

Երկիրը դուրս եկավ զարգացման ուղի: ***Գտնվեց ավանդույթի ու նորամուծությունների համադրման ձևը՝ «Ճապոնական ոգի, եվրոպական գիտելիքներ»***:

Առաջին աշխարհամարտից հետո Ճապոնիան զարկ տվեց արդյունաբերության տարբեր ճյուղերին: ***Ներդրվում էին արևմտյան գիտության ու տեխնիկայի նվաճումները***: Տպավորիչ էին ձեռքբերումները ծանր արդյունաբերության մեջ՝ մետաղաձուլություն, նավաշինություն, մեքենաշինություն, երկաթուղիներ: Ներդրվում էին հեռագիրը, հեռախոսը, ռադիոն: ***1920-ական թթ. ճապոնական տնտեսությունը թռիչք ապրեց***՝ ավելացնելով համախառն արտադրանքը շուրջ 2 անգամ:

***Երկրում մտցվեց արևմտյան կրթական համակարգ՝ տարրական դպրոցից մինչև համալսարան***: Ձևավորվեց սեփական տեխնիկական մտավորականությունը՝ գիտնականներ, գյուտարարներ, ճարտարագետներ:

***Ճապոնիան սահմանադրական միապետություն էր***: Միտում կար սահմանափակելու կայսեր իշխանությունը: Այդ ուղղությամբ կատարվեցին քայլեր: Մտցվեց համընդհանուր ընտրական իրավունք: Այսուհետ վարչապետ էր դառնում խորհրդարանական մեծամասնության ղեկավարը: Նա էլ կազմում էր կառավարությունը:

***Տնտեսական մեծ ճգնաժամը չխնայեց Ճապոնիային***: Անկումը շոշափելի էր նաև այն պատճառով, որ երկիրը հարուստ չէր բնական պաշարներով: Դրանց մեծ մասը

47 von 91 12.02.2021, 11:35

Firefox https://ebooks.bonee.net/fumf/netl/

Ճապոնիան, Չինաստանը և Հնդկաստանը 1923–1939 թթ.

ներկրվում էր: Կառավարող շրջաններում սկսեց տիրապետել այն միտքը, թե խնդիրները պետք է լուծել ռազմական ճանապարհով: ***Երազում էին Հեռավոր Արևելքում ստեղծել ճապոնական հզոր կերություն***:

Ճապոնիայի ***առաջին զոհը դարձավ Չինաստանը***: 1931–1938 թթ. նա ռազմակալեց այդ երկրի արևելյան առավել զարգացած շրջանները: 1938–1939 թթ. նա փորձեց ծավալվել ի հաշիվ ԽՍՀՄ-ի և նրա դաշնակից Մոնղոլիայի, սակայն ստացավ հակահարված: Ուստի որոշեց ծավալվել Հարավարևելյան Ասիայում:

## Չինաստանը հավասար հնարավորությունների երկիր

Առաջին աշխարհամարտի ժամանակ ***Չինաստանը հարել էր Անտանտին: 1921–1922 թթ. Վաշինգտոնի վեհաժողովում*** նրա հիմնախնդիրը դարձավ հատուկ քննության առարկա: ***Կնքված պայմանագիրը հակասական էր***: Մի կողմից՝ ճանաչվում էր Չինաստանի ինքնիշխանությունը, մյուս կողմից՝ շեշտվում էին նրա տարածքում մեծ տերությունների հավասար հնարավորությունները

48 von 91 12.02.2021, 11:35

**ՉԱՆ ԿԱՅ ՇԻ (1887–1975)**

Չինաստանի քաղաքական և ռազմական գործիչ, գեներալիսիմուս: Մեծացել է առևտրականի ընտանիքում, ստացել է կոնֆուցիական կրթություն: Ավարտել է զինվորական դպրոց Ճապոնիայում: Մասնակցել է 1911–1912 թթ. չինական հեղափոխությանը: Համագործակցել է Սուն Յաթսենի հետ: 1923 թ. Սուն Յաթսենի կողմից որպես զինվորական պատգամավորության ղեկավար, ուղարկվել է Մոսկվա՝ ռազմական օգնություն տրամադրելու բանակցություններ վարելու համար: Արդեն այն ժամանակ նա անվստահությամբ էր վերաբերվում կոմունիստներին և նրանց «համաշխարհային հեղափոխության» պլաններին: 1925 թ.՝ Սուն Յաթսենի մահից հետո, Չան Կայ Շին իր ձեռքում կենտրոնացրեց երկրի քաղաքական և զինվորական ղեկավարությունը, դարձավ Չինաստանի նախագահ: Քաղաքացիական պատերազմում (1946–1949) պարտվելուց հետո իր կողմնակիցներով հաստատվեց Թայվանում, ուր ստեղծեց չինական երկրորդ պետությունը:

ները: ***Այսինքն՝ Չինաստանը բաց էր բոլորի առաջ՝*** ներդրումներ կատարելու, հումք արտահանելու, էժան աշխատուժն օգտագործելու համար:

1920-ական թթ. սկզբին Չինաստանը պառակտված էր: ***Հյուսիսում Պեկինի կառավարությունն էր***, որը համագործակցում էր մեծ տերությունների հետ: ***Հարավում*** ստեղծվել էր ***մեկ այլ կառավարություն՝ սոցիալիստ Սուն Յաթսենի*** գլխավորությամբ: Նա հենվում էր ***Չինաստանի ազգային կուսակցության (Գոմինդան)*** վրա, որը նպատակ ուներ ապահովելու երկրի ինքնիշխան ապագան:

***1925–1927 թթ. Չինաստանում ծավալվեց հեղափոխություն***: Այն միավորում էր տարբեր հոսանքներ՝ ***Գոմինդան, համայնավարներ (կոմունիստներ), ազգայնականներ***: Ստեղծվեց ***ազգային կառավարություն՝ գեներալ Չան Կայշիի գլխավորությամբ***: Երկիրը միավորվեց:

Սակայն Չան Կայշին հեռացավ համայնավարներից և երկիրը տարավ ազատ ձեռներեցության ու շուկայական հարաբերությունների ճանապարհով: Բացի ավանդական թեթև արդյունաբերությունից՝ սկսեց զարգացնել ծանր արդյունաբերությունը: Աշակվեց աշխատանքային օրենսդրություն, որը կարգավորում էր ձեռներեցների և աշխատավորների հարաբերությունները: Քայլեր կատարվեցին բարելավելու աշխատանքի պայմանները, բարձրացնելու աշխատավարձը:

***1930-ական թթ. խափփվեց հարաբերական կայունությունը***: Ինչպես նշել ենք, երկրի արևելյան զարգացած շրջանները գրավեցին ճապոնացիները: Իսկ արևմուտքում ապստամբություն էին բարձրացրել համայնավարները: Ճիշտ է՝ ***Գոմինդանը և համայնավարները համաձայնության եկան ճապոնացիների դեմ պայքարելու համար***, սակայն դրանից իրավիճակն էականորեն չփոխվեց: Չինաստանում խորանում էր տնտեսական քայքայումը: Նրա արդիականացման գործընթացն ընդհատվեց:

## Հնդկաստանը բրիտանական կառավարման ներքո

Գիտենք, որ Հնդկաստանը բրիտանական գաղութ էր: Մեծ Բրիտանիան ձգտում էր ամեն կերպ այս երկրում

Firefox https://ebooks.bonee.net/fumf/netl/



պահպանելու իր իշխանությունը: Մինչդեռ ***հնդիկների շրջանում հասունանում էր գաղութային լուծը թոթափելու մղումը***:

Առաջին աշխարհամարտի տարիներին ***Հնդկաստանը*** թե՛ զինվորներով, թե՛ նյութական միջոցներով օժանդակել էր Մեծ Բրիտանիային, ուստի ***ակնկալում էր գաղութային լծի թուլացում և ապրիճանական անկախացում***: Ի պատասխան՝ բրիտանացիները 1919–1921 թթ. սկսեցին բռնություններ: Տեղի ունեցան արյունալի ընդհարումներ, որոնց զոհ դարձան հազարավոր մարդիկ:

***1930-ական թթ. ազատագրական պայքարը մտավ նոր շրջափուլ***: Նրա ***առաջնորդը դարձավ Մահաթմա Գանդին***:

Գանդիի հենարանը ***Հնդկաստանի ազգային կոնգրես*** կուսակցությունն էր, որը ձգտում էր միավորելու ողջ ազգը: Դրան մեծապես նպաստում էր առաջնորդի ուսմունքը: Այն ժխտում էր հասարակության տարբեր դասերի հակամարտությունը: ***Գանդիի համոզմամբ՝ հնդիկները պետք է համագործակցեն՝ արդարության և անկախության հասնելու համար***:

Ինչ վերաբերում է հակաբրիտանական պայքարին, ապա Գանդին վստահ էր, որ դա պետք է ընթանա միայն խաղաղ ճանապարհով: Նա ***մշակեց «բազմափուլ պայքարի» մարտավարությունը***: Առաջին փուլում նախատեսվում էր հրաժարվել անգլիական ապրանքներից, կառավարական և կրթական հաստատություններից: Երկրորդ փուլում պետք է հրաժարվեին հարկերի և տուրքերի վճարումից:



**ՄԱՀԱԹՄԱ ԳԱՆԴԻ**
**(1869–1948)**

Հնդկական ազգային-ազատագրական շարժման հեղինակավոր ղեկավարներից, Հնդկաստանի ազգային կոնգրես կուսակցության առաջնորդը և գաղափարախոսը: Ապրել է Հարավային Աֆրիկայում, մասնակցել բրիտանական գաղութատիրության դեմ պայքարին:
1915 թ. Հնդկաստան վերադառնալով՝ ղեկավարել է ազգային-ազատագրական շարժումը: Անգլիացիների դեմ կիրառել է առանց բռնության (քաղաքացիական անհնազանդություն) պայքարի մեթոդը: Հնդկաստանի բաժանումից հետո (Հնդկաստան և Պակիստան)՝ կրոնական երկպառակության ժամանակ՝ 1948 թ., սպանվել է ահաբեկչի կողմից:

Գանդին համախոհների հետ

4 Համաշխ. պատմություն. Նորագույն շրջան — 9–1

50 von 91 12.02.2021, 11:35

***Գանդիին հաջողվեց համախմբել ազգը՝*** անկախ մարդկանց ունեցվածքային և կրոնական տարբերություններից: Դա մեծ նվաճում էր, որը ճանապարհ հարթեց դեպի անկախություն՝ նպատակ, որին Հնդկաստանը հասավ Երկրորդ աշխարհամարտից հետո:

### *Հարցեր և առաջադրանքներ*

1. Հիշե՛ք, թե Ճապոնիայում երբ է իրականացվել արդիականացումը:
2. Ցո՛ւյց տվեք արդիականացման ճապոնական ուղու առանձնահատկությունները:
3. Ձեր կարծիքով 1930-ական թթ. ինչո՞ւ Ճապոնիան ընթացավ ռազմամոլական ճանապարհով:
4. Ի՞նչ որոշում կայացրեց Վաշինգտոնի վեհաժողովը Չինաստանի վերաբերյալ:
5. Մեկնաբանե՛ք «հավասար հնարավորությունների երկիր» արտահայտությունը:
6. Ե՞րբ ավարտվեց Չինաստանի միավորումը:
7. Ի՞նչ քայլեր ձեռնարկեց Չան Կայշիի կառավարությունը երկրի արդիականացման ուղղությամբ:
8. Ո՞վ էր գլխավորում հնդիկների ազգային-ազատագրական պայքարը 1920-1930-ական թթ.:
9. Ներկայացրե՛ք Մ. Գանդիի ուսմունքի հիմնական սկզբունքները:

### *Նոր հասկացություններ, անուններ, արտահայտություններ*

«Ճապոնական ոգի, եվրոպական գիտելիքներ», «հավասար հնարավորությունների երկիր», Գոմինդան, Չան Կայշի, Մահաթմա Գանդի

Firefox https://ebooks.bonee.net/fumf/netl/



# 9 ՄՇԱԿՈՒՅԹԸ 1920–1930–ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Ներքին հակասություններով հարուստ այս ժամանակաշրջանն աչքի ընկավ իր մեծ ձեռքբերումներով գիտության և մշակույթի ամենատարբեր բնագավառներում:

## Գիտությունը

Գիտությունը ***զարգանում էր*** ինչպես ***հիմնարար***, այնպես էլ ***հումանիտար ուղղություններով***: Եվ նրա արդյունքներն ավելի արագ ու անմիջականորեն էին ներդրվում՝ բարեփոխելով մարդկանց կյանքն ու կենցաղը:

Գիտնականները շարունակում էին հետազոտել Տիեզերքի և նրա մանրագույն մասնիկների կառուցվածքը: Այս բարդ ու դժվարին գործում համագործակցում էին տարբեր երկրների գիտնականներ: ***Ալբերտ Այնշտայնի*** հարաբերականության տեսությունը բացահայտեց նյութի զանգվածի, շարժման և էներգիայի նոր ըմբռնումներ: Լայնորեն ծավալվեցին ատոմի կառուցվածքի տեսական և լաբորատոր հետազոտությունները: Այդ առումով մեծ կարևորություն ունեին նաև մաթեմատիկայի նվաճումները:

Ակնառու արդյունքներ գրանցվեցին ***գենետիկայի*** բնագավառում: Այս գիտության նպատակը բույսերի և կենդանիների ժառանգականության հիմնախնդիրները և օրինաչափությունները բացահայտելն է: Համադրելով գիտափորձերի տվյալները՝ ռուս ***Նիկոլայ Վավիլովը*** նոր մոտեցումներ մշակեց գենի կառուցվածքի և գործառույթների մասին:

Ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության տարբեր բնագավառներում կատարվեցին հայտնագործություններ, որոնց շնորհիվ ստեղծվեցին նոր նյութեր, սարքավորումներ, էներգիայի աղբյուրներ և այլն: Դրանք էա-

**ՆԻԿՈԼԱՅ ՎԱՎԻԼՈՎ (1887–1943)**

Խորհրդային խոշոր գիտնական, ակադեմիկոս, գենետիկ, բուսաբան, աշխարհագրագետ: Գիտարշավների հիման վրա պարզել է աշխարհում մշակովի բույսերի առաջացման յոթ կենտրոն: Դրանցից մեկը նա համարում էր Հայաստանը: Ստալինյան բռնաճնշումների ժամանակ ձերբակալվել է և մահապատժի ենթարկվել իբրև «ժողովրդի թշնամի»:

52 von 91 12.02.2021, 11:35

Firefox https://ebooks.bonee.net/fumf/netl/

ՎԵՐՆԵՐ ԲՐԱՈՒՆ
(1912–1977)



ՎԼԱԴԻՄԻՐ ԶՎՈՐԻԿԻՆ
(1888–1982)

Ամերիկյան (ազգությամբ՝ ռուս) մեծ գյուտարար: Ժամանակակից էլեկտրոնային հեռուստատեսության ստեղծողը: «Ես մի հրեշ եմ ստեղծել, որի միջոցով հնարավոր է ամբողջ մարդկության ուղեղները «լվանալ»»,— դառնությամբ ասում էր նա կյանքի վերջին շրջանում՝ նկատի ունենալով իր գյուտի ազդեցության ուժը հասարակության վրա: «Հեռուստացույցի իմ ստեղծած լավագույն մասը նրա անջատիչն է»:

կանորեն փոխեցին մարդկանց առտնին կյանքն ու կենցաղը:

Իրագործվեց ***ուրանի միջուկի պրոհումը***, որի ժամանակ անջատվում է մեծ քանակի էներգիա: Այն մարդկությանը տվեց զարգացման նոր հեռանկարներ: Սակայն մեծ է նաև դրա ավերիչ ուժը:

Քիմիկոսները ***արհեստական համադրության (սինթեզ)*** ճանապարհով ստացան նոր նյութեր՝ պոլիմերներ: Դրանք չկան բնության մեջ, սակայն խիստ անհրաժեշտ են արդի արդյունաբերության համար՝ ***արհեստական կաուչուկ, պոլիէթիլեն, սիլիկոն*** և այլն:

Այդ նույն ճանապարհով մեծ հաջողությունների հասավ ***դեղագործությունը***: Ստեղծվեցին վիտամիններ և հակաբիոտիկներ, որոնց շնորհիվ մարդկությունը փրկվեց նախկինում անբուժելի համարվող հիվանդություններից:

Ճարտարագետների աշխատանքի շնորհիվ ստեղծվեցին նորագույն ***ավտոմեքենաներ, ինքնաթիռներ*** և ***նավեր***, որոնք աչքի էին ընկնում մեծ արագությամբ և հեռահատությամբ: Աշխուժացան կապերը աշխարհի տարբեր ծագերի միջև: Արդեն ավանդական դարձած ներքին այրման շարժիչների կողքին ***ի հայտ եկան հրթիռային շարժիչները***՝ ապահովելով անհամեմատ ավելի մեծ արագություն: Այդ գործում անգնահատելի էր գերմանացի երիտասարդ ճարտարագետ ***Վերներ Բրաունի*** ավանդը:

Կատարելագործվեցին հեռահաղորդակցության միջոցները: ***Ռադիոն դարձավ մարդկանց կենցաղի անբաժան մասը***: Սկսեց տարածում գտնել հեռուստատեսությունը:

1920–1930–ական թթ. բուռն զարգացում ապրեց ***հոգեբանությունը***: Մի գիտություն, որի խնդիրն է ուսումնասիրել մարդու ներաշխարհը՝ զգայությունները, հույզերը, մտքերը: Այս առումով մեծ էր ավստրիացի գիտնական ***Զիգմունդ Ֆրոյդի*** ներդրումը:

Առաջընթաց արձանագրվեց ***պատմագիտության*** մեջ: Նորովի ուսումնասիրվեցին մարդկային պատմության տարբեր դարաշրջաններ: Զարգացավ նաև տնտեսագիտությունը: Համաշխարհային տնտեսական ճգնաժամի

53 von 91 12.02.2021, 11:35

Firefox https://ebooks.bonee.net/fumf/netl/



պայմաններում սկսեցին մշակվել տեսություններ, որոնք բացահայտում էին դրա հաղթահարման ուղիները:

## Գրականությունը և արվեստը

Միջպատերազմյան շրջանի գրականության և արվեստի տարբեր ճյուղերն արտահայտում էին պատերազմի, հեղափոխությունների ու տնտեսական ճգնաժամի թոհուբոհի միջով անցած մարդու ներաշխարհը:

**Գրականության** մեջ այդ մարդու կերպարը տարբեր դիտանկյուններից արտացոլել են ժամանակաշրջանի խոշորագույն գրողները: Տարբեր էին նրանց համոզմունքները և գրելաոճը, բայց նրանց միավորում էր կյանքի խոր ըմբռնումը՝ ֆրանսիացի ***Մնապոլ Ֆրանս***, գերմանացի ***Թոմաս Ման***, ռուս ***Մաքսիմ Գորկի*** և այլք:

Նոր երևույթ էր ամերիկյան գրականությունը՝ իր աննկուն, կյանքի բոլոր փորձություններին դիմակայող հերոսներով: Նրանք առավել ցայտուն պատկերված են ***Էռնեստ Հեմինգուեյի*** վեպերում և պատմվածքներում:

- *Հայ գրականությունը համաքայլ էր համաշխարհային գրական միտումներին: Դրանք լավագույնս դրսևորվեցին Ե. Չարենցի, Ա. Բակունցի, Շ. Շահնուրի, Գ. Մահարու ստեղծագործություններում:*

**Երաժշտության** մեջ նույնպես ակնառու էին խոշոր ձեռքբերումները: Դասական ուղղության խոշորագույն ներկայացուցիչներն էին ֆրանսիացի երգահան ***Մորիս Ռավելը***, ամերիկացի ***Ջորջ Գերշվինը***, ռուս ***Սերգեյ Պրոկոֆևը***: Նրանց սիմֆոնիաները, օպերաները և բալետներն ասվածի լավագույն վկայությունն էին:

Զարգանում էին նաև երաժշտական նոր ուղղություններ: Խոսքն առաջին հերթին ***ջազի*** մասին է: Այն ձևավորվել էր ամերիկյան սևամորթների շրջանում և իր խորաթափանց անմիջականության շնորհիվ ստացել մեծ տարածում:

- *Այս տարիներին Երևանում բացվեցին կոնսերվատորիա, ֆիլհարմոնիա, օպերային թատրոն: Ստեղծագոր-*



**ԷՌՆԵՍՏ ՀԵՄԻՆԳՈՒԵՅ**
**(1899–1961)**

Ամերիկյան մեծագույն գրողներից մեկը: Նաև զինվոր, ճանապարհորդ և լրագրող էր: Ստեղծագործությունները մեծապես ազդել են արդի գրականության վրա: Հայտնի է իր կարճ պատմվածքներով և վեպերով՝ «Եվ ծագում է արևը», «Հրաժեշտ զենքին», «Ծերունին և ծովը»: Արժանացել է Նոբելյան մրցանակի:

54 von 91 12.02.2021, 11:35

*ծում էին խոշոր երգահաններ Ա. Սպենդիարյանը և Ա. Խաչատրյանը:*

**ՉԱՐԼԶ ՉԱՊԼԻՆ**
**(1889–1977)**

Ամերիկյան կինոռեժիսոր, դերասան: Առաջին անգամ հայտնվել է անպաշտպան, միայնակ «փոքր մարդու» կերպարով: 1922 թ. Չապլինը հիմնել է սեփական կինոընկերությունը: Նկարահանել է բազում կինոնկարներ, որոնք համարվում են համաշխարհային կինոյի գյուխգործոցներ՝ «Թափառաշրջիկը», «Մեծ քաղաքի լույսերը», «Մանչուկը», «Բռնապետը» և այլն:

**Թատրոնը** մեծ հաջողությունների հասավ: Այն աչքի էր ընկնում բազմազանությամբ: Սակայն տարբեր ազգությունների և ուղղությունների թատերագիրները, դերուսույցներն ու դերասանները լրացնում էին միմյանց՝ կերտելով մարդկային խորաթափանց կերպարներ: Ի հայտ եկան թատրոնի ականավոր բարեփոխիչներ՝ ռուս ***Կոնստանտին Ստանիսլավսկին***, գերմանացի ***Բերտոլդ Բրեխտը***:

**Կինոարվեստն** ունեցավ աննախադեպ ձեռքբերումներ: Նախապես կինոն համր էր, հետագայում դարձավ հնչյունային: Ստեղծվեցին կինոստուդիաներ, որտեղ աշխատում էին տաղանդավոր դերուսույցներ և դերասաններ: Նրանցից էր ***Չարլզ Չապլինը***, որին համարում են բոլոր ժամանակների խոշորագույն կինոգործիչը:

- *1920–1930–ական թթ. պետական թատրոններ բացվեցին Երևանում և շատ շրջաններում: Ստեղծագործում էին հայ բեմի վարպետները՝ Հ. Աբելյանը, Վ. Փափազյանը, Հ. Ներսիսյանը և այլք: Հ. Բեկնազարյանի ջանքերով ստեղծվեց «Հայֆիլմ» կինոստուդիան, որը 1925 թ. թողարկեց իր առաջին ֆիլմը:*

Դրվագ Չ. Չապլինի «Մանչուկը» ֆիլմից

**Գեղանկարչության** հիմնական խնդիրը դարձավ մարդու և շրջակա աշխարհի խորքային բովանդակության բացահայտումը: Այն հեռացավ նախորդ դարաշրջանի մոտեցումներից. այլևս չէր ձգտում ճշգրտորեն վերարտադրելու իրերի ձևերը և համամասնությունները: Փոփոխում էր դրանք՝ անցում կատարելով արտաքին նմանությունից դեպի բովանդակային նմանություն: Այս սկզբունքով են ստեղծվել ժամանակի խոշորագույն գեղանկարիչների կտավները՝ ֆրանսիացի ***Անրի Մատիս***, իսպանացիներ ***Պաբլո Պիկասո***, ***Սալվադոր Դալի*** և այլք:

- *Հայ գեղանկարչությունը ակնառու առաջընթաց ունեցավ: Երևանում բացվեցին կերպարվեստի դպրոցը, իսկ ապա՝ պատկերասրահը: Ստեղծագործում էին մեծա-*

Պաբլո Պիկասոյի հայտնի «Գերնիկա» գործը: Այն բողոք է ֆաշիզմի, բռնության և պատերազմի դեմ:

*համբավ արվեստագետներ Մ. Սարյանը և Հ. Կոջոյանը:*

Նոր միտումները մեծապես ազդեցին ճարտարապետական մտքի վրա՝ շինարարական նոր նյութեր (երկաթբետոն, ապակի), բարձրահարկ շենքեր, լայն փողոցներ, հանգստի գոտիներ և այլն: Լավագույն ***ճարտարապետները նոր ձևերը համադրում էին ավանդական ձևերի հետ***:

### *Հարցեր և առաջադրանքներ*

1. Ինչ հաջողություններ արձանագրվեցին գիտության տարբեր ճյուղերում: Ովքե՞ր աչքի ընկան և ո՞ր բնագավառում:
2. Ինչ գիտական հայտնագործություններ կատարվեցին: Ինչպե՞ս դրանք փոխեցին մարդկանց կենցաղը:
3. Հումանիտար գիտությունների ո՞ր ճյուղը սկսեց բուռն զարգանալ: Ինչ էր այն ուսումնասիրում:
4. Ինչ հեղինակներ և նվաճումներ կարող եք նշել գրականության, երաժշտության, թատրոնի, կինոյի, գեղանկարչության բնագավառներում:
5. Հակիրճ ներկայացրե՛ք մշակույթի բնագավառի Ձեր նախընտրած հեղինակին և նրա թողած ժառանգությունը:

### *Նոր հասկացություններ, անուններ*

Նիկոլայ Վավիլով, ուրանի միջուկի տրոհում, արհեստական կաուչուկ, պոլիմերներ, պոլիէթիլեն, սիլիկոն, Վերներ Բրաուն, Անատոլ Ֆրանս, Մաքսիմ Գորկի, Սերգեյ Պրոկոֆև, ջազ, Չարլզ Չապլին, Անրի Մատիս, Պաբլո Պիկասո, Սալվադոր Դալի

Firefox https://ebooks.bonee.net/fumf/netl/



# 10 ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1920–1930–ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

## Միջազգային հարաբերությունները 1920–ական թթ.

Արդեն ասվել է, որ Գերմանիան հաղթողներին վճարելու էր ***ռազմատուգանք (ռեպարացիա)***: Դրա մեծագույն մասը պետք է տրվեր Ֆրանսիային: Գերմանիայի կողմից վճարումները ուշացնելու պատճառով ***1923 թ. ֆրանս–բելգիական զորքերը ռազմակալեցին*** գերմանական արդյունաբերական ***Ռուր շրջանը***: ***Եվրոպայում ճգնաժամ առաջացավ***: Դեպքերի նման զարգացումից դժգոհ էին Անգլիան ու ԱՄՆ–ը: Հաջորդ տարի Լոնդոնում գումարված կոնֆերանսի որոշմամբ ֆրանս–բելգիական զորքերը դուրս բերվեցին Ռուրից: Իսկ ռեպարացիոն վճարումների հետ կապված՝ ***ընդունվեց ամերիկյան բանկիր Դաուեսի պլանը***: ԱՄՆ–ի տրամադրած վարկերի օգնությամբ մի քանի տարի Գերմանիան կանոնավոր մուծումներ էր կատարում: ***1926 թ. Գերմանիան դարձավ Ազգերի լիգայի անդամ***:

Եվրոպայում խաղաղությունը պահպանելուն էր միտված ***1928 թ. Փարիզում*** 15 երկրների կողմից ***հոչակագրի*** ստորագրումը: Պետությունները պարտավորվում էին

Ազգերի լիգայի նիստերի դահլիճում

57 von 91 12.02.2021, 11:35

բոլոր խնդիրները լուծել խաղաղ բանակցությունների միջոցով:

***Աշխարհում միակ սոցիալիստական երկիրը՝ ԽՍՀՄ-ը***, հայտնվել էր դժվարին դրության մեջ: Հաղթող տերությունները նրանից պահանջում էին վճարել Ռուսաստանի նախորդ կառավարությունների պարտքերը, բայց անհաջող: Միաժամանակ բոլշևիկների համաշխարհային հեղափոխության ծրագրից վախենալով՝ Արևմուտքի երկրները վարում էին խորհրդային պետության միջազգային մեկուսացման և շրջափակման քաղաքականություն: Մեկուսացումից դուրս գալու նպատակով խորհրդային պետությունը սկսեց երկկողմ հարաբերություններ հաստատել Արևելքի երկրների հետ՝ Թուրքիա, Իրան, Աֆղանստան: Եվրոպական առաջատար երկրների վերաբերմունքը շուտով փոխվեց, և ***1924 թ.*** Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, Իտալիան և այլ երկրներ մեկը մյուսի հետևից ***պաշտոնապես ճանաչեցին ԽՍՀՄ-ը***: Սակայն Խորհրդային Միությունը Ազգերի լիգայի անդամ դարձավ միայն տասը տարի անց:

## Վերսալ-վաշինգտոնյան համակարգի փլուզումը

***Տնտեսական մեծ ճգնաժամի պատճառով աշխարհում խաթարվեցին միջազգային հարաբերությունները***: Յուրաքանչյուր երկիր ձգտում էր միայնակ հաղթահարելու դժվարությունները:

Նրանցից ոմանք, օրինակ՝ Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, ԱՄՆ-ը, հակված էին ապավինելու սեփական նյութական և մարդկային հնարավորություններին, ուստի մաքսային տուրքերով մեկուսացան այլ երկրներից: Երկրների մեկ այլ խումբ, ընդհակառակը, ձգտում էր դժվարությունները հաղթահարել արտաքին նվաճումների գնով: Դրանցից էին Գերմանիան, Իտալիան և Ճապոնիան:

***Գերմանիան միակողմանի հրաժարվեց Վերսալյան պայմանագրից***: Նա դադարեցրեց ռազմատուգանքի վճարումը, իսկ ***1933 թ. դուրս եկավ Ազգերի լիգայից***: Վերականգնեց պարտադիր զինվորական ծառայությունը,

**ՉԱՐԼԶ ԴԱՈՒԵՍ (1865–1951)**

ԱՄՆ պետական և ռազմական գործիչ, գործարար, Առաջին աշխարհամարտի մասնակից, բրիգադային գեներալ: 1925–1929 թթ. ԱՄՆ-ի փոխնախագահն էր: 1925 թ. արժանացել է խաղաղության Նոբելյան մրցանակի:
Գլխավորել է Գերմանիայի ռեպարացիաների վճարման պլանը մշակող փորձագետների խումբը: Պլանը հաստատվել է 1924 թ. ամռանը, հայտնի է Դաուեսի պլան անունով: Ըստ դրա՝ կրճատվեց ռեպարացիոն գումարի չափը: Հինգ տարվա ընթացքում Գերմանիան ստացավ 29 մլրդ մարկ վարկ, առավելապես՝ ԱՄՆ-ից: Պլանի շնորհիվ Գերմանիայի տնտեսությունը վերականգնվեց, երկիրը սկսեց կանոնավոր վճարումներ անել հաղթող տերություններին:

Firefox https://ebooks.bonee.net/fumf/netl/



սկսեց ցամաքային, օդային և ծովային ռազմական ուժերի աննախադեպ ծավալումը:

Օգտվելով Ազգերի լիգայի անվճռականությունից՝ ***Գերմանիան քայլեր ձեռնարկեց իր «կորցրած հողերը» վերադարձնելու ուղղությամբ***: Նա վերականգնեց իր իրավունքները Հռենոսի երկրամասի նկատմամբ, իսկ 1938 թ. բռնակցեց Ավստրիան:

Նվաճողական քաղաքականություն էր վարում նաև ***Իտալիան***, որը ***1936 թ. գրավեց Եթովպիան***, իսկ ապա նաև ***Ալբանիան***: Հեռավոր Արևելքում նույն դերակատարությամբ հանդես էր գալիս ***Ճապոնիան***:

***Իտալիան և Ճապոնիան նույնպես դուրս էին եկել Ազգերի լիգայից***: Այս երեք ռազմատենչ երկրների միջև կնքվեցին մի շարք պայմանագրեր, որոնց հետևանքով ***1936–1940 թթ. ձևավորվեց «Բեռլին–Հռոմ–Տոկիո» ռազմատենչ միությունը***: Այն ձգտում էր աշխարհի վերաբաժանման:

## Խաղաղեցման քաղաքականության ձախողումը

Նշված իրադարձությունները սթափ գնահատականի չարժանացան: Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան մտածում էին, թե Գերմանիան հեռու է արդիական բանակ ունենալուց: Հավատացած էին, թե նրան կարելի է հանգստացնել մասնակի զիջումներով: ***Այս թյուր մոտեցման բարձրակետը դարձավ Մյունխենյան գործարքը***: Էությունը հետևյալն էր. Գերմանիան պահանջում էր «իրեն վերադարձնել» Չեխոսլովակիայի գերմա-

Ավստրիայի մայրաքաղաք Վիեննայի բնակիչները ողջունում են Ա. Հիտլերի այցը:

59 von 91 12.02.2021, 11:35

Firefox https://ebooks.bonee.net/fumf/netl/

Մյունխենյան գործարքի ստորագրումը. 1938 թ. սեպտեմբերի 30

նաբնակ ***Սուդետի մարզը***: Դա տեղիք տվեց հարաբերությունների լարմանը ոչ միայն Գերմանիայի և Չեխոսլովակիայի միջև, այլև ողջ Եվրոպայում:

***1938 թ. սեպտեմբերին Մյունխենում*** տեղի ունեցավ համաժողով, որին մասնակցում էին Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, Իտալիան և Գերմանիան: ***Որոշում կայացվեց մարզը հանձնել Գերմանիային՝ «հանուն կայուն խաղաղության»***: Սակայն դա միայն գրգռեց Գերմանիայի ախորժակը: 1939 թ. նա բռնազավթեց ողջ Չեխոսլովակիան, իսկ հետո տարածքային պահանջներ ներկայացրեց Լեհաստանին:

Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան մշակել էին մեկ այլ ծրագիր, որը նպատակ ուներ Եվրոպայում ստեղծելու միասնական անվտանգության համակարգ: Դրա մեջ պետք է ընդգրկվեին ինչպես Արևմտյան, այնպես էլ Արևելյան Եվրոպայի երկրները, այդ թվում նաև

**Մյունխենյան համաձայնագրի «մեծարումը»**

Մեծ Բրիտանիայի վարչապետ Նևիլ Չեմբեռլենը, Մյունխենյան համաձայնագիրը ստորագրելուց հետո վերադառնալով Լոնդոն, հայտարարեց. «Ես ձեզ բերել եմ խաղաղություն մի ամբողջ սերնդի համար»: ԱՄՆ-ի նախագահ Ֆրանկլին Ռուզվելտը հեռագիր ուղարկեց Չեմբեռլենին ընդամենը մեկ բառով. «Կեցցես»: Ֆրանսիայում ԱՄՆ-ի դեսպան Վ. Բուլիտը, իմանալով, որ համաձայնագիրը ստորագրվել է, երջանկությունից հեկեկաց: Արտասուքից թաց աչքերով նա ներկայացավ Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար Ժ. Բոնեին՝ տանելով ծաղիկների հսկայական փունջ:

60 von 91 12.02.2021, 11:35

Firefox https://ebooks.bonee.net/fumf/netl/

Խորհրդա-գերմանական փոխադարձ չհարձակման համաձայնագրի ստորագրումը 1939 թ. օգոստոսի 23-ին Մոսկվայում. ԽՍՀՄ արտաքին գործերի ժողկոմիսար Վյաչեսլավ Մոլոտովը (նստած) և Գերմանիայի արտաքին գործերի նախարար Իոահիմ ֆոն Ռիբենտրոպը (անմիջապես նրա հետևում կանգնած)

***Խորհրդային Միությունը***: Նրանց նախաձեռնությամբ վերջինս ***1934 թ. դարձավ Ազգերի լիգայի անդամ***: Սակայն ծրագրին վիճակված չէր դառնալ իրականություն: Խիստ զգալի էր պետությունների միջև փոխադարձ անվստահությունը:

ԽՍՀՄ ղեկավար Ստալինը այն համոզմանն էր, թե Արևմուտքը ցանկանում է Գերմանիայի հարվածն ուղղել իր դեմ: Ուստի գնաց Գերմանիայի հետ համաձայնության: ***1939 թ. օգոստոսի 23-ին ստորագրվեց խորհրդա-գերմանական փոխադարձ չհարձակման համաձայնագիրը***: Այն ***ուներ նաև գաղտնի կետեր***, որոնց համաձայն՝ ***Արևելյան Եվրոպան բաժանվում էր Գերմանիայի և ԽՍՀՄ-ի ազդեցության ոլորտների***: Մասնավորապես ԽՍՀՄ-ին էին անցնում Արևելյան Լեհաստանը (Արևմտյան Ուկրաինա և Արևմտյան Բելոռուսիա), Լիտվան, Լատվիան, Էստոնիան և Մոլդովան:

Խորհրդային Միությունը ստացավ ժամանակավոր ապահովություն: Գերմանիան իր նվաճողական եռանդն ուղղեց դեպի արևմուտք, իսկ Ճապոնիան առանց իր դաշնակցի օժանդակության խորհրդային երկրի դեմ պատերազմի չգնաց: Սակայն Գերմանիա-ԽՍՀՄ բախումը դեռ առջևում էր:

## ԱՄՆ-ի ինքնամեկուսացումը

Մինչ տեղի էին ունենում այս իրադարձությունները, ***ԱՄՆ-ը վարում էր ինքնամեկուսացման քաղաքականություն***: Դրա հետևորդները խիստ ազդեցիկ էին Ֆ. Ռուզվելտի կառավարությունում: Նրանք հավատացած էին, որ հակասությունները Եվրոպայում վաղ թե ուշ հանգեցնելու են պատերազմի, և ԱՄՆ-ը պետք է օգուտ քաղի դրանից՝ առևտուր անելով պատերազմող բոլոր երկրների հետ: Իսկ վերջիններիս թուլանալուց հետո նա պետք է մտնի պատերազմի մեջ ու բոլորին թելադրի իր պայմանները:

Լեհաստանի բաժանումը Գերմանիայի և ԽՍՀՄ-ի միջև 1939 թ.

Այսպես՝ 1930-ական թթ. ***չհաջողվեց լուծել մեծ պետությունների միջև հակասությունները: Աշխարհը հայտնվեց նոր աշխարհամարտի շեմին***:

61 von 91 12.02.2021, 11:35

Firefox https://ebooks.bonee.net/fumf/netl/



### *Հարցեր և առաջադրանքներ*

1. Ինչո՞ւ 1923 թ. Եվրոպայում ճգնաժամ առաջացավ: Ինչպե՞ս այն լուծվեց:
2. Ե՞րբ է Փարիզում ստորագրվել խաղաղության հռչակագիրը:
3. ԽՍՀՄ–ը ո՞ր թվականին միջազգային ճանաչում ստացավ:
4. Տնտեսական մեծ ճգնաժամն ի՞նչ ազդեցություն ունեցավ միջազգային հարաբերությունների վրա:
5. Ինչո՞ւ փլուզվեց Վերսալ–վաշինգտոնյան համակարգը:
6. Ինչպե՞ս և ե՞րբ է ձևավորվել «Բեռլին–Հռոմ–Տոկիո» ռազմաքաղաքական միությունը: Ներկայացրե՛ք ռազմատենչ երկրների նպատակները:
7. Ներկայացրե՛ք Մյունխենյան գործարքի էությունը:
8. Ինչո՞ւ Եվրոպայում չստեղծվեց հավաքական անվտանգության գործուն համակարգ:
9. Գնահատե՛ք 1939 թ. խորհրդա–գերմանական համաձայնագիրը:
10. Ի՞նչ արտաքին քաղաքականություն էր վարում ԱՄՆ–ը 1930–ական թթ.:

### *Քննարկման հարց*

Ինչո՞ւ ձախողվեց «խաղաղեցման քաղաքականությունը»:

### *Նոր հասկացություններ, անուններ, արտահայտություններ*

«Բեռլին–Հռոմ–Տոկիո» ռազմաքաղաքական միություն, Մյունխենյան գործարք, «խաղաղեցման քաղաքականություն», ԱՄՆ–ի ինքնամեկուսացման քաղաքականություն

62 von 91 12.02.2021, 11:35

Firefox https://ebooks.bonee.net/fumf/netl/



# 11 ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԸ. ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ԵՎ ՍԿԻԶԲԸ

***Երկրորդ աշխարհամարտը սկսվել է 1939 թ. սեպտեմբերի 1-ին և ավարտվել 1945 թ. սեպտեմբերի 2-ին:*** Իր ավերածություններով և մարդկային զոհերի թվով այն մի քանի անգամ գերազանցեց Առաջին աշխարհամարտին:

## Պատերազմի պատճառները և հակամարտող դաշինքները

Երկրորդ աշխարհամարտն արդյունք էր այն հակասությունների, որոնք իրենց լուծումը չստացան Վերսալ-Վաշինգտոնյան համակարգի շրջանակներում: 1930-ական թթ. դրանք ավելի սրվեցին:

***Պայքարը շարունակվում էր աշխարհում ազդեցության ոլորտների, գաղութների, հումքի աղբյուրների և շուկաների համար:*** Դրանք կրկին կենտրոնացած էին Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի ձեռքում, որոնք իրենց զարգացման ցուցանիշներով հետ էին մնում ԱՄՆ-ից, իսկ 1930-ական թթ.՝ նաև Գերմանիայից:

Արդեն գիտեք՝ Գերմանիայում իշխանության եկած ֆաշիստները հակված էին երկրի հիմնախնդիրները լուծելու ռազմական ճանապարհով: Նրանք սկսեցին վերազինել բանակը: Վերակառուցվեց տնտեսությունը. հազարավոր ձեռնարկություններ սկսեցին արտադրել ռազմական ինքնաթիռներ, տանկեր, սուզանավեր, հրետանի:

Այլ խոսքով՝ ***պնդեսական հակասությունները կրկին ստացան շեշտված ռազմական արտահայտություն:*** Սակայն ի հակադրություն Առաջին աշխարհամարտի՝ ***այժմ բախվում էին երկու հակադիր համակարգեր՝ ժողովրդավարական և ամբողջատիրական:*** Հարց էր դրված. աշխարհն ինչ ճանապարհով է ընթանալու:

Համաշխարհային տիրապետության հասնելու ճանապարհին Գերմանիան դաշնակցեց Իտալիայի և Ճա-

63 von 91 12.02.2021, 11:35

Firefox https://ebooks.bonee.net/fumf/netl/



պոնիայի հետ: Արդեն խոսել ենք, որ 1936–1940 թթ. ձևավորվել էր ***«Բեռլին–Հռոմ–Տոկիո» եռանկյունին***: Դրան հարում էին Իսպանիան, Հունգարիան, Ռումինիան, Սլովակիան, Բուլղարիան:

***Ձևավորվել էր նաև հակադիր խմբավորումը***, որի առանցքն էին ***Փարիզը և Լոնդոնը***: Դրան հարում էին Բելգիան, Հոլանդիան, Լեհաստանը, Հարավսլավիան, Հունաստանը:

Իսկ ԱՄՆ–ը, ինչպես արդեն ասվեց, իրեն հայտարարել էր չեզոք:

Ինչ վերաբերում է ԽՍՀՄ–ին, ապա նա, Գերմանիայի հետ կնքելով չհարձակման համաձայնագիր, ժամանակավորապես հետաձգեց բախումը ֆաշիստական խմբավորման հետ:

Գերմանական բանակի զինվոր

## Աշխարհամարտի սկիզբը

***1939 թ. սեպտեմբերի 1–ին*** Գերմանիան պատերազմ սկսեց Լեհաստանի դեմ: Չհանդիպելով լուրջ դիմադրության՝ նրա զորքերը խորացան լեհական տարածքում:

**ԱՄՆ–ի նախագահ Ֆրանկլին Ռուզվելտի ռադիոելույթը 1939 թ. սեպտեմբերին՝ պատերազմը սկսվելուց հետո:**

«Թող որևէ մեկը չփորձի պնդել, թե Ամերիկան երբևէ իր զորքերը կուղարկի Եվրոպա: Մենք ձգտում ենք թույլ չտալու, որ պատերազմը հասնի մեր սահմաններին, թույլ չտալու, որ այն մտնի Ամերիկա: Ես համոզված եմ, որ ԱՄՆ–ը հեռու կմնա այդ պատերազմից»:

Երկրորդ աշխարհամարտը Եվրոպայում

64 von 91 12.02.2021, 11:35

Firefox https://ebooks.bonee.net/fumf/netl/



1939 թ. սեպտեմբերի 1-ին գերմանական զորքերը հատում են Լեհաստանի պետական սահմանը. դա Երկրորդ աշխարհամարտի սկիզբն էր:

**Բրիգադային գեներալ Շառլ դը Գոլի ելույթը 1940 թ. հունիսի 18-ին լոնդոնյան Բի-Բի-Սի ռադիոկայանով**

«...Միթե այլևս հույս չկա: Միթե սա վերջնական պարտություն է: Ո՛չ: Ֆրանսիան միայնակ չէ: ... Այս պատերազմը չի սահմանափակվում մեր բազմաչարչար երկրի տարածքով: Այս պատերազմի ելքը չի վճռվում Ֆրանսիայի համար ճակատամարտով: Սա համաշխարհային պատերազմ է... Ես՝ գեներալ Շառլ դը Գոլս, ներկայումս գտնվելով Լոնդոնում, դիմում եմ այն ֆրանսիացի սպաներին և զինվորներին, ովքեր բրիտանական տարածքում են՝ կոչ անելով կապ հաստատել ինձ հետ: Ինչ էլ որ պատահի, ֆրանսիական Դիմադրության կրակը չպետք է մարի և չի մարի»:
Ֆրանսիայի անձնատվության օրը նա հայտարարեց «Ազատ Ֆրանսիա» կոմիտեի ստեղծման մասին, որը գլխավորեց ֆրանսիացիների պայքարը գերմանացի զավթիչների դեմ:

Նրանք խնդիր ունեին *«ոչնչացնելու լեհ ազգին պարկանող և լեհերեն խոսող բոլոր տղամարդկանց, կանանց ու երեխաներին՝ առանց ներողամտության ու խղճահարության»*:

***Սեպտեմբերի 3-ին Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան պատերազմ հայտարարեցին Գերմանիային***: Սակայն դրան չհետևեց գործնական որևէ քայլ, և Լեհաստանը միայնակ մնաց Գերմանիայի դեմ: Պատերազմի առաջին քսան օրերին թշնամին գրավեց Լեհաստանի մեծ մասը:

Ելնելով խորհրդա-գերմանական պայմանագրից՝ սեպտեմբերի 17-ին Լեհաստանի դեմ պատերազմ սկսեց նաև ԽՍՀՄ-ը: Խորհրդային զորքերը գրավեցին Արևմտյան Ուկրաինան և Արևմտյան Բելոռուսիան, որոնք 1920 թ. ի վեր Լեհաստանի կազմում էին:

Չդիմանալով կրկնակի հարվածին՝ Լեհաստանն ընկավ: Ժամանակակիցներից քչերն էին գիտակցում, որ սկսվել է մի մեծ ու կործանարար պատերազմ:

## Պատերազմի առաջին փուլը

Պատերազմի ***առաջին փուլ է համարվում 1939 թ. սեպտեմբերից մինչև 1941 թ. հունիսը***: Գերմանիան և ԽՍՀՄ-ը գործում էին ըստ իրենց համաձայնագրի: Գերմանիան ծավալվում էր Եվրոպայի արևմուտքում, իսկ ԽՍՀՄ-ը՝ արևելքում: ԽՍՀՄ-ը Գերմանիային մատակարարում էր հումք՝ նավթ, հացահատիկ, բամբակ, գունավոր մետաղներ և այլն: Երկու կողմերին էլ ուղեկցում էր հաջողությունը:

65 von 91 12.02.2021, 11:35

Firefox https://ebooks.bonee.net/fumf/netl/



***1940 թ. ապրիլին Գերմանիան գրավեց Դանիան և Նորվեգիան***: Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան կրկին ոչինչ չձեռնարկեցին: Դրությունն էականորեն չփոխվեց, երբ գերմանական զորքերը ներխուժեցին ***Հոլանդիա*** և ***Բելգիա***: Ապա մոտեցան Ֆրանսիայի սահմաններին: Թվում էր, թե կբորբոքվի անզիջում պայքար: Սակայն պարզվեց, որ ֆրանսիական բանակը բարոյալքվել է, իսկ նրան օգնության եկած անգլիական ուժերը սակավաթիվ էին: ***Ժամանակակիցները արևմտյան ճակատի «անգործ» վիճակն անվանել են «տարօրինակ պատերազմ»***:

Ավելի տարօրինակ էր նրա ավարտը: Առանց էական դիմադրության՝ ընկավ Ֆրանսիան: ***1940 թ.*** հունիսին գերմանական բանակը մտավ Փարիզ: ***Հունիսի 22-ին կնքվեց պայմանագիր***, որով ***Ֆրանսիան ճանաչեց իր պարտությունը***: ***Երկիրը բաժանվեց երկու գոտու՝ հյուսիսային և հարավային***: Հյուսիսը ռազմակալեցին գերմանացիները, իսկ հարավում ստեղծվեց նրանց հնազանդ կառավարություն:

Դրանից հետո Հիտլերն իր ուժերը կենտրոնացրեց Ֆրանսիայի հյուսիսում և նախապատրաստվում էր ներխուժելու ***Մեծ Բրիտանիա***: Սակայն վերջինիս կառավարությունը վարչապետ ***Ուինսթոն Չերչիլի*** գլխավորությամբ համախմբեց ժողովրդին, կարողացավ ծովից և օդից փակել գերմանացիների ճանապարհը: Ճիշտ է՝ նրանք ռմբահարում էին բրիտանական քաղաքները, սակայն անկարող էին ափ իջնել ու սկսել ռազմական գործողություններ: Ուստի Գերմանիան շրջվեց դեպի արևելք և մինչև 1941 թ. ապրիլը ռազմակալեց Հունգարիան, Ռումինիան, Բուլղարիան, Հարավսլավիան, Հունաստանը: Ամենուրեք հաստատվեցին նրան հնազանդ վարչակարգեր:

***ԽՍՀՄ-ն*** ևս զբաղված էր ***իր տարածքների ընդլայնմամբ***: Լեհաստանից հետո նա 1939 թ. ռազմակալեց Մերձբալթյան երեք երկրները՝ ***Լատվիան, Լիտվան և Էստոնիան***, իսկ ապա՝ ***Մոլդավիան***: 1940 թ. Մոսկվայի թելադրանքով ստեղծվեցին Լիտվայի, Լատվիայի, Էստոնիայի և Մոլդավիայի խորհրդային հանրապետությունները: Նրանք ***«կամավոր» կերպով շատ արագ մտան ԽՍՀՄ-ի մեջ***: Այժմ նրա կազմում կային ***15 խորհրդային հանրապետություններ***:

**ՈՒԻՆՍԹՈՆ ՉԵՐՉԻԼ**
**(1874–1965)**

Մեծ Բրիտանիայի մեծագույն պետական գործիչներից: Զբաղեցրել է բազմաթիվ պետական պաշտոններ: Տաղանդը ծաղկել է վարչապետության շրջանում (1940–1945, 1951–1955): Ճկուն, համարձակ, լայնախոհ այս գործիչը երկրորդ աշխարհամարտի տարիներին կարողացավ համախմբել իր երկրի բոլոր հնարավորությունները և տանել դեպի հաղթանակ: Հակահիտլերյան միության ակտիվ նախաձեռնողներից էր՝ Ֆ. Ռուզվելտի և Ի. Ստալինի հետ: Հետպատերազմյան շրջանում հայտնի էր իր շեշտված հակախորհրդային կեցվածքով: Սառը պատերազմի գաղափարախոսն էր և հանդես էր գալիս «քաղաքակիրթ աշխարհը կոմունիզմից փրկելու» կարգախոսով: Գրել է մի շարք պատմական և գեղարվեստական գործեր: Արժանացել է Նոբելյան մրցանակի:



66 von 91 12.02.2021, 11:35

Firefox https://ebooks.bonee.net/fumf/netl/



ԽՍՀՄ–ի ղեկավարությունը նույն բանը փորձեց անել նաև Ֆինլանդիայի հետ: Սակայն ֆինն ժողովուրդը վճռական էր՝ պայքարելու մինչև վերջ: ***1939 թ. նոյեմբերից մինչև 1940 թ. մարտ տևած պատերազմում*** ֆիննական փոքրաթիվ, բայց լավ վարժեցված բանակը խորհրդային բանակին պատճառեց մեծ կորուստներ: Այնուամենայնիվ, ուժերն անհավասար էին: ***Ֆինլանդիան պարտվեց և տարածքներ զիջեց ԽՍՀՄ–ին***, սակայն պահպանեց գլխավորը՝ իր անկախությունը: ***ԽՍՀՄ–ը՝ որպես ագրեսոր, վտարվեց Ազգերի լիգայից:***

*Այսպիսով՝ աշխարհամարտի առաջին փուլում Գերմանիան նվաճեց գրեթե ամբողջ Եվրոպան, իսկ ԽՍՀՄ–ը ընդլայնեց իր տարածքը և կազմը:*

### *Հարցեր և առաջադրանքներ*

1. Ներկայացրեք Երկրորդ աշխարհամարտի պատճառները:
2. Ռազմաքաղաքական ինչ խմբավորումներ էին ձևավորվել պատերազմի նախօրեին:
3. Երբ և ինչ իրադարձություններով սկսվեց Երկրորդ աշխարհամարտը:
4. Ո՞ր ժամանակաշրջանն է ընդգրկում պատերազմի առաջին փուլը: Նշեք այդ փուլի արդյունքները:
5. Բացատրեք «տարօրինակ պատերազմ» հասկացությունը (օգտվեք նաև դասագրքի բառարանից):
6. Ձեր կարծիքով ինչո՞ւ Ֆրանսիան չկարողացավ լուրջ դիմադրություն ցուցաբերել գերմանաֆաշիստական զորքերին:
7. Տարածքային ինչ ձեռքբերումներ ունեցավ ԽՍՀՄ–ը: Ինչ նոր խորհրդային հանրապետություններ մտան նրա կազմը:

### *Գործնական աշխատանք*

Տետրում գծեք և լրացրեք աղյուսակը:

| Պատերազմի պատճառները | Ռազմաքաղաքական խմբավորումները | Պատերազմի փուլերը | Պատերազմի արդյունքները |
|---|---|---|---|
| | | | |

### *Նոր հասկացություններ, անուններ, արտահայտություններ*

Երկրորդ աշխարհամարտ, պատերազմի առաջին փուլ, «տարօրինակ պատերազմ», Ուինսթոն Չերչիլ, Լիտվայի, Լատվիայի, Էստոնիայի և Մոլդավիայի խորհրդային հանրապետություններ, խորհրդա–ֆիննական պատերազմ

67 von 91 12.02.2021, 11:35

Firefox https://ebooks.bonee.net/fumf/netl/



# 12 ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԸ. ԸՆԹԱՑՔԸ ԵՎ ԱՎԱՐՏԸ

## ԽՍՀՄ հայրենական մեծ պատերազմը

Խորհրդային ղեկավարությունը գիտակցում էր, որ Գերմանիայի հետ կնքված համաձայնագիրը կայուն խաղաղություն չի երաշխավորում: Նա ձգտում էր հնարավորինս ժամանակ շահելու: Մյուս կողմից՝ հույս ուներ, որ պատերազմն արևմուտքում կհյուծի ինչպես Գերմանիային, այնպես էլ նրա հակառակորդներին: Սակայն այս հաշվարկները չարդարացան:

***1941 թ. հունիսի 22-ին*** Գերմանիան, խախտելով չհարձակման համաձայնագիրը, ներխուժեց ԽՍՀՄ-ի տարածք: Այսպես ***սկսվեց Խորհրդային Միության հայրենական մեծ պատերազմը***: Խորհրդա-գերմանական ճակատը դարձավ աշխարհամարտի գլխավոր ռազմաբեմը:

Գերմանիան ԽՍՀՄ-ի դեմ հանեց ահռելի ռազմական ուժ և տեխնիկա: Նրան սատարում էին դաշնակիցները՝ Իտալիան, Ռումինիան, Հունգարիան, Ֆինլանդիան: ***Ռազմաճակատի գիծը ձգվում էր Բարենցի ծովից մինչև Սև ծով: Սկզբնական շրջանում թշնամին ուներ բացարձակ առավելություն***: Երկու-երեք ամսում գրավեց Ուկրաինան, Բելոռուսիան, Մերձբալթիկան, շրջափակեց Լենինգրադը և ընդհուպ մոտեցավ Մոսկվային:

Մոսկվայի ճակատամարտում գերի ընկած գերմանացի զինվորները խորհրդային պահակայինների ուղեկցությամբ

68 von 91 12.02.2021, 11:35

Firefox https://ebooks.bonee.net/fumf/netl/

ԽՍՀՄ Հայրենական մեծ պատերազմը

***Թշնամու դեմ կանգնեց ողջ ժողովուրդը՝ պատրաստ ցանկացած գնով պաշտպանելու հայրենիքը***: Նման պատերազմները կոչվում են հայրենական: Սկզբնական շրջանի ծանր կորուստներից հետո խորհրդային երկիրը կարողացավ փոխել պատերազմի ընթացքը:

***1941 թ.*** նոյեմբերին գերմանական զորքերը Մոսկվայից ընդամենը 25–30 կմ հեռավորության վրա էին: Սակայն խորհրդային ուժերը գերազույն լարումով կարողացան կանգնեցնել նրանց: Ավելին՝ անցան հակահարձակման և նրանց ***հետ շպրտեցին Մոսկվայից: Սա գերմանական բանակի առաջին խոշոր պարտությունն էր աշխարհամարտի ընթացքում***:

1942 թ. վերջից ***պատերազմի ընթացքի մեջ ամրագրվեց շրջադարձ***. խորհրդային բանակը պաշտպանությունից անցավ հարձակման: ***Դա հնարավոր դարձավ***

Կուրսկի ճակատամարտը պատմության մեջ խոշորագույն տանկային ճակատամարտն է:

***երկու խոշոր հաղթական ճակատամարտերի շնորհիվ՝ Ստալինգրադի (1942 թ. նոյեմբեր — 1943 թ. փետրվար) և Կուրսկի (1943 թ. հուլիս–օգոստոս)***: Թշնամին տվեց հարյուրհազարավոր զոհեր: Մինչև 1943 թ. վերջը խորհրդային բանակը շարունակեց հարձակումը:

## Հակահիտլերյան միությունը

ԽՍՀՄ–ի վրա Գերմանիայի հարձակումից հետո Մեծ Բրիտանիան և ԱՄՆ–ը իրենց զորակցությունը հայտնեցին խորհրդային երկրին: Այս տրամադրությունները տիրական դարձան 1941 թ. դեկտեմբերին Մոսկվայի մատույցներում խորհրդային բանակի հաղթանակից հետո: Կարևոր էր նաև մեկ այլ իրողություն. այդ նույն օրերին Գերմանիայի դաշնակից Ճապոնիան հարձակվել էր ԱՄՆ–ի ծովային ուժերի վրա՝ պատճառելով մեծ կորուստներ: ***ԱՄՆ–ը պատերազմ հայտարարեց Ճապոնիային***:

Ամերիկյան խաղաղօվկիանոսյան նավատորմի վրա ճապոնացիների հարձակումը Փիրլ Հարբորում 1941 թ. դեկտեմբերի 7–ին:
Լուսանկարում՝ կործանված ամերիկյան «Արիզոնա» գծանավը

Firefox https://ebooks.bonee.net/fumf/netl/

**Կամիկաձե**
Երկրորդ աշխարհամարտի ժամանակ կամիկաձե (ճապոներեն՝ աստվածային քամի) էին անվանում ճապոնացի նվիրյալ, մահապարտ օդաչուներին, որոնք իրենց ռումբի վերածված հատուկ ինքնաթիռներով խոցում և ոչնչացնում էին հակառակորդի ռազմանավերը:

Իրենց հերթին ԱՄՆ–ին պատերազմ հայտարարեցին Գերմանիան և Իտալիան:

***1942 թ. հունվարի 1–ին Վաշինգտոնում հրավիրվեց հակահիտլերյան պետությունների համաժողով***: Դրանում գերիշխում էին ԱՄՆ–ը, Մեծ Բրիտանիան և ԽՍՀՄ–ը: Ընդունվեց հռչակագիր, որով կողմերը շեշտում էին իրենց հաստատակամությունը համատեղ պայքարելու Գերմանիայի և նրա դաշնակիցների դեմ: Հռչակագրի հիման վրա հետագայում կնքվեցին փոխադարձ օգնության պայմանագրեր:

Հակահիտլերյան միության խնդիրները քննարկելու նպատակով ***1943 թ. նոյեմբերի վերջին*** Իրանի մայրաքաղաք ***Թեհրանում տեղի ունեցավ ԱՄՆ–ի, Մեծ Բրիտանիայի և ԽՍՀՄ–ի ղեկավարների՝ Ֆ. Ռուզվելտի, Ու. Չերչիլի և Ի. Ստալինի հանդիպումը***: Քննարկվում էր Եվրոպայում երկրորդ ճակատ բացելու խնդիրը: Որոշվեց այն իրագործել 1944 թվականի մայիսին:

Երկրորդ աշխարհամարտը Ասիայում և Խաղաղ օվկիանոսում

71 von 91 12.02.2021, 11:35

Firefox https://ebooks.bonee.net/fumf/netl/

Հակահիտլերյան միության երկրների ղեկավարները՝ Ու. Չերչիլը, Ֆ. Ռուզվելտը և Ի. Ստալինը, Յալթայի հանդիպման ժամանակ. 1945 թ. փետրվար

## Պատերազմի հետագա ընթացքը

***1944 թ. հունիսի 6-ին*** դաշնակիցներն ափ իջան Ֆրանսիայի հյուսիսում: Այսպես՝ ***մեկ ամիս ուշացումով Եվրոպայում բացվեց երկրորդ ճակատը***: Շուտով ազատագրվեց Ֆրանսիան: Նրա նորակազմ կառավարությունը, որը ղեկավարում էր գեներալ ***Շառլ դը Գոլը***, ճանաչեցին Մեծ Բրիտանիան, ԱՄՆ-ը և ԽՍՀՄ-ը:

Խորհրդային բանակը 1944 թ. ազատագրեց ԽՍՀՄ-ի ողջ տարածքը և ռազմական գործողություններ ծավալեց Արևելյան Եվրոպայում: Շուտով Ռումինիան, Բուլղարիան և Հունգարիան դուրս եկան պատերազմից:

***Գերմանիայի պարտությունն այլևս կասկած չէր հարուցում***: Երեք տերությունների ղեկավարները որոշեցին կրկին հանդիպել՝ հաղթության պայմանները ճշտելու համար: ***1945 թ. փետրվարին Ղրիմի Յալթա քաղաքում տեղի ունեցավ Ֆ. Ռուզվելտի, Ու. Չերչիլի և Ի. Ստալինի նոր հանդիպումը***: Որոշեցին պատերազմը շարունակել մինչև Գերմանիայի անվերապահ անձնատվությունը: Նախագիծ մշակվեց Միավորված ազգերի կազմակերպություն (ՄԱԿ) ստեղծելու համար:

1945 թ. գարնանը դաշնակիցների զորքերն արևմուտքից, իսկ խորհրդային զորքերն արևելքից ծավալեցին հզոր հարձակում: ***Խորհրդային ուժերն ապրիլին շրջապատեցին Բեռլինը***: Հիտլերն ինքնասպան եղավ: ***Մայիսի 8-ի գիշերը Գերմանիան ընդունեց իր անվերա-***

72 von 91 12.02.2021, 11:35

Firefox https://ebooks.bonee.net/fumf/netl/

Խորհրդային պատվիրակությունը սպասում է Գերմանիայի պատվիրակությանը՝ անվերապահ անձնատվությունը ստորագրելու համար: Կենտրոնում՝ ԽՍՀՄ մարշալ Գեորգի Ժուկովը:

***պահ անձնատվությունը: Մայիսի 9-ը ԽՍՀՄ-ում հայտարարվեց Մեծ հաղթանակի օր: Այսպես Եվրոպայում ավարտվեց պատերազմը:***

## Աշխարհամարտի ավարտը

***1945 թ. հուլիսին*** ավերված Բեռլինից ոչ հեռու՝ ***Պոտսդամ քաղաքում***, բացվեց հաղթող պետությունների հերթական համաժողովը: Գերմանիայի կապակցությամբ որոշվեց, որ նա պետք է զինաթափվի և զարգանա ժո-

Ամերիկացիները «Միսուրի» գծանավի վրա ընդունում են Ճապոնիայի անվերապահ անձնատվությունը 1945 թ. սեպտեմբերի 2-ին, որով ամրագրվեց Երկրորդ աշխարհամարտի ավարտը:

73 von 91 12.02.2021, 11:35

Firefox https://ebooks.bonee.net/fumf/netl/



ղովրդավարության ուղիով: Նույն սկզբունքը տարածվում էր նրա դաշնակիցների վրա՝ Իտալիա, Հունգարիա, Ռումինիա, Բուլղարիա, Ֆինլանդիա: Վերականգնվում էին Լեհաստանը և Չեխոսլովակիան: Ճշգրտվում էին նրանց սահմանները: ԽՍՀՄ-ը հավաստեց Ճապոնիայի դեմ ռազմական գործողություններ սկսելու իր որոշումը:

- *Խորհրդային կողմը բարձրացրեց նաև հայկական պահանջները Թուրքիայից վերցնելու հարցը, սակայն հանդիպեց դաշնակիցների դիմադրությանը: Նրանք մտադիր էին պատերազմից հետո Թուրքիային օգտագործել ԽՍՀՄ-ի դեմ: Եվ դա այն դեպքում, երբ հայ ժողովուրդը աշխարհամարտին ակտիվ մասնակցություն և ներդրում էր ունեցել՝ 600 000 զինվոր, որից ավելի քան 200 000-ը զոհվել էր: Տվել էր զորավարների ու հերոսների մի փայլուն փաղանգ:*

Առաջին ատոմային ռումբը և պայթյունը: Մի ակնթարթում զոհվեց 70-90 հազար մարդ: Հետագայում ճառագայթման պատճառով զոհերի թիվը կրկնապատկվեց:

Պոտսդամից հետո դաշնակիցներն սկսեցին նախապատրաստվել հակաճապոնական գործողությունների ավարտական փուլին: Աշխարհամարտի տարիներին ***Ճապոնիան***, օգտագործելով իր ռազմական գերազանցությունը, ***գրավել էր Հարավարևելյան Ասիայի մեծ մասը***:

Սակայն հակառակ սպասվածի՝ Ճապոնիան չկարողացավ երկար դիմակայել: ***Օգոստոսի 6-ին և 9-ին ԱՄՆ-ն ատոմային ռմբահարման ենթարկեց ճապոնական Հիրոսիմա և Նագասակի քաղաքները***: ԽՍՀՄ-ը նույնպես ռազմական գործողություններ սկսեց Ճապոնիայի դեմ: Կոտրվեց ճապոնացիների դիմադրողական ոգին: ***Սեպտեմբերի 2-ին*** նրանք ընդունեցին իրենց անվերապահ անձնատվությունը: ***Սա Երկրորդ աշխարհամարտի ավարտն էր***:

Այսպիսով՝ Երկրորդ աշխարհամարտը տևեց ուղիղ վեց տարի: ***Պատերազմին մասնակցել էր 72 պետություն՝ 1,7 միլիարդ բնակչությամբ: Զոհվել է մոտ 65 միլիոն մարդ***:

Հիրոսիմայում ատոմային պայթյունից հետո մնացած միակ շինությունը, որն առ այսօր պահպանվում է որպես հուշարձան-հիշեցում:

74 von 91 12.02.2021, 11:35

Firefox https://ebooks.bonee.net/fumf/netl/



### Հարցեր և առաջադրանքներ

1. Ե՞րբ է սկսվել ԽՍՀՄ հայրենական մեծ պատերազմը:
2. Ձեր կարծիքով որո՞նք էին խորհրդա–գերմանական ճակատում Գերմանիայի սկզբնական հաջողության պատճառները:
3. Ե՞րբ են տեղի ունեցել Մոսկվայի, Ստալինգրադի և Կուրսկի ճակատամարտերը: Ներկայացրե՛ք դրանց նշանակությունը:
4. Ե՞րբ է ձևավորվել Հակահիտլերյան միությունը: Ինչո՞ւ հնարավոր եղավ միության ստեղծումը նախկինում մրցակից երեք խոշոր տերությունների միջև:
5. Ե՞րբ կատարվեց շրջադարձ Երկրորդ աշխարհամարտի ընթացքում՝ հօգուտ Հակահիտլերյան միության:
6. Ինչ կարևոր հարց քննարկվեց Թեհրանի համաժողովում:
7. Ե՞րբ է բացվել երկրորդ ճակատը Եվրոպայում: Նշե՛ք 1944 թ.—1945 թ. մայիս պատերազմափուլի արդյունքները:
8. Ինչ որոշումներ ընդունեց Պոտսդամի համաժողովը:
9. Ե՞րբ է ավարտվել Երկրորդ աշխարհամարտը:

### Գործնական աշխատանք

Տետրում շարունակե՛ք լրացնել նախորդ դասաժամին սկսած աղյուսակը:

| Պատերազմի պատճառները | Ռազմաքաղաքական խմբավորումները | Պատերազմի փուլերը | Պատերազմի արդյունքները |
|---|---|---|---|
| | | | |

### Նոր հասկացություններ, անուններ

Հայրենական մեծ պատերազմ, Մոսկվայի, Ստալինգրադի և Կուրսկի ճակատամարտեր, Հակահիտլերյան միություն, Վաշինգտոնի, Թեհրանի, Յալթայի և Պոտսդամի համաժողովներ, անվերապահ անձնատվություն, Մեծ հաղթանակի օր, Հիրոսիմա, Նագասակի

75 von 91 12.02.2021, 11:35

# ԱՌԱՋԻՆ ԲԱԺՆԻ ԱՄՓՈՓՈՒՄ

1. Առաջին աշխարհամարտի հաղթող տերությունները՝ Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, ԱՄՆ, Իտալիա և Ճապոնիա, պարտված երկրներին պարտադրեցին հաշտության իրենց պայմանները: Պայմանագրերը ներառում էին ազգերի իրավունքների, տարածքների, պատճառած վնասների փոխհատուցման հարցեր: Աշխարհի քաղաքական քարտեզի վրա ի հայտ եկան բազմաթիվ նոր պետություններ:

   - *Ո՞ր խորհրդաժողովներում և ինչ պայմանագրերով ամրագրվեց նոր աշխարհակարգը: Ներկայացրեք միջազգային հարաբերությունների նոր համակարգի դրական և բացասական կողմերը: ԱՄՆ-ն ինչո՞ւ Վերսալյան համակարգի մաս չկազմեց:*

2. Պատմության մեջ առաջին անգամ ստեղծվեց միջազգային կազմակերպություն, որի գլխավոր նպատակը ամբողջ աշխարհում խաղաղություն և անվտանգություն ապահովելն էր: Առաջին աշխարհամարտից հետո հաղթող տերությունները մշակեցին միջազգային հարաբերությունների կարգավորման նոր ձևեր ու կառույցներ: Փորձ արվեց այդ հարաբերությունների հիմքում դնելու ազգերի հավասարության և ինքնորոշման սկզբունքները:

   - *Երբ ստեղծվեց ու ինչ էր կոչվում այդ կազմակերպությունը, գտեք դրա գործունեության գնահատականը: Պարզաբանեք մանդատային համակարգի էությունը: Թվարկեք մի քանի մանդատարներ և մանդատային երկրներ: Փորձեք բացատրել «ազգերի ինքնորոշման իրավունք» հասկացությունը:*

3. 1920-ական թթ. Եվրոպայի ժողովրդավարական երկրները հարկադրված էին հաղթահարելու մի շարք դժվարություններ՝ տնտեսության վերականգնում, աշխատատեղերի ստեղծում, կյանքի պայմանների բարելավում և այլն: Նրանց օգնության եկավ ԱՄՆ-ը, որն ամենից քիչ էր տուժել պատերազմից:

   - *Ինչո՞ւ ԱՄՆ-ը կարողացավ շատ արագ հաղթահարել ճգնաժամը և բռնել բարգավաճման ուղին: Երբ, ո՞ր ծրագրով և ինչ նպատակով նա օգնություն ցրամադրեց Գերմանիային: Ինչ հետևանքներ ունեցավ դա: Որո՞նք էին «փոքր» ժողովրդավարական երկրները և ինչ հաջողություններ արձանագրեցին քաղաքական կյանքում:*

4. 1929 թ. սկսվեց համաշխարհային տնտեսական մեծ ճգնաժամը: Բռնկվելով ԱՄՆ–ում՝ այն տարածվեց բոլոր զարգացած երկրներում: Արդյունքը՝ զանգվածային գործազրկություն, աղքատություն, տնտեսական անկում, հոռետեսության աճ և այլն:

   - *Ո՞րն էր Տնտեսական մեծ ճգնաժամի գլխավոր պատճառը: Որքա՞ն տևեց և ի՞նչ հետևանքներ ունեցավ այն: Ներկայացրեք Ֆ. Ռուզվելտի «Նոր կուրսի» բովանդակությունը:*

5. 1920–1930–ական թթ. աշխարհի մի շարք երկրներում հաստատվեցին ամբողջատիրական վարչակարգեր: Վրեժխնդրության ձգտող պետություններում իշխանության եկան ֆաշիստներն ու ռազմամոլները: Նրանք ուզում էին վերաբաժանել աշխարհը, այդ նպատակով ռազմականացրին իրենց տնտեսությունները և պատրաստվում էին նոր աշխարհամարտի:

   - *Պարզաբանե՛ք ամբողջատիրական հասարակության բնորոշ կողմերը: Ինչ է ֆաշիզմը: Նշե՛ք ֆաշիստական հայտնի գաղափարախոսների կամ գործիչների: Ո՞ր երկրներում հաստատվեցին ֆաշիստական վարչակարգեր: Համեմատե՛ք այդ վարչակարգերը:*

6. 1922 թ. նախկին Ռուսաստանյան կայսրության տարածքի վրա կազմավորվեց նոր տերություն՝ ԽՍՀՄ–ը: Ուժերի գերագույն լարումով ԽՍՀՄ–ն արդիականացրեց իր արդյունաբերությունը և կոլեկտիվացրեց գյուղատնտեսությունը: Երկիրը վերածվեց գերտերության: Սակայն դա կատարվեց առավելապես բռնի միջոցներով, որին զոհ գնացին միլիոնավոր մարդիկ: Ձևավորվեց ամբողջատիրական վարչակարգ՝ Ի. Ստալինի ղեկավարությամբ:

   - *Ո՞ր հանրապետություններից ստեղծվեց ԽՍՀՄ–ը: Բնութագրե՛ք նէպը: Ինչ է անձի պաշտամունքը, նշե՛ք դրա հետևանքները: Ընդհանուր գծերով ներկայացրե՛ք սոցիալիստական հասարակության ստալինյան տարաձևը:*

7. Երկու աշխարհամարտերի միջև ընկած ժամանակաշրջանում արմատական տեղաշարժեր կատարվեցին Արևելքի երկրներում: Դրանք միտված էին արդիականացնելու վերջիններիս տնտեսությունը, քաղաքական համակարգը, մշակույթը և կենցաղը:

   - *Ո՞վ սկսեց Թուրքիայի արդիականացումը, ի՞նչ արդյունքներ այն տվեց: Ներկայացրե՛ք իսրայելա–թուրքական հարաբերություններն այս շրջանում: Ե՞րբ և արքայատոհմի ի՞նչ փոփոխություն եղավ Իրանում: Թվարկե՛ք արդիականացման ուղղությամբ Իրանում կատարված քայլերը:*

8. Արևելքի երեք խոշոր ավանդական հասարակությունները այս նույն ժամանակաշրջանում շարունակում էին արդիականացման ու բարեփոխումների գործընթացը: Եթե Ճապոնիան XX դարի սկզբներին արդեն ավարտել էր արդիականացումը, ապա Չինաստանի ներքաղաքական անկայունությունն ու Հնդկաստանի հակագաղութային շարժումը հետաձգեցին արդիականացման գործընթացն այդ երկրներում մինչև XX դարի երկրորդ կեսը:

   - *Որոնք էին Ճապոնիայի արդիականացման հաջողությունների պատճառները: Ինչո՞ւ Չինաստանի և Հնդկաստանի արդիականացման գործընթացն այս փուլում իր ցրամաբանական ավարտին չհասավ: Հեղափոխական և ազատագրական ինչ շարժումներ էին ծավալվել Չինաստանում և Հնդկաստանում, ովքե՞ր էին ղեկավարում դրանք:*

9. 1920–1930-ական թթ. կարևոր փուլ էր Նորագույն շրջանի մշակույթի պատմության մեջ. կատարելագործվեց կրթական համակարգը, զարգացան գիտության տարբեր ուղղությունները, առաջացան նորերը: Գիտության նվաճումները զանգվածաբար ներդրվում էին արտադրության մեջ և մարդկանց կենցաղում: Գրականությունը և արվեստի տարբեր բնագավառները բացահայտեցին նոր դարաշրջանի մարդու ներաշխարհը:

   - *Ներկայացրե՛ք այս շրջանի գիտության նվաճումներն ու հեղինակներին ըստ ուղղությունների: Արվեստի ինչ նոր ճյուղեր զարգացան: Թվարկե՛ք գրականության և արվեստի հայտնի գործիչների: Նրանց ստեղծագործություններից որոնց եք ծանոթ:*

10. Միջպատերազմյան շրջանի միջազգային հարաբերություններում առկա էին երկու հակադիր միտումներ: Մի կողմից՝ խաղաղությունը պահպանելու միտումն էր, մյուս կողմից՝ աշխարհը ռազմական ուժով վերաբաժանելու միտումը: 1930-ական թթ. փլուզվեց միջազգային հարաբերությունների Վերսալ–Վաշինգտոնյան համակարգը:

   - *Խաղաղության ապահովման նպատակով ինչ քայլեր արվեցին 1920-ական թթ.: ԽՍՀՄ-ը ե՞րբ ստացավ միջազգային ճանաչում: Որոնք էին Վերսալ–Վաշինգտոնյան համակարգի փլուզման պատճառները: Ձեր կարծիքով ինչո՞ւ հաղթած երկրներ Իտալիան ու Ճապոնիան դարձան ագրեսոր երկրներ: Գնահատե՛ք խորհրդա–գերմանական չհարձակման համաձայնագիրը:*

11. Երկրորդ աշխարհամարտն արդյունք էր այն հակասությունների, որոնք իրենց լուծումը չէին գտել Վերսալ–Վաշինգտոնյան համակարգի շրջանակներում:

Սկսվեց նոր արյունալի համաշխարհային ռազմական բախում, որը տևեց վեց տարի:

- *Ռազմաքաղաքական ինչ խմբավորումներ էին ստեղծվել նոր աշխարհամարտից առաջ, ներկայացրեք տերությունների նպատակները: Պարզաբանեք երկրորդ աշխարհամարտի առաջին փուլի արդյունքները:*

12. Աշխարհամարտի երկրորդ փուլում պատերազմը ծավալվեց նաև Եվրոպայից դուրս և իսկապես դարձավ համաշխարհային: Հակահիտլերյան միությունն ունեցավ վճռական հաղթանակներ: Բացվեց երկրորդ ճակատը, իսկ խորհրդային բանակն ազատագրեց իր երկիրը: 1945 թ. սեպտեմբերի 2-ին ավարտվեց մարդկության պատմության ամենաարյունալի պատերազմը:

- *Որքան է տևել ԽՍՀՄ Հայրենական մեծ պատերազմը: Գնահատեք խորհրդային բանակի դերը Գերմանիայի ջախջախման գործում: Ինչ որոշումներ կայացրեց Պոտսդամի համաժողովը:*

# ԵԶՐԵՐԻ (ՏԵՐՄԻՆՆԵՐԻ) ԲԱՌԱՐԱՆ

**Ագրեսիա (լատ.՝ հարձակում)** — Մի պետության կողմից ուժի անօրինական գործադրումը մեկ այլ պետության տարածքային ամբողջականության կամ անկախության դեմ:

**Ազատականացում (լիբերալացում, լատ.՝ ազատ բառից)** — Այստեղ՝ պետական վերահսկողության թուլացում կամ վերացում տնտեսական գործունեության տարբեր ձևերի, գների, աշխատավարձի, տարադրամի արժեքի, տոկոսադրույքի չափերի նկատմամբ և այլն:

**Ազատ տնտեսական գոտի** — Որևէ պետության մեջ առանձնացված տարածք, որտեղ այդ պետության և օտարերկրյա ձեռնարկատերերին ու ներդրողներին ազատորեն թույլատրվում է տնտեսական գործունեություն (արտադրություն, առևտուր, գույքի ձեռքբերում և այլն) ծավալել: Դրա համար ստեղծվում են բարենպաստ պայմաններ՝ օրենսդրական, հարկային, վարձակալման և այլ արտոնություններ:

**Ազգայնականություն (նացիոնալիզմ, լատ. natio «ազգ, ժողովուրդ» բառից)** — Գաղափարախոսություն և քաղաքական շարժում: Ազգայնականների համար ազգի բարգավաճումը և բարեկեցությունը գերակայում են մյուս հասարակական խնդիրների նկատմամբ: Փոքր ազգերի համար այն ազգային անվտանգության ապահովման կարևոր միջոց է ընդդեմ մեծ ազգերի ճնշումների: Ա.-ի հակադիր դրսևորումն է ազգայնամոլությունը, որը սեփական ազգից բացի չի հանդուրժում մյուս ազգերին, այն հետադիմական, ռասիստական և մարդատյաց բնույթ ունի:

**Ազգայնացում** — Տնտեսության որոշ ճյուղերի, մասնավոր ձեռնարկությունների, հողի և այլ մասնավոր սեփականության վերածումը պետական սեփականության: Դա կարող է կատարվել ունեզրկման, ինչպես նաև լրիվ կամ մասնակի փոխհատուցման ճանապարհով:

**«Ազգերի բրիտանական համագործակցություն»** — Մեծ Բրիտանիայից և նրա նախկին տիրույթներից՝ բրիտանական գաղութային տերության փլուզման արդյունքում կազմված միջպետական միավորում: Սկսել է ձևավորվել 1947 թ.: Դրա մեջ են մտել նաև նախկին դոմինիոնները: Ընդգրկում է 50-ից ավելի պետություն:

**Ազգերի ինքնորոշման իրավունք** — Ազգի պետական և իրավական կազմակերպման հարցերն ինքնուրույնաբար տնօրինելու իրավունք: Այն որևէ ազգի համար ենթադրում է՝ 1. տվյալ երկրի սահմաններում տարածքային կամ մշակութային ինքնավարություն, 2. տվյալ երկրից անջատվել և ազգային անկախ պետություն ստեղծել, 3. որևէ պետության (պետությունների) հետ միավորում՝ դաշնության կամ համադաշնության ստեղծում: Որպես քաղաքական և գաղափարական սկզբունք ծագել է XVIII–XIX դդ. առաջին կեսի հեղափոխությունների ժամանակ, իսկ նորագույն շրջանում դարձել է միջազգային իրավունքի կարևորագույն նորմերից մեկը: Ա. ի. ի. իրագործման բնորոշ օրինակ է ազատագրական պայքարի շնորհիվ արցախահայության ստեղծած անկախ պետականությունը՝ Արցախի Հանրապետությունը:

**Ամբողջատիրություն (տոտալիտարիզմ, լատ.՝ ամբողջ, լիակատար բառից)** — Բռնապետական իշխանության ձև. բնորոշ կողմերն են սահմանադրական իրավունքների և ազատությունների փաստացի վերացումը, հասարակության լիակատար ենթարկումը իշխանության շահերին և համատարած (տոտալ) վերահսկողության հաստատումը բոլորի և ամեն ինչի նկատմամբ, քաղաքական ընդդիմության և այլախոհների հանդեպ բռնարարքների լայնածավալ կիրառումը:

## II

**Այլախոհ (դիսիդենտ, լատ.՝ չհամաձայնող)** — Այստեղ՝ մարդ, որը համաձայն չէ և պայքարում է իր երկրում տիրապետող գաղափարախոսության դեմ: XX դ. 60–80-ական թթ. այդպես էին անվանում սոցիալիստական երկրների այն քաղաքացիներին, ովքեր բացեիբաց քննադատում էին պետական գաղափարախոսությունը:

**Անձի պաշտամունք** — Հասարակության, պետության մեջ մեկ մարդու դերի գերագնահատումը, փառաբանումը, կենդանության օրոք նրան պատմական զարգացման ընթացքի վրա ուռճացված ազդեցություն վերագրելը: Երևույթը բնորոշ է ամբողջատիրական երկրներին: Հայտնի է Ստալինի, Հիտլերի, Մուսսոլինիի, Սաո Ցզեդունի և այլոց ա. պ.-ն:

**Անձնատվություն (կապիտուլյացիա, լատ.՝ պայմանավորվել)** — Զինված ուժերի ռազմական դիմադրության դադարեցում: Անվերապահ ա. կնքվում է պատերազմում լիակատար պարտություն կրած հակառակորդի հետ այն պայմաններով, որ թելադրում է հաղթող կողմը: Պատերազմում պարտված կողմի ռազմական տեխնիկան, ունեցվածքը, ամրությունները, հենակայանները անցնում են հակառակորդի ձեռքը, իսկ զինվորական անձնակազմը հանձնվում է որպես ռազմագերի: Օրինակ՝ Գերմանիայի և Ճապոնիայի ա. ա. 1945 թ.:

**Աշխարհաքաղաքացիություն (կոսմոպոլիտիզմ, հուն.՝ աշխարհ և քաղաքացի բառերից)** — Գաղափարաքաղաքական հոսանք, որը քարոզում է անտարբեր վերաբերմունք հայրենիքի և իր ժողովրդի հանդեպ, հրաժարում ազգային ավանդույթներից, մշակույթից, ազգային պետությունից կամ ազգային ինքնիշխանության համար պայքարից՝ հանուն ինչ-որ «համաշխարհային պետության» ստեղծման և «համաշխարհային քաղաքացիության» հաստատման:

**Արդյունաբերացում (ինդուստրացում)** — Արդյունաբերության մեջ և տնտեսության մյուս ճյուղերում խոշոր մեքենայական արտադրության ներդրման գործընթացը: Դրա շնորհիվ ծանր արդյունաբերությունը դառնում է գերակշռող մյուս ճյուղերի համեմատ: Այս քաղաքական կուրսն իրականացվել է ԽՍՀՄ-ում 1920-ական թթ. երկրորդ կեսից, իսկ սոցիալիստական և զարգացող մի շարք երկրներում՝ երկրորդ աշխարհամարտից հետո:

**Բռնազավթում (լատ.՝ անեքսիա՝ միացում)** — Ագրեսիայի տարատեսակ. մի պետության կողմից մյուս պետության ամբողջ տարածքի (կամ դրա մի մասի) բռնի միավորում կամ զավթում: Ա. է կոչվում նաև որևէ ժողովրդի բռնի պահելը օտար պետության սահմաններում:

**Բռնապետություն (դիկտատուրա)** — Քաղաքական համակարգ, որին բնորոշ են կառավարման ոչ ժողովրդավարական (բռնի, ուժային) մեթոդները: Դրա մի տարատեսակն է պրոլետարիատի դիկտատուրան. ըստ մարքսիստական ուսմունքի՝ բանվոր դասակարգի քաղաքական իշխանությունը, որը հաստատվում է սոցիալիստական հեղափոխության հաղթանակի արդյունքում:

**Գաղափարախոսություն** — Գաղափարների և հայացքների համակարգ. արտացոլում է հասարակության տարբեր խավերի, խմբերի վերաբերմունքը իրականության հանդեպ, արտահայտում նրանց արմատական շահերը, մտայնությունը և պահանջները:

**Գիտատեխնիկական հեղափոխություն (ԳՏՀ)** —Գիտության և տեխնիկայի լայնածավալ, թռիչքաձև առաջընթացը, որի արդյունքում գիտությունը, արտադրությունը և հասարակության մյուս ոլորտները որակական մեծ զարգացում են ապրում: ԳՏՀ-ն սկսվել է 1940-ական թթ. և շարունակվում է մինչ օրս: Դրա շնորհիվ էականորեն փոխվեց և շարունակում է փոխվել նորագույն շրջանի հասարակությունը, գերզարգացած երկրները անցում կատարեցին դեպի հետարդյունաբերական կամ տեղեկատվական հասարակություն:

**Դիմադրության շարժում** — Երկրորդ աշխարհամարտի տարիներին ծավալված ազգային-ազատագրական, հակաֆաշիստական շարժում: Ծագել է ֆաշիստների կողմից զավթված եվրոպական երկրների տարածքում, ընդգրկել բնակչության բոլոր խավերը, քաղաքական տարբեր հայացքներ ունեցող մարդկանց:

**Դոմինիոն (անգլ.՝ տիրույթ)** — Այդպես էին կոչվում «Ազգերի բրիտանական համագործակցության» անդամ երկրները մինչև 1947 թ.: Դոմինիոններ են եղել նախկին Բրիտանական տերության ինքնակառավարվող որոշ տարածքներ և նախկին գաղութներ: Օրինակ՝ Կանադան (1867 թ.), Ավստրալական Միությունը (1901 թ.), Իռլանդիան (1921 թ.) և այլն: Դրանցում պետության ղեկավար է համարվել Անգլիայի թագավորը: 1931 թ. հռչակվել է դոմինիոնների անկախությունը:

**Զանգվածային լրատվության միջոցներ (ԶԼՄ)** — Ազգաբնակչությանը ամենատարբեր բնույթի տեղեկատվության հաղորդման համակարգ: Տեղեկատվության հաղորդումն իրականացվում է տպագրական, էլեկտրոնային, տեսաձայնային և այլ միջոցներով (մամուլ, հեռուստատեսություն, ռադիո, համացանց, կինո և այլն):

**Ինքնիշխանություն (սուվերենություն)** — Պետության անկախ, ինքնուրույն լինելը արտաքին և ներքին գործերում: Ազգային ինքնիշխանություն նշանակում է սոցիալ–քաղաքական կարգի ազատ ընտրության իրավունք, տնտեսական անկախություն և այլն:

**Խտրականություն** — Քաղաքացիների իրավունքների սահմանափակում կամ զրկում՝ կախված ազգային, ռասայական, կրոնական կամ այլ հատկանիշներից:

**Կենսամակարդակ** — Երկրի բնակչության բարեկեցության աստիճանը: Դրա ցուցիչներն են աշխատավարձի, հարկերի չափը, նվազագույն սպառողական զամբյուղը, սոցիալական ապահովության ծախսերի չափը և այլն:

**Կոալիցիոն կառավարություն (լատ.՝ միանալ, զոդել բառից)** — Տարբեր կուսակցությունների միջև կայացած համաձայնության արդյունքում նրանց ներկայացուցիչներից կազմված միացյալ կառավարություն:

**Կոլեկտիվացում** — Այստեղ՝ ԽՍՀՄ–ում XX դ. 20–30–ական թթ. իրականացված գյուղատնտեսության բռնի վերափոխումը՝ անհատական գյուղացիական տնտեսությունների վերածումը (հիմնականում՝ հարկադրաբար) կոլեկտիվ տնտեսությունների:

**Կոոպերացիա (լատ.՝ համագործակցություն)** — 1. Արտադրության և աշխատանքի կազմակերպման ձև, որը հիմնվում է խմբային սեփականության վրա: 2. Կամավոր ընկերություն, որն օգնում է իր անդամներին՝ տնտեսություն վարելու, վարկ ձեռք բերելու և այլ հարցերում:

**Հակահիտլերյան միություն** — Պետությունների և ժողովուրդների միություն: Ստեղծվել էր 1942 թ. հունվարի 1–ին. Երկրորդ աշխարհամարտի տարիներին պայքարում էր Գերմանիայի ու նրա դաշնակիցների դեմ: Պատերազմի ավարտին դրա կազմում կար 51 պետություն (որոնք դարձան ՄԱԿ–ի հիմնադիրներ): Կորիզը «Մեծ եռյակն» էր՝ ԽՍՀՄ–ը, ԱՄՆ–ը, Մեծ Բրիտանիան:

**Համադաշնություն (կոնֆեդերացիա, լատ.՝ միություն, միավորում)** — Համադաշնությունը, որպես կանոն, չի ունենում ընդհանուր սահմանադրություն և միասնական քաղաքացիություն: Քաղաքական, ռազմական և տնտեսական նպատակներին հասնելու համար անդամ պետությունների կողմից ստեղծվում են միացյալ համակարգող մարմիններ:

**Համաշխարհայնացում, գլոբալացում (ֆր. գլոբալ՝ համընդհանուր բառից)** — Արդի աշխարհի ամբողջական, համակարգված միասնացման գործընթացը: Դա պայմանավորված է համընդհանուր հիմնախնդիրների (բնապահպանական, ժողովրդագրական, տնտեսական, մշակութային և այլն) համատեղ լուծման անհրաժեշտությամբ:

**Հեղափոխություն** — Հասարակության քաղաքական, սոցիալ–տնտեսական կառուցվածքի և մշակութային կյանքի արմատական, որակական կտրուկ փոփոխություն (հեղաշրջում, բեկում): Որպես կանոն՝ հեղափոխություններն ուղեկցվում են փոփոխություններ իրականացնողների կողմից գործադրվող բռնությամբ և բնակչության զանգվածային ելույթներով:

## IV

**Հետարդյունաբերական հասարակություն** — Քաղաքակրթության արդի փուլին բնորոշ հասարակություն, որը հաջորդել է արդյունաբերական հասարակությանը: Հ. հ. տնտեսության մեջ գերակշռում է գիտելիքահենք և նորարարական հատվածը, իսկ արդյունաբերությունն ունի շատ բարձր արտադրողականություն: ՀՆԱ-ի մեջ գերակշռում է ծառայությունների ոլորտը, բնակչության մեծ մասը զբաղված է հենց այս ոլորտում: Բարձր տեխնոլոգիաների անընդհատ զարգացումը և ներդրումը պահանջում են բարձր որակավորում, պրոֆեսիոնալ կարողություններ ունեցող և ստեղծագործ մասնագետներ: Աշխարհում առաջինը ԱՄՆ-ն է անցում կատարել հ. հ.-ին՝ 1960-ական թթ. ավարտին, իսկ մյուս զարգացած երկրները՝ 1970–1980-ական թթ.:

**Ձեռնարկատիրություն** — Գործունեության տեսակ, որի դեպքում անհատը (ձեռնարկատերը) միջոցներ, կապիտալ է ներդնում որևէ գործի մեջ (արտադրություն, առևտուր և այլն) շահույթ ստանալու նպատակով:

**«Ձնհալի շրջան»** — Խորհրդային Միության պատմության կարճատև մի շրջան (1954–1964), որը սկսվեց Ի. Ստալինի մահվանից հետո: Տեղի ունեցավ կոմկուսի գաղափարական թելադրանքի թուլացում, քաղաքականության մեջ որոշակի ազատականացում: Անվանումն ստացել է 1954 թ. լույս տեսած Ի. Էրենբուրգի համանուն պատմվածքից:

**Մանդատ (լատ.՝ հանձնարարություն)** — Այստեղ՝ կառավարման ձև, գաղութային կախվածության տարատեսակ. առաջացել է Առաջին աշխարհամարտից հետո: Ազգերի լիգան մանդատ էր տալիս արևմտյան որևէ զարգացած երկրի՝ Գերմանիայի գաղութները և Օսմանյան կայսրության նախկին ենթակա երկրները կառավարելու համար:

**Մշակութային (կուլտուրական) հեղափոխություն** — Այս հասկացությունը ներմուծել է Վ. Լենինը՝ Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո Ռուսաստանի մշակույթի (կուլտուրայի) զարգացման նոր փուլը նշելու համար: Այն սոցիալիզմի կառուցման լենինյան ծրագրի բաղկացուցիչ մասերից էր: Իրականում ծառայեց ղեկավարող բոլշևիկյան կուսակցության շահերին, մշակույթը քաղաքականացվեց: Սակայն տվել է նաև ակնառու նվաճումներ:

**Նախագահ (պրեզիդենտ, լատ.՝ առջևում նստողը)** — Պետության ընտրովի ղեկավարը:

**Նէպ (նոր տնտեսական քաղաքականության ռուսերեն հապավումը)** — 1921 թ. Խորհրդային Ռուսաստանում ընդունված քաղաքականություն, որը փոխարինեց ռազմական կոմունիզմի քաղաքականությանը: Մտցվեց պարենային հարկ, թույլատրվեց ապրանքադրամական հարաբերությունների, շուկայի, սեփականության տարբեր ձևերի գոյությունը, օտարերկրյա կապիտալի մուտքը խորհրդային երկրների տնտեսության մեջ և այլն:

**Շուկայական տնտեսություն** — Տնտեսություն, որը զարգանում է ապրանքային տնտեսության, ապրանքների ու ծառայությունների հանդեպ պահանջարկի և առաջարկի օրենքների հիման վրա:

**Պարենմասնատրում** — Գյուղատնտեսական արտադրանքի մթերման համակարգ խորհրդային պետությունում 1919–1921 թթ., «Ռազմական կոմունիզմի» քաղաքականությունը բնութագրող տարրերից մեկը: Գյուղացիները պարտավոր էին հացի և այլ մթերքների ավելցուկը սահմանված գներով հանձնել պետությանը:

**«Ռազմական կոմունիզմ»** — Խորհրդային Ռուսաստանում քաղաքացիական պատերազմի տարիներին (1918–1920 թթ.) բոլշևիկների կողմից իրականացված քաղաքականությունը: Դրա հիմքում դրված էին այսպիսի միջոցառումներ՝ արդյունաբերական ձեռնարկությունների ազգայնացում, արտադրության և ապրանքների բաշխման առավելագույն կենտրոնացում պետության ձեռքում, պարենմասնատրում, մասնավոր առևտրի արգելում և այլն:

**Ռազմատուգանք (լատ.՝ կոնտրիբուցիա)** — Պատերազմում պարտված երկրի կողմից հաղթող երկրին կատարվող դրամական վճարում: Այժմ միջազգային իրավունքով արգելված է:

**Ստվերային տնտեսություն** — Տնտեսական գործունեության այն ոլորտը, որի մասնակիցները գործում են ընդհատակյա կարգով, հաշվառված չեն պաշտոնական վիճակագրության կողմից և խուսափում են հարկեր վճարելուց:

**«Տարօրինակ պատերազմ»** — Այս տերմինով բնութագրվում է Երկրորդ աշխարհամարտի Արևմտյան ճակատում 1939 թ. սեպտեմբերի 3–ից մինչև 1940 թ. մայիսի 10–ը տիրող իրավիճակը: Ֆրանսիան և Մեծ Բրիտանիան, պատերազմ հայտարարելով Գերմանիային, ռազմական գործողություններ չմղեցին նրա դեմ, թեև ունեին թվային գերակշռություն:

**Ցեղասպանություն (գենոցիդ)** — Պետականորեն կազմակերպված, մի ազգի կողմից մեկ այլ ազգի, ընկերային կամ կրոնական խմբի լրիվ (կամ մասնակի) ֆիզիկական ոչնչացումը: Համաձայն ՄԱԿ–ի 1948 թ. դեկտեմբերի 9–ի բանաձևի՝ ցեղասպանությունը մարդկության դեմ ուղղված ծանրագույն հանցագործություն է: 1914–1916 թթ. երիտթուրքական կառավարության կազմակերպած հայերի զանգվածային կոտորածները գնահատվել են որպես XX դարի առաջին ցեղասպանություն (հայտնի է Մեծ եղեռն անունով):

**Քաղաքակրթություն** — 1. Հասարակության նյութական և հոգևոր մշակույթի զարգացման մակարդակ, աստիճան: 2. Մարդկության պատմության այն շրջանը, որը հաջորդել է նախնադարին և շարունակվում է մինչ օրս: Քաղաքակրթության պատմությունը ընդունված է բաժանել երեք փուլի՝ 1) մինչարդյունաբերական (ագրարային), 2) արդյունաբերական և 3) հետարդյունաբերական (տեղեկատվական):

**Քաղաքացիական հասարակություն** — Եզր, որով բնորոշվում է հասարակության զարգացման որոշակի մակարդակը: Բոլոր քաղաքացիները հավասար են օրենքի առաջ, իրավունք ունեն անձնապես կամ հասարակական կազմակերպությունների միջոցով մասնակցելու պետության կառավարմանը: Բոլոր քաղաքացիների իրավունքներն ու պարտականությունները ամրագրված են երկրի սահմանադրությամբ:

**Քաղաքացիական պատերազմ** — Երկրի ներսում տարբեր քաղաքական ուժերի, սոցիալական խմբերի միջև զինված պայքարը պետական իշխանության համար:

**Քաղաքական վարկանիշ (ռեյտինգ)** — Քաղաքական առաջնորդների և կուսակցությունների հեղինակության ու հանրահայտության, ինչպես նաև կոնկրետ քաղաքական իրավիճակում նրանց գործունեության գնահատման անհատական թվային ցուցանիշ:

# ԱՄՓՈՓԻՉ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

**1914 թ. օգոստոսի 1 – 1918 թ. նոյեմբերի 11** — Առաջին աշխարհամարտը

**1917 թ. նոյեմբերի 7 (հին տոմարով՝ հոկտեմբերի 25)** — Հոկտեմբերյան հեղաշրջումը Ռուսաստանում

**1918 թ. նոյեմբեր** — Հանրապետության հռչակումը Գերմանիայում

**1919 թ. հունվար – 1920 թ. հունվար** — Փարիզի խաղաղության վեհաժողովը

**1919 թ. հունիսի 28** — Վերսալի պայմանագրի ստորագրումը

**1919–1946** — Ազգերի լիգայի գործունեությունը

**1920 թ. օգոստոսի 10** — Սևրի պայմանագրի ստորագրումը

**1921 թ. մարտի 16** — Ռուս-թուրքական պայմանագրի կնքումը Մոսկվայում

**1921–1928** — Նէպի շրջանը խորհրդային հանրապետություններում, ապա՝ ԽՍՀՄ-ում

**1921 թ. նոյեմբեր – 1922 թ. փետրվար** — Վաշինգտոնի վեհաժողովը

**1922–1943** — Մուսսոլինիի ֆաշիստական վարչակարգը Իտալիայում

**1922 թ. դեկտեմբերի 30** — ԽՍՀՄ-ի կազմավորումը

**1923** — Գերմանական ճգնաժամը

**1923** — Հանրապետության հռչակումը Թուրքիայում

**1924** — Դիվանագիտական հարաբերությունների հաստատումը ԽՍՀՄ-ի և Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Չինաստանի միջև

**1924** — Չ. Դաուեսի պլանի ընդունումը

**1925** — Փահլավիների արքայատոհմի հաստատումը Իրանում

**1925–1927** — Հեղափոխությունը Չինաստանում. երկրի միավորումը

**1928** — Փարիզի խաղաղության հռչակագրի ստորագրումը

**1929–1933** — Համաշխարհային տնտեսական մեծ ճգնաժամը

**1933–1945** — Ֆաշիստական վարչակարգը Գերմանիայում

**1933** — Ֆ. Ռուզվելտի «Նոր կուրսի» կենսագործման սկիզբը ԱՄՆ-ում

**1934** — ԽՍՀՄ-ի անդամագրվելը Ազգերի լիգային

**1936–1939** — Քաղաքացիական պատերազմը Իսպանիայում

**1936–1940** — «Բեռլին–Հռոմ–Տոկիո» ռազմատենչ միության ձևավորումը

**1938 թ. սեպտեմբերի 30** — Մյունխենի «գործարքի» ստորագրումը

**1939 թ. օգոստոսի 23** — Չհարձակման համաձայնագրի ստորագրումը ԽՍՀՄ-ի և Գերմանիայի միջև

**1939 թ. սեպտեմբերի 1 – 1945 թ. սեպտեմբերի 2** — Երկրորդ աշխարհամարտը

**1939 թ. սեպտեմբեր 1 – 1941 թ. հունիս 22** — Երկրորդ աշխարհամարտի առաջին փուլը

**1941 թ. հունիսի 22 – 1945 թ. մայիսի 9** — ԽՍՀՄ Հայրենական մեծ պատերազմը

**1942 թ. հունվարի 1** — Հակահիտլերյան միության ձևավորումը

**1943 թ. փետրվարի 2** — Ստալինգրադի ճակատամարտի հաղթական ավարտը. արմատական բեկման սկիզբը Երկրորդ աշխարհամարտի ընթացքում

**1943 թ. նոյեմբերի 28 – դեկտեմբերի 1** — ԱՄՆ–ի, Մեծ Բրիտանիայի և ԽՍՀՄ–ի ղեկավարների համաժողովը Թեհրանում

**1944 թ. հունիսի 6** — Երկրորդ ճակատի բացումը Եվրոպայում

**1945 թ. փետրվարի 4–11** — ԱՄՆ–ի, Մեծ Բրիտանիայի և ԽՍՀՄ–ի ղեկավարների համաժողովը Յալթայում

**1945 թ. մայիսի 9** — Ֆաշիստական Գերմանիայի լիակատար պարտությունը. Մեծ հաղթանակի օրը

**1945 թ. հուլիսի 17 – օգոստոսի 2** — Հաղթող երկրների Պոտսդամի համաժողովը

**1945 թ. օգոստոսի 6 և 9** — ԱՄՆ–ի կողմից ճապոնական Հիրոսիմա և Նագասակի քաղաքների ատոմային ռմբահարումը

**1945 թ. սեպտեմբերի 2** — Երկրորդ աշխարհամարտի ավարտը

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ . . . . . 3

ԲԱԺԻՆ ԱՌԱՋԻՆ
**ԱՇԽԱՐՀԸ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱԿՈՒԼՈՒՄ**

1. ՆՈՐ ԱՇԽԱՐՀԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ . . . . . 8
2. ԱՋԳԵՐԻ ԼԻԳԱՆ . . . . . 14
3. ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1920–ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ . . . . . 19
4. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԵԾ ՃԳՆԱԺԱՄԸ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ . . . . . 24
5. ԱՄԲՈՂՋԱՏԻՐԱԿԱՆ ՎԱՐՉԱԿԱՐԳԵՐԸ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ . . . . . 29
6. ԽՍՀՄ–Ը 1922–1939 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ . . . . . 35
7. ԱՐԵՎԵԼՔԻ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (ԹՈՒՐՔԻԱ, ԻՐԱՆ) ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄԸ . . . . . 41
8. ԱՐԵՎԵԼՔԻ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (ՃԱՊՈՆԻԱ, ՉԻՆԱՍՏԱՆ, ՀՆԴԿԱՍՏԱՆ) ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄԸ . . . . . 46
9. ՄՇԱԿՈՒՅԹԸ 1920–1930–ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ . . . . . 51
10. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1920–1930–ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ . . . . . 56
11. ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԸ. ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ԵՎ ՍԿԻԶԲԸ . . . . . 62
12. ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԸ. ԸՆԹԱՑՔԸ ԵՎ ԱՎԱՐՏԸ . . . . . 67

ԱՌԱՋԻՆ ԲԱԺՆԻ ԱՄՓՈՓՈՒՄ . . . . . 75

ԵԶՐԵՐԻ (ՏԵՐՄԻՆՆԵՐԻ) ԲԱՌԱՐԱՆ . . . . . I
ԱՄՓՈՓԻՉ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ . . . . . VI

Ալբերտ Անդրանիկի Ստեփանյան
Արամ Սրապիոնի Նազարյան
Ռուբեն Արամի Սաֆրաստյան

## ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ. ՆՈՐԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆ

*Դասագիրք հանրակրթական հիմնական դպրոցի 9-րդ դասարանի համար*

*Մաս 1*

Альберт Андраникович Степанян
Арам Срапионович Назарян
Рубен Арамович Сафрастян

## ВСЕМИРНАЯ ИСТОРИЯ. НОВЕЙШЕЕ ВРЕМЯ

*Учебник для 9-го класса общеобразовательной основной школы*

*Часть 1*

(на арм. яз., изд. «Зангак», Ереван, 2019)

ԴԱՍԱԳՐՔՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՆԿԱՐՆԵՐԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐՆ ՈՒ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Շապիկի առաջին էջին՝ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի նիստերի դահլիճը: Երկիր մոլորակը՝ համայն մարդկության բնօրրանը, տիեզերքից
Շապիկի չորրորդ էջին՝ Եվգենի Վուչետիչի «Վերակոփենք սրերը արորների» քանդակը Նյու Յորքում՝ ՄԱԿ-ի շենքի դիմաց

էջ 4(1)՝ novate.ru, էջ 4(2)՝ etoday.ru, էջ 4(3)՝ Sekicho–en.wikipedia, էջ 5(1)՝ Intel Free Press, էջ 5(2)՝ etoday.ru, էջ 5(3)՝ tutavia.ru, էջ 7՝ Work of the United States Government, էջ 8՝ Bain News Service, էջ 9(1)՝ Harris & Ewing, էջ 9(2)՝ Harry, էջ 11՝ Edward N. Jackson, էջ 14՝ Pach Brothers, էջ 15՝ de:Benutzer:Filzstift, էջ 16(1)՝ Henry Van der Weyde, էջ 16(2)՝ en.wikipedia, էջ 20(1)՝ Rmhermen, էջ 20(2)՝ Ford company, էջ 21(1)՝ commons.wikimedia.org, էջ 21(2)՝ Bainbridge, էջ 24՝ Elias Goldensky, էջ 25՝ Unknown, էջ 26՝ IMF, էջ 27՝ users.dickinson.edu, էջ 30՝ Giac83, էջ 31՝ watson.ch, էջ 32՝ en.wikipedia.org, էջ 33(1)՝ tumen.bezformata.ru, էջ 33(2)՝ tumen.bezformata.ru, էջ 36՝ online812.ru, էջ 37՝ oldru.com, էջ 38՝ russiasib.ru, էջ 39՝ Gerald Praschl, էջ 42՝ Cemal Işıksel, էջ 45՝ Antoin Sevruguin, էջ 46՝ Imperial Household Agency, էջ 47(1)՝ Unknown, presumably US Army personnel, էջ 47(2)՝ historicus.ru, էջ 49(1)՝ Unknown, էջ 49(2)՝ Yann, էջ 51՝ World Telegram staff photographer, էջ 52(1)՝ NASA, էջ 52(2)՝ Unknown, էջ 53՝ Lloyd Arnold, էջ 54(1)՝ Strauss–Peyton Studio, էջ 54(2)՝ Unknown, էջ 55՝ Pablo Picasso, էջ 56՝ historicus.ru, էջ 57՝ Harris & Ewing, էջ 58՝ Bundesarchiv (Unknown), էջ 59՝ Bundesarchiv (Unknown), էջ 60՝ anonymous, էջ 63՝ Unknown, էջ 64՝ Sonnke Hans, էջ 65՝ United Nations Information Office, էջ 67՝ skaramanga–1972.livejournal.com, էջ 69(1)՝ kameraden.ru, էջ 69(2)՝ Unknown, էջ 70՝ photochronograph.ru, էջ 71՝ US government photographer, էջ 72(1)՝ Irpen, էջ 72(2)՝ Army Signal Corps, էջ 73(1)՝ US government DOD photograph, էջ 73(2)՝ George R. (Bob) Caron, էջ 73(3)՝ Shigeo Hayashi

Հրատարակչության տնօրեն՝ Էմին Մկրտչյան
Տեխնիկական խմբագիր՝ Նվարդ Փարսադանյան
Ձևավորումը և շապիկը՝ Գրիգորի Հարությունյանի
Սրբագրիչ՝ Լուսինե Դավթյան

Տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 70x100/16: Թուղթը՝ օֆսեթ
Ծավալը՝ 5,5 տպ. մամուլ: Տառատեսակը՝ «GHEA AspetScool»
Պայմանագիր՝ 03/Հ–19: Տպաքանակը՝ 26 175

«ԶԱՆԳԱԿ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՀՀ, 0051, Երևան, Կոմիտասի պող. 49/2, հեռ.՝ (+37410) 23 25 28
Էլ. փոստ՝ info@zangak.am, էլ. կայքեր՝ www.zangak.am, www.book.am
Ֆեյսբուքյան կայքէջ՝ www.facebook.com/zangak

9

ՀԱՄԱՀԱՄԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

# ՆՈՐԱԳՈՒՅՆ ՀՐԶԱՆ

Վաճառքի ենթակա չէ:

9 789939 687131

ԶԱՆԳԱԿ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

www.zangak.am
www.book.am